

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՎ

مارزقك

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

45-րդ ՏԱՐԻ ԹԻԻ 439 - Vol. XXXXV N° 439 - العدد ٤٣٩ - السنة الخامسة والاربعون

ՆՈՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ,  
ՆՈՐ ԱՊԱԳԱՅ...  
ՀԱՒԱՏՔՈՎ, ԿԱՄՔՈՎ ԵՒ ԱՆՂՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ



# ՄԱՐԶԻԿ

հսլս

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ

45-րդ Տարի, Թիւ 439, 112 Էջ

**Խմբագիր:** Վիգէն Աւագեան  
(vicken.avakian@homenetmen.org)

**Խմբագրական կազմ:** Սեւան Նազարեան,  
Սիւզի Օհանեան, Ծանթ ժամկոչեան, Բաֆֆի  
Սիլահեան, Հուրինա Պէրպէրեան, Վարդուի  
Ֆրոնզլեան եւ Սիւզան Սարգսեան:

**Վարչական կազմ:** Արօ Մոսիկեան, Սիլվա  
Սաղրբեան, Հրայր Սեթոյեան, Կարօ Այաձ-  
եան, Տիրան Ծահինեան, Հէրի Զարարեան, Յո-  
լինէ Քէշիշեան:

**Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում:**  
Գօգօ Հասանձեան,

**Կողքի պատրաստութիւն:**

Flow / Hrant Unicess,

**Տպագրութեան պատրաստութիւն:**

Photogravure Paklayan,

**Տպագրութիւն:** Համազգայինի «Վահէ Սէ-  
թեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

**Քաժանորդագրութիւն:** «Մարզիկ» կը հաս-  
նի աշխարհի 25 երկիրներու քաժանորդներու:  
Տարեկան քաժանորդագրութեան սակ ձողը-  
ւած է՝ Լիբանան 400,000 լ.ն. Միջին Արեւելեան  
եւ Եւրոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ  
եւ Աւստրալիա 75 \$, Հայաստան՝ 20,000 դրամ:

Լիբանանի մէջ թերթին հատավաճառի  
սակն է 100,000 լ.ն.:

**Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի  
մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 03-  
593 160): Թերթը կարելի է ստանալ նաեւ  
«Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն  
դուրս թերթը կը ստացուի «Libanpost»ի  
միջոցով եւ Ե-նամակի PDF օրինակով (տա-  
րեկան քաժանորդագրութեան սակ՝ 50 ամ.  
տոյար):

Հասցէ: «Սեւան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատո-  
ւած, Պուրճ Համուս, Պէյրութ, Լիբանան


9611248043, 9611260117

marzig@Homenetmen.org

Homenetmen - Հ.Մ.Ը.Մ.

www.Homenetmen.org

Նրապարակութեան յանձնուած՝  
ՅՈՒՆԻՒՍԿՈՒՄ 2026-ին:



## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«Հ.Մ.Ը.Մ.ը կեանքս է...»

2

## ՊԱՏԳԱՄՆԵՐ

Վստահեցէ՛ք ձեր գաւակները այս կեդրոնին

4

Հ.Մ.Ը.Մ. յաղթել՝ կը սորվեցնէ հայուն

6

Հ.Մ.Ը.Մ.ի երթը շարունակող

«Կամաւոր բանակ»ի զինուորներ

30

## ԱԿՆԱՐԿՆԵՐ

Նոր մտածելակերպ մը հայ համայնքները  
կերտելու համար՝ երիտասարդական կեդրոններ

9

Հարազատ ու ճշմարիտ խօսք՝

հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Աբրահամ

Աւրնեանի անմառ յիշատակին

12

Կ. Պոլսի «Հայ սկաւուտ» հանդէսը (1919-1922)

14

Սկաւուտութիւնը միայն շարժում չէ,

այլ՝ կեանքի ուժ է

38



## ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿՄՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Գ. լիազումարի նիստերը Փարիզի մէջ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 13-րդ բանակումի նախապատրաստութեան եռօրեայ հանդիպումներ Սկաուտական «Արարատեան» կարգի տեսական հանգրուանը արարած Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու ատենապետներու առցանց 5-րդ հանդիպումը Հ.Մ.Ը.Մ.ի ամերիկացիներու եւ Աւստրալիոյ ցամաքամասային Ա. մարզախաղերու պատասխանատուներու առցանց հանդիպում Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ. եւ Մեկուսի Վարչութիւններու քարոզչական պատասխանատուներու առցանց Բ. հանդիպումը Հ.Մ.Ը.Մ.ի Միջին Արեւելքի ցամաքամասային առաջին բանակումին բացումը Պասիֆիկայի մէջ

16	Հ.Մ.Ը.Մ.ի Ամերիկացիներու եւ Աւստրալիոյ ցամաքամասային առաջին բանակումին բացումը Թէքույայի մէջ	32
17	<b>ԻՐԱԳՈՐԾՈՒՄ</b>	
17	Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի մարզամշակութային համալիրին փառաշուք բացումը Իսի լէ Մուլինոյի մէջ	40
18	Նորակառոյց մարզահամալիրը Շնորհակալութեան բաց նամակ Հաղորդագրութիւն	46 47 47
18	Մենք հաւատացինք, յուսացինք, սիրեցինք գործը եւ մկրտուեցանք այս գործին մէջ ու այս գործով	48
19	<b>ՄԱՍՆԱՃԻՒՂԷ ՄԱՍՆԱՃԻՒՂ</b>	54
20	<b>ՄԵՐ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ</b>	108

# «Հ.Մ.Ը.Մ.Ը ԿԵԱՆՔՍ Է...»

**Կ**եանքը ծնունդէն մինչեւ մահ երկարող ժամանակը չէ միայն: Կեանքը մնայուն կատարելագործում է, պայքար է, շրջապատի հետ յարաբերութիւն է եւ շարունակականութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ն ալ կեանք է, որովհետեւ ան կը սկսի մարդու մը փոքր տարիքէն եւ կը շարունակուի մինչեւ վերջալոյս: Մանուկը առաջին անգամ սկաուտական հաւաքավայր կ'ուղղուի եւ կամ մարզադաշտ կ'իջնէ առանց գիտնալու, որ այդ պահուն ան կեանքի դպրոց մը կը մտնէ: Ժամանակի ընթացքին ան կը սորվի ըլլալ ճշդապահ ու կարգապահ, պարկեշտ ու վեհանձն, նախաձեռնող, պատասխանատուութիւն ստանձնող, պարտութիւններէ չտկարացող եւ յաղթանակներէ չգիւնովցող մարդ: Արժանիքներ, որոնք կեանքի հիմներն են եւ սկաուտական կամ մարզական կանոններ չեն միայն:

Կեանքը պայքար է եւ Հ.Մ.Ը.Մ. կը սորվեցնէ պայքարիլ ո՛չ միայն մրցակիցներու դէմ, այլեւ՝ սեփական եսի դէմ: Մարզադաշտին վրայ կ'արժեւորուի ջանքը եւ ո՛չ միայն արդիւնքը: Սկաուտական կեանքին մէջ կ'արժեւորուի ծառայութիւնը եւ ո՛չ միայն անհատական յաջողութիւնը: Այս մօտեցումը կեանքի բոլոր մարզերուն մէջ կը ստեղծէ մարդիկ, որոնք պատրաստ են տեսարար աշխատելու, չյուսահատելու եւ սկսուած գործ մը ամէն գնով շարունակելու: Մարդիկ, որոնք քաջութիւնը ունին կեանքի փոթորիկներուն դէմ ի հարկին առանձին, ուղիղ կանգնելու: Ունին պայքարելու կամք եւ համբերութիւն:

Կեանքը նաեւ յարաբերութիւն է: Հ.Մ.Ը.Մ. յարաբերութիւններու լաւ միջավայր է: Մարզական խումբի մը խմբակիցը միայն խաղընկեր չէ: Սկաուտ քոյր մը կամ եղբայր մը միայն կիրակնօրեայ հաւաքի ընկեր չէ: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կը ստեղծուին ընկերային ամուր կապեր: Կը հաստատուին մտերմութիւններ, որոնք կ'երկարին տարիներու վրայ եւ կը դիմանան ժամանակի փորձութիւններուն, որովհետեւ ծնունդ կ'առնեն միասին ապրուած կեանքէ, աշխատանքէ եւ զոհողութենէ:



Կեանքը կը նշէ շարունակականութիւն: Հ.Մ.Ը.Մ. եւս կը մարմնաւորէ շարունակականութեան գաղափարը: Երէկուան սկաուտը այսօր կը դառնայ Առաջնորդ, մարզիկը՝ մարզիչ, իսկ անդամը՝ վարչական: Ծարունակական այս ընթացքը ցոյց կու տայ, որ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կեանքը քարացած չի մնար: Հ.Մ.Ը.Մ.ականը կը մեծնայ, կը զարգանայ եւ իր փորձառութիւնը կը փոխանցէ յաջորդներուն՝ ապահովելով միութեան յարատեւութիւնը, մնայուն շարժումը:

Ի վերջոյ, կեանքը շարժում է, շարժումը կեանք է: Ծունչ է՝ սերունդէ սերունդ փոխանցուող: Գաստիարակութիւն է՝ մարմնի, միտքի եւ հոգիի: Ուխտ է՝ ծառայասիրութեան, մարդասիրութեան եւ հայրենասիրութեան: Որեւէ շարժում, սակայն, պարտաւոր է ընդառաջել իր ժամանակի պահանջներուն:

Ժամանակները կը փոխուին, մօտեցումները եւս կը փոխուին եւ անհրաժեշտ կը դարձնեն գործունէութեան նոր ձեւերու որգեգրում, արդիականացում, պահելով հանդերձ շարժումի մը հիմնական սկզբունքները: Հ.Մ.Ը.Մ. լաւագոյն փաստը կու տայ այս իրականութեան, իր 107-ամեայ պատմութեամբ եւ մնայուն կենսունակութեամբ:

Ուրեմն, պատահականութիւն չէ «Հ.Մ.Ը.Մ.ը կեանքս է» արտայայտութիւնը, որ կարգախօսի ձեւով կը տեսնուի միութեան ցամաքամասային բանակումներէն մէկուն ձեռային աշխատանքին վրայ, իբրեւ վկայութիւն Հ.Մ.Ը.Մ.ի արժեքին ու կարեւորութեան, եւ իբրեւ անկեղծ խոստովանութիւն մէկու մը, որ կ'ապրի ու կը մեծնայ այս միութեան մէջ: Իր մեծ ընտանիքը կը գտնէ հոն: Իր ներկան ու ապագան կը կապէ անոր, հաւատալով որ եթէ կեանքը մարդ կը կերտէ, Հ.Մ.Ը.Մ.ը՝ լաւ մարդ:

«Հ.Մ.Ը.Մ.ը կեանքս է» արտայայտութիւնը նաեւ վկայութիւն մըն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը շատերուն համար յիշողութիւն է՝ առաջին տարագը, առաջին երդումը, առաջին պարտութիւնն ու յաղթանակը: Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ապրուած տարիները կուտակուին եւ յիշողութիւններու



եւ փորձառութիւններու, որոնք կը ձեւաւորեն մարդու մը մտածումները, կեցուածքներն ու համոզումները:

Տարիները կրնան թաւալիլ, կեանքի բեռը կրնայ ծանրանալ, սակայն Հ.Մ.Բ.Մ.ը չի դադարիր ներկայ ըլլալ մարդու մը հոգիին մէջ, ո՛չ իբրեւ վայր, այլ՝ իբրեւ զգացում: Մարդ կրնայ հեռանալ Հ.Մ.Բ.Մ.ի դաշտերէն, ակումբներէն, սակայն Հ.Մ.Բ.Մ.ի մէջ ունեցած կեանքը չի կրնար հեռանալ իրմէ:

Հետեւաբար, երբ մէկը կ'ըսէ թէ «Հ.Մ.Բ.Մ.ը կեանքս է», ան չի յիշեր միայն անցեալը, այլ՝ ներկան ու ապա-

գան: Ան կը խօսի իր արմատներուն մասին: Հ.Մ.Բ.Մ.ական սիրտի զարկին մասին: Կ'արտայայտուի իր ինքնութեան եւ պատկանելիութեան մասին ու կը խոստովանի, որ այսօր ի՛նչ որ է, ո՛ր որ է, ան կը պարտի նաեւ Հ.Մ.Բ.Մ.ին, միութեան ակումբներուն, դաշտերուն եւ հաւաքավայրերուն մէջ իր անցուցած ժամանակին:

Եւ որովհետեւ Հ.Մ.Բ.Մ.ը միայն վայր չէ: Ժամանակ չէ: Վիճակ է: Հ.Մ.Բ.Մ.ը կեանք է:

Սիրտերու մէջ դրոշմուած կեանք:

Անցեալէն եկող ու ապագայի՛ն զացող կեանք:

**Հ.Մ.Բ.Մ. 41 ՇՐՋԱՆԻ ՄԷՋ, 103 ՍԱՄՆԱԾԻՒՂԵՐ ԵՒ 11 ՄԻԱՌՈՐՆԵՐ**

**Հայաստան:** «Գ. Յակոբեան» (Երեւան-Կեղդոն), «Շ. Քրիսեան» (Երեւան-Մալաթիա), «Տ. Խոյեան» (Երեւան- Զէյթուն), «Վ. Չերազ» (Կիւմրի), Արովեան, «Ա. Մարտիրոսեան» (Հրազդան), «Վարդան Տ.» (Երեւան-Էրեբունի), «Վ. Բախշեան» (Արմաւիր), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), «Յ. Առուստամեան» (Չարենցաւան), Մարտունի (Զօրաքար), «Վ. Չերազ» (Երեւան-Կոմիտաս), «Ա. Չոհրապեան» (Վետի), Մարտունի (Ծովինար), «Յ. Հինդլեան» (Երեւան-Մասիս): **Արցախ:** Ստեփանակերտ: **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս: **Ռուսիա:** Մոսկուա: **Լիբանան:** Պէյրոս, Չահլէ, Թրիփոլի, Պ. Համուտ, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժըտէյտէ, Պաուշրիէ, Ռատուա: **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսաս, Տէրիք (միաւոր). Հասիէ (միաւոր): **Յորդանան:** Ամման: **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա: **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա: **Իրաք:** Պաղտատ: **Քուէյթ:** Քուէյթ: **Կիպրոս:** Նիկոսիա: **Յունաստան:** Աթէնք, Գոքինիա, Սելանիկ: **Անգլիա:** Լոնտոն: **Աւստրիա:** Վիեննա: **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. Նիս, **Հոլանտա:** Ալմելօ, Ալքմար (միաւոր), Առնհեմ: **Գերմանիա:** Մյունիխ: **Շուէտ:** Վեսթերոս, Սոտերթելիա, Սթոքհոլմ, Օրէպրո: **Պուլկարիա:** Սոֆիա, Ռուսէ (միաւոր), Փոլվտիվ, Վառնա, Շումէն (միաւոր): **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիճ, Մէնք Գաթրինգ, Լաւալ, Վանքուվըր (միաւոր), Օթաւա (միաւոր), **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, «Մասուն» (Ֆրեզնօ), Մոնթբէյլլօ, «Ազատամարտ» (Փասատինա), «Արարատ» (Կլենտէյ), Օրէնճ Քաունթի, «Մասիս» (Ման Ֆեռնանտօ), «Սեւան» (Ման Տիէկօ), «Արազ» (Ինլընտ Էմփայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանք» (Քրեսէնթա Հովիտ), «Սիփան» (Պըրպէնք), «Արցախ» (Լաս Վելլաս), «Կարս» (Ուոլնաթ Քրիք) «Ջաւախք» (Նորթ Հովիվոտ), «Լոռի» (Մաքրամենթօ-միաւոր), «Կիլիկիա» (Մանթա Գլարիթա-միաւոր), **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Ճրքի, Շիքակօ, Ֆիլատելֆիա, Տիքոնթօ, Փրովիտընս, Ֆլորիտա, Ալպընի, Շարլոթ (միաւոր), Սերիմաք Հովիտ (միաւոր): **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Ալբէս, Գորտոպա, Մոնթեվիտէօ: **Աւստրալիա:** «Անդրանիկ» (Սիտնի), «Արաքս» (Մելբուռն), «Նաւասարդ» (Սիտնի), «Կամք» (Սիտնի), «Արարատ» (Սիտնի):



# ՎԱՏԱՀԵՑԷՔ ՁԵՐ ՉԱՒԱԿՆԵՐԸ ԱՅՍ ԿԵԴՐՈՆԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԽԱՉԵՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»Ի ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՕ)

Այս պահուս նոր պատմութիւն կը գրուի մեր աչքերուն դիմաց:

Այս պահուս նոր ապագայ կը բացուի մեր զաւակներուն եւ թոռներուն դիմաց:

Երազը կը դառնայ իրականութիւն: Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս» կ'օժտուի արդիական մարզական համալիրով մը, որ սկիզբ կը դնէ Հ.Մ.Ը.Մ.ի ո՛չ միայն Փարիզի, այլեւ՝ ամբողջ Ֆրանսայի եւ բովանդակ Եւրոպայի գործունէութեան նոր հանգրուանին:

Սովորական կեդրոն մը պիտի չըլլայ այս համալիրը: Հոս միայն մարզախաղեր եւ սկաուտական աշխատանքներ պիտի չկատարուին: Հոս պիտի կրթուին սերունդներ: Պիտի մշակուին հոգիներ ու միտքեր: Պիտի կազմաւորուին կարգիւր եւ ինքնութիւն: Հոս պիտի պատրաստուին վաղուան հայեր:

Կեդրոնը պիտի ըլլայ համախմբման վայր համայնքի բոլոր զաւակներուն համար: Հ.Մ.Ը.Մ.ի այս կեդրոնին ճամբով, կը հաւատանք, որ նոր աշխուժութիւն պիտի ապրի

Փարիզի եւ շրջակայքի հայութիւնը:

Այս առիթով, աշխարհի 26 երկիրներու մէջ գործող Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական մեծ ընտանիքին անունով շնորհակալութեան եւ երախտագիտութեան խօսք ունինք բոլոր անոնց, որոնք երազեցին, ծրագրեցին, հաւատացին եւ իրականացուցին այս կեդրոնը:

Շնորհակալութիւն բոլոր անոնց, հայ թէ օտար, որոնք գործնապէս աջակցեցան այս մեծ ծրագրին իրականացման:

Յատուկ շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ բարեկամ՝ Իսիլ Մուլինոյի քաղաքապետ պարոն Սանթինիին եւ փոխ քաղաքապետ Արթուր Խանճեանին, որոնք անցնող տարիներուն ճիգ չհնայեցին այս կեդրոնի ծրագրին յաջողութեան համար:

Վերջապէս շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օգտակար դարձան նման կեդրոնի մը շինութեան:

Յարգելիներ,

Կեդրոն շինելը բան մըն է, կեդրոն պահելը՝ այլ բան:

Կեդրոնը կեդրոն կը դառնայ, երբ կեանքով կ'եռայ,





երբ մեր զաւակներով եւ թոռներով կը խճողուի:

Վստահեցէ՛ք ձեր զաւակները այս կեդրոնին: Մղեցէ՛ք դըպրոցականները հոս յաճախելու: Քաջալերեցէ՛ք երիտասարդները կեդրոն յաճախելու, որպէսզի կեդրոնը չմնայ պատ ու դաշտ, սենեակ եւ բակ: Այլ՝ ծառայէ իր իսկական նպատակին՝ լաւ մարդու, տիպար քաղաքացիի եւ յանձնառու հայու պատրաստութեան:

Այս կեդրոնին մէջ ոգին կայ 48 տարի առաջ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը հիմնած Հ.Մ.Ը.Մ.ական մեր վաստակաշատ եղբայրներուն:

Այս կեդրոնին մէջ քրտինքը եւ յոգնութիւնը կայ անցնող 48 տարիներուն Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի վարչութիւններուն եւ մասնաճիւղի հարիւրաւոր անդամներուն, որոնք կաթիլ-կաթիլ հաւաքեցին անոր շինութեան անհրաժեշտ գումարները:

Վերջապէս, այս կեդրոնին մէջ սերունդներու երազը կայ սեփական ու արդիական մարզագաշտ մը ունենալու, սկսողական յարմար հաւաքավայր մը ունենալու, եւ համայնքը համախմբող կեդրոն մը ունենալու:

Ըլլանք արժանի տէրերը այս կեդրոնին եւ ջանանք ամէն գնով պահել զայն, որովհետեւ այս կեդրոնը կ'երաշխաւորէ մեր նոր սերունդին եւ մեր ամբողջ համայնքին ապագան:

Զօրաւոր Հ.Մ.Ը.Մ. կը նշանակէ զօրաւոր հայութիւն:

Այսօր, բոլոր ժամանակներէ աւելի մենք պէտք ունինք համախմբուելու եւ զօրանալու ազգովին:

Այս կեդրոնը լաւապէս պիտի ծառայէ այդ նպատակին,

նախ համախմբելով ֆրանսահայութիւնը՝ իր բոլոր շերտերով, ապա՝ Եւրոպայի հայութիւնը, որուն Հ.Մ.Ը.Մ.ական ներկայացուցիչներէն շատերը, այսօր, ներկայ են այս հանդիսութեան եւ նախանձով կը դիտեն կատարուած պատմական ու աննախընթաց այս իրադրո՞ծումը:

Անկարելի բան չկայ, սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Նման կեդրոններ իրականութիւն կը դառնան հաւատքով, կամքով եւ անդուլ աշխատանքով:

Նման կեդրոններ կը գոյատեւեն ու կը պահուին կրկնապատիկ հաւատքով, կամքով եւ աշխատանքով:

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի այս կեդրոնը թող օրինակ ըլլայ բոլորին, հաւատալու Հ.Մ.Ը.Մ.ականի կամքին, միութենական կազմակերպ ու հետեւողական աշխատանքի արդիւնքին եւ զօրաւոր հայութիւն ունենալու մեր ազգային տեսլականին:

Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը այսօր կը գտնէ իր գործնական լաւագոյն արտայայտութիւնը: Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս» այս սքանչելի կեդրոնով սովորական մասնաճիւղէ մը կը բարձրանայ հօգօր ու մեծաթիւ մասնաճիւղ մը դառնալու հանգրուանին, իր հետ բարձրացնելով նաեւ իր շըրջապատը՝ իրեն վստահող եւ իրեն գուրգուրացող հայութիւնը:

Ապրի՛ Հ.Մ.Ը.Մ.ը:

Ապրի՛ Հ.Մ.Ը.Մ.ով ապրող մեր ժողովուրդը:

Եւ բարի երթ կեդրոնին աշխատանքներուն:



# Հ.Մ.Ը.Մ. ՅԱՂԹԵՂ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԷ ՀԱՅՈՒՆ

(Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂԲ. ՎԻԳԷՆ ԱԻԱԳԵԱՆԻ ՊԱՏԳԱՄԸ՝ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 90-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, 16 ՆՈՅԵՄԲԵՐ 2025-ԻՆ)

Կրկնակի տօն է այսօր:

Տօն է, որովհետեւ 16 Նոյեմբերը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձն է: 107 տարի առաջ, այսօր, Պոլսոյ մէջ կը հիմնուէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, որուն հնագոյն եւ մեծագոյն շրջաններէն մէկը կը հանդիսանայ Լիբանանի շրջանը:

Տօն է նաեւ, որովհետեւ գեղեցիկ զուգադիպութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տարեդարձին օրը, Պուրճ Համուտի մասնաճիւղը կը նշէ իր հիմնադրութեան 90-ամեակը:

107-ամեակ եւ 90-ամեակ: Երկու տարեդարձ, երկու առիթ: Մայր ու զաւակ միասնաբար կը նշեն իրենց տօնը, մէկը միևսով հպարտ, մէկը միևսով ուրախ:

Թուանշանները այս պարագային ցուցանիչ են փորձառութեան եւ ոչ՝ ծերութեան, հասունութեան եւ ոչ՝ տկարութեան, որովհետեւ հոն ուր մնայուն շարժում կայ, հոն ուր մնայուն նորութիւն կայ, հոն ծերութիւն չկայ: Հ.Մ.Ը.Մ. տեւական շարժումի եւ նորութեան միութիւն է, նպատակ եւ առաքելութիւն հետապնդող միութիւն է, հետեւաբար ան կը մնայ միշտ երիտասարդ:

Այս հաստատումին ապացոյցը 90-ամեակի գեղատիպ գրքերովն է, ուր ամենայն հարագատութեամբ կ'երեւին մասնա-

ճիւղին յաջորդական վարչութիւններուն եւ յանձնախումբերուն կատարած աշխատանքները: Սերունդներու ճիգն ու ներդրումը՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին ծաղկումին, Պուրճ Համուտի հայրութեան վերելքին եւ լիբանանահայ մարմնակրթութեան զարգացումին:

Կը բաւէ նշել, որ համեստ եւ յաճախ աննպաստ պայմաններու մէջ գործած այս մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.ի գերագոյն ղեկավարութեան՝ Կեդրոնական Վարչութեան տուած է 7 անդամ: Միութեան համահայկական կառուցի 51 տարիներէն 24-ին ատենապետութիւնը վարած են մասնաճիւղին վաստակաւոր անդամները: 6 անդամ դարձած է «Արժանեաց» շքանշանակիր, իսկ 2 անդամ՝ Հայ Դատի բազմինին նուիրեալ: Տակաւին, առանց հաշուելու Լիբանանի իրերայաջորդ Շրջանային Վարչութիւններուն մաս կազմած իր բազմատասնեակ անդամները:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաուտական նուագախումբը սկսած է Պուրճ Համուտի մասնաճիւղով: ԼԵՎԱՄ-ի նախաքայլը հանդիսացող միջ-վարժարանային առաջին խաղերը եւս, 1963-ին, սկսած են Պուրճ Համուտի մասնաճիւղով:

22 այլ մասնաճիւղերու հետ, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ մասնակցած է միութեան համահայկական կառուցի հիմնադիր՝ Պատգաւորական առաջին Ընդհանուր Ժողովին:

Այնուհետեւ, տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ դարձած է աշխարհակալ մասնաճիւղ, իր անդամները տարածելով հինգ ցամաքամասերու վրայ: Այսօր, հոն ուր Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղ մը կայ, Պուրճ Համուտի նախկին անդամ վարչական մը, սկաուտ կամ մարզական պատասխանատու մը կայ՝ Լուս Անճելլաէն մինչեւ Սթոքհոլմ, Սիտնիէն մինչեւ Փարիզ: Պուրճ Համուտի մասնաճիւղին մէջ թրծուած քոյրեր եւ եղբայրներ, կազմակերպական իրենց ձիրքերով ու շնորհներով, այժմ կը գտնուին Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու Մեկուսի թէ Շրջանային Վարչութիւններու ամէնէն պատասխանատու դիրքերուն վրայ:

Անցնող 90 տարիներուն, ձմրան ցուրտին թէ ամրան տաքին, Պուրճ Համուտի մէջ չկայ ազգային տօնակատարութիւն մը, հաւաք մը, որմէ բացակայած ըլլայ մասնաճիւղը: Ապրիլ 24-ի ոգեկոչումներ՝ ներկայ է ակումբներու պատասխանատու մարմիններու կողքին: Մայիս 28-ի տօնակատարութիւններ՝ ներկայ է վարժարաններու աշակերտութեան կողքին: Եկեղեցիներու անուանակոչութիւններ՝ այս անգամ ներկայ է թաղական կազմերու կողքին: Ակումբ-դպրոց-եկեղեցի երրորդութիւնը կարծէք ամբողջական պիտի չըլլար առանց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին:

Պուրճ Համուտի ժողովրդային թաղերէն եւ յաճախ անոր ամէնէն խոնարհ խաւերէն եկող հաւատաւոր տղաք ու աղջիկներ անցնող 90 տարիներուն կերտած են պատուաբեր պատմութիւն: Խլած են ախոյեանական տիտղոսներ, արձանագրած են սկաուտական եւ վարչական բազմաթիւ իրագործումներ, փաստը տալով փոքրիկ Հայաստանի բնակիչներու մեծ կամքին ու հաւատքին:

Այսքան բան ու տակաւին շատ աւելին տուած է Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտը զինք ծնող միութեան եւ ժողովուրդին, անսակարկ ու անշահախնդրի կերպով, նուիրեալ եւ կամաւոր աշխատանքով:

Իսկ կ'արժէ հարց տալ, որ փոխադարձութեան կարգով, արդեօք չըջապատը ի՞նչ տուած է այս մասնաճիւղին, իբրեւ ուշադրութիւն եւ գուրգուրանք, իբրեւ մարդկային եւ նւթական միջոցներ:

Պատասխանը անպայման կրնայ գոհացուցիչ չըլլալ, որովհետեւ 90-ամեայ այս մասնաճիւղը մարզական յաջողութիւններ արձանագրած է՝ առանց սեփական դաշտ ունենալու:

Բարձրաստիճան սկաուտներ պատրաստած է՝ առանց արժանավայել հաւաքավայր ունենալու:

Եւ կազմակերպական-ժողովական բեղուն կեանք ունեցած է՝ առանց յարմարաւէտ ակումբ ունենալու:

Խաղաղութեան թէ պատերազմի տարիներուն, մասնաճիւղը գործած է հիմնական հարստութիւն ունենալով Հ.Մ.Ը.Մ.ականի անկոտորում ոգին, բարոյական արժէքներու եւ սկզբունքներու այն դրամագլուխը, որ այս միութիւնը կը վերածէ «Նահատակ ցեղի անմահներ»ու, իսկ անոր անդամները՝ հայրութեան «կամաւոր բանակ»ի արժանաւոր ներկայացուցիչներու:

Յարգելիներ,

Կարելի է երկար խօսիլ 90-ամեայ Պուրճ Համուտի մասնաճիւղի անցեալին ու վաստակին մասին: Բայց այսօր միայն անցեալի մասին խօսելու օրը չէ, անցեալի իրագործումներով պարծենալու ժամանակը չէ:

Շնորհաւորութեան եւ երախտագիտութեան խօսքերէն ետք, այսօր օրն է հարց տալու, թէ ո՞ւր մենք այսօր, իբրեւ մասնաճիւղ եւ միութիւն: Ի՞նչ կ'ընենք եւ ի՞նչպէս կ'ընենք, որպէսզի պատուաբեր անցեալին վրայ բան մըն ալ մենք աւելցնենք, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտը զօրանայ, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտով Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանը ամրանայ եւ Լիբանանի շրջանով միութեան համահայկական կառույցը ամէն օր քիչ մը աւելի մեծնայ, զարգանայ եւ յառաջանայ:

Գաղտնիք մը չէ, որ այսօր Լիբանանի իր քոյր մասնաճիւղերուն նման, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ եւս կը դիմադրաւէ լուրջ դժուարութիւններ. - հայրութեան թիւի նստրացում, տրեսեական սուր տագնապ, քաղաքական եւ ապահովական ցրնցումներ, անորոշ ապագայի մտահոգութիւններ եւ ներազգային յուսախաբութիւններ:

Եւ տակաւին, ի՞նչպէս չյիշել մարզական կեանքի դիմադրաւած այն մեծ յորձանքը, որ կը կոչուի արհեստավարժութիւն: Նորութիւն պիտի չըսենք այս պարագային. պարզապէս պիտի կրկնենք 10 տարի առաջ, 22 Նոյեմբեր 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան օրուան ատենապետ, մեզմէ յաւէտ բաժնուած եղբայր Գառնիկ Մկրտիչեանին խօսքը՝ արտասանուած մասնաճիւղի 80-ամեակի տօնակատարութեան:

Եղբ. Գառնիկ կ'ըսէր. «Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը ծանօթ է բոլորին: Ան չի կրնար գոհ ըլլալ արհեստավարժութեան այսօրուան հրապոյրներուն, որովհետեւ ան իր ծնունդով կոչուած է ժողովուրդի ծառայութեան, անոր զաւակներու դաստիարակութեան, իսկ այս բոլորը շահամոլական մօտեցումով, առուծախով չեն





կատարուիր, այլ՝ բարոյական-ազգային արժէքներու պահպանումով եւ միութեան սկզբունքներուն կառչած մնալով: Ահա թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ի վերջին Պատգամաւորական ժողովները եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան յաջորդական լիազուժար նիստերը հիմնովին մերժեցին արհեստավարժութեան որդեգրումը միութեան կողմէ եւ կոչ ուղղեցին՝ ամէն գնով հեռու մնալու անկէ»:

Այսքան պարզ ու յստա՛կ:

Յարգելիներ,

Դժուար է այսօր Հ.Մ.Ը.Մ.ի գործը: Բայց ե՞րբ դուրսն ալ գլորուէ մէջ գործած է ան: Ներքին ու արտաքին պայմանները միշտ ալ նպաստաւոր եղած չեն միութենական աշխատանքին համար, բայց նաեւ միշտ ալ գտնուած են Հ.Մ.Ը.Մ.ական հաւատքի ու գործի «խենթ»եր, որոնք երթը շարունակած են ի գին մեծ գոհողութիւններու: Կը բաւէ աչքի առջեւ ունենալ այսօրու պայմաններուն մէջ կատարուող հսկայական գործը եւ անոր արդիւնքը, անմիջապէս հաստատելու համար, որ՝

Երբ արդի արհեստագիտութիւնը նոր սերունդը կը հեռացնէ ծնողական, ընկերային եւ ազգային իր շրջանակէն:

Երբ համաշխարհայինացած աշխարհը կը քանդէ ազգային ամէն արժէք, կառոյց եւ ըմբռնում:

Երբ մարդկային ազատութիւններու եւ իրաւունքներու անունով մէջտեղ կը նետուին ընկերային տեսակ-տեսակ այլադակութիւններ:

Երբ նիւթապաշտ ու մեքենապաշտ աշխարհի կեղծ արժէքները նորահաս սերունդը կը պարպեն ոգիէ, երազէ եւ ձգտումէ:

Ու երբ մոլութիւնները, յոռի բարքերը եւ այլասերումը կը թակեն մեր անմիջական մօտիկներուն դռները:

Հ.Մ.Ը.Մ., իր միջնորդութեամբ իբրեւ շաղախ ունենալով, մասնիկները իրարու կը միացնէ, նորահաս սերունդի ներկայացուցիչները քով-քովի կը բերէ: Բոլորին սիրտերը իրարու կը կապէ, կամքերը իրարու կը միացնէ: Անհատականութիւնները հաւաքականութեան կը վերածէ:

Հ.Մ.Ը.Մ. անվերջ շարժում կը ստեղծէ: Կեանք եւ աշխու-

ժութիւն սիրող, լաւատեսութիւն եւ յոյս ներշնչող: Շարժում, որ օրուան 24 ժամերուն հանգիստ չի ճանչնար: Երբ տեղ մը խարուկահանդէս մը կամ խրախճանք մը իր աւարտին կը հասնի, այլ տեղ բանակումի մը առաւօտեան դրօշակի արարողութիւնը նոր կը սկսի, ախոյեանական մրցաշարքի մը սուլիչը նոր կը հնչէ:

Հ.Մ.Ը.Մ. հայացնող շարժում կը յաւաքացնէ: Ով որ Հ.Մ.Ը.Մ.էն կ'անցնի հա՛յ կը մնայ: Հ.Մ.Ը.Մ. հայ մարդուն կու տայ ինչ որ ամէնէն աւելի կը պակսի անոր՝ հպարտութեան գագաթումը եւ յաղթանակի բերկրանքը: Հ.Մ.Ը.Մ. յաղթե՛լ կը սորվեցնէ հայուն:

Ի զուր չէ, որ հայ ժողովուրդի արժանաւոր մտաւորականներէն մէկը առիթով մը խոստովանած է, թէ այբուբենի դիրքէն ամէնէն աւելի սիրած է Հօ տառը, որովհետեւ անով կը սկսին Հայը, Հայկը, Հայաստանը, Հպարտութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Իսկ գաղտնի՞քը այս բոլորին:

Գաղտնիքը միութեան մէջ եւ միութեան շուրջ եղող տեւական խանդավառութիւնն է, որ հայ մարդը կը կերպարանափոխէ, անոր գոյութեան եւ գոյատեւման ուժ կու տայ, հայ ըլլալու եւ հայ մնալու կորով կը ներշնչէ:

Մեր ժողովուրդը կը սիրէ խանդավառութիւնը: Կը սիրէ խանդավառութեան աղբիւր Հ.Մ.Ը.Մ.ը, կը վստահի եւ կը գուրգուրայ անոր, որովհետեւ լաւ գիտէ, որ Հ.Մ.Ը.Մ. սովորական սկառտական շարժում մը չէ, մարզական սկզբում մը չէ: Հ.Մ.Ը.Մ. մարմինի, հոգիի եւ միտքի կրթութեան իւրայատուկ շարժում մըն է, որուն ալիքները հայ պատանին ու երիտասարդը կը պաշտպանեն շրջապատի տեսակաւոր վտանգներէն:

Գաղտնիքը միութեան նպատակին գիտակցութիւնն է եւ այդ նպատակին ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ականներու մնայուն պատրաստակամութիւնն է: Նպատակ, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ հայութեան հզօրացումը գինք տկարացնել, ընկճել եւ պարտութեան մատնել փորձող ուժերուն դէմ.- կազմակերպական հզօրացում, անտեսական հզօրացում, հոգիներու եւ միտքերու հզօրացում՝ համակերպելու համար պարտութեան եւ նահանջի բոլոր տեսակ երեւոյթներուն:

Իսկ կա՞յ աւելի մեծ գաղտնիք՝ քան Հ.Մ.Ը.Մ.ի եւ հայութեան նպատակներուն միջեւ գոյութիւն ունեցող այս զուգորդութիւնը: Այն, որ երկուքն ալ բնական ձգտումը ունին յաղթական ազգ դառնալու, հզօր եւ անպարտելի հայրենիք ունենալու:

Ինչ որ մեր օրերու հիմնական պահանջն է:

90-ամեակի եւ 107-ամեակի գլխաւոր հրամայականն է:

«Հաստատ քայլերով դէպի 100-ամեակ» ընթացող Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտի կարեւորագոյն ուղեւորին է եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին այսօրուան եւ վաղուան գոյութեան գերագոյն իմաստն է:



# ՆՈՐ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊ ՄԸ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԿԵՐՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ

Շահէ ենթգոմշեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը՝ Հ.Մ.Ը.Մ-ը սերունդներու համար եղած է միաւորող ուժ՝ դաստիարակելով հայրենասէր, ծառայասէր եւ կարգապահ երիտասարդներ, եւ աշխոյժ պահելով հայկական ոգին եւ մշակութային կեանքը Սփիւռքի զանազան գաղութներուն մէջ: Սակայն մեր համայնքները, իրենց կառուցուածքով եւ բնոյթով նոր փուլ մը կը թեւակոխեն: Փոխուած է նորահաս սերունդներուն հայեցի ինքնութեան ըմբռնումը, անոնց կապը համայնքին հետ եւ անոնց սպասումները այն շրջանակներէն, որոնց կը պատկանին իրենք:

Այս փոփոխութիւնները կը պահանջեն արմատական վերազնահատում: Պէտք է մտածել, որ «Ի՞նչ պիտի ըլլայ Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը մեր ապագայ համայնքներուն մէջ»: Ոչ թէ միայն իբրեւ կազմակերպութիւն, այլ իբրեւ «մոտեք» մը, որ կրնայ ուղղութիւն տալ համայնքային գոյութեան նոր ձեւերու: Այս նայուածքով է, որ երիտասարդական կեդրոններու հայեցակարգը կը դառնայ ո՛չ միայն անհրաժեշտութիւն, այլեւ՝ ռազմավարական ընտրանք:

**ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԸ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ,  
ԲԱՅՑ ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿԱՍԱՆԵԼԻՈՒԹԵԱՄԲ**

Հայկական ամէնօրեայ դպրոցները միշտ ալ եղած են մեր մշակոյթի եւ ինքնութեան պահպանման հիմնական միջոցներ:

րէն կարեւորագոյնները: Անոնք կը փոխանցեն լեզու, պատմութիւն, ազգային արժէքներ եւ համահայկական պատկանելիութեան զգացում: Սակայն այս դպրոցները մատչելի են միայն համեմատաբար փոքր շրջանակի մը: Վերջին տուեալներով՝ սփիւռքահայութեան միայն մօտ 5 տոկոսը կը յաճախէ հայկական ամէնօրեայ դպրոց:

Այս կը նշանակէ, որ համայնքային ներդրումները, որքան ալ զնահատելի եւ կենսական, չեն բաւարարեր՝ հասնելու այն մեծամասնութեան, որ կը մնայ կրթական այս համակարգէն դուրս: Այս սահմանափակ հասանելիութիւնը կը պահանջէ նոր «մոտեք»ներ, որոնք աւելի լայն հարթակի վրայ կրնան ծառայել մեր նպատակներուն՝ հասանելի, ճկուն եւ ժամանակակից միջոցներով:

**ՃԱՄԲԱՐՆԵՐԸ ՀՁՕՐ, ԲԱՅՑ  
ԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ ԱՐՁԱԳԱՆԳ**

Հայկական բանակավայր-ճամբարները, ինչպէս Camp Hayasdan-ը կամ Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական ճամբարները, երկար տարիներ մեծ փորձառութիւն ապահոված են հայ երիտասարդներուն՝ տալով խոր կապ, ոգեղինութիւն եւ անմոռանալի յիշատակներ: Սակայն, ճամբարները կը գործեն միայն եղանակային-սեզոնային հիմքով, հիմնականօրէն ամբողջ, եւ անոնց ազդեցութիւնը կը սահմանափակուի ժամանակով եւ աշխարհագրութեամբ:

Անհրաժեշտ է մտածել, թէ ի՞նչպէս կարելի է հայ դպրոցին եւ ճամբարային ոգիին ազդեցութիւնը տարածել ամբողջ տար-



ւան վրայ եւ հասնիլ աւելի լայն շրջանակի: Այստեղ ի յայտ կու գայ նոր լուծում մը՝ երիտասարդական կեդրոններու «մոտեղ»:

**Հ.Մ.Ը.Մ.՝ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԳԱԿՈՎ ՎԵՐԱԶԵԻՈՒԱԾ ՀԻՄՆԱՐԿ**

Այսօրուան իրականութիւնը կը բնորոշուի նոր սերունդով, որ խառնարան մըն է: Կան լեզուի ն տիրապետող եւ յանձնառու պատանի-երիտասարդներ, բայց շատ աւելի են տակաւին Հ.Մ.Ը.Մ.ի հետ անհաղորդ, անտարբեր կամ իրենց արմատներէն հեռացած հայերը: Համայնքը կը պարփակէ նաեւ «Հայաբրիտ հայ»եր՝ երիտասարդներ, որոնք կը կրեն բազմամշակութային ինքնութիւն, կ'ապրին տարբեր արժէքներու միջավայրի մէջ եւ կը ներգրաւուին միայն այն գործունէութիւններու մէջ, որոնք անձնապէս իմաստալից կը նկատեն: Այս բարդ նոր սերունդը կը պահանջէ նոր մօտեցում, նոր ձեւաչափեր եւ նոր տարածքներ, ուր ինքնութեան հաղորդումը ըլլայ բնական, ներշնչող եւ արդիական:

Հ.Մ.Ը.Մ. այսօր արդէն կը վայելէ վստահութիւն, ունի աւանդութիւն եւ մարդկային դրամագլուխ, որ կրնայ առաջնորդել բարեփոխումի գործընթաց մը: Սակայն ներկայիս իրականութիւնը այնպիսին է, որ մեր համայնքները այլեւս չեն հասնիլ սերունդներուն: Այս պահուն, մեր հայկական շէնքերուն մեծ մասը գործածութեան ենթարկուող տարածքներ չեն, այլ՝ արարողութիւններու, նիստերու կամ սահմանափակ ծրագիրներու վայրեր: Սփիւռքի մէջ հազիւ կան քանի մը լիարժէք երիտասարդական կեդրոններ:

Այդ բացը կը նշանակէ, որ բազմաթիւ հայ երիտասարդներ առօրեայ չփութ չունին իրենց հայկական ինքնութեան հետ: Անոնք չեն ապրիլ հայրենի, այլ կ'այցելեն հայկական տեղ մը՝ շաբաթական անգամ

մը, ծրագիրի մը համար: Այդ միջոցին, անոնք կը շարունակեն իրենց իսկական կեանքը այլ միջավայրերու մէջ, որոնք չեն արտացոլացնէր իրենց ժառանգութիւնը:

Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը պիտի մնայ կենսունակ, մանաւանդ եթէ ան պիտի առաջնորդէ համայնքային վերանորոգում մը, ան պարտի կեդրոնանալ արմատական վերասահմանումի մը վրայ, ո՛չ միայն իբրեւ մարզական կամ սկաուտական միութիւն, այլ իբրեւ համայնքային ցանց մը, որ կ'ապահովէ ամէնօրեայ ներգրաւում, արդիական փորձառութիւն եւ բազմապիսի ինքնութիւններու տարածք:

Այդ շրջագիծին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը ունի եզակի առիթ եւ ներուժ՝ ուղղորդելու համայնքային վերակառուցման յաջորդ փուլը:

**ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐԷՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Երիտասարդական կեդրոններու հայեցակարգը կը սատարէ յստակ նպատակներու.-

**1. Ամէնօրեայ ներգրաւում**

Շաբաթը մէկ անգամուան ծրագիրները այլեւս բաւարար չեն: Կեդրոնները պէտք է բաց ըլլան ամէն օր՝ պատանիներուն եւ երիտասարդներուն ընձեռելով տարածք մը, ուր անոնք կրնան ապրիլ, ստեղծագործել, սորվիլ եւ ընկերային կապեր հաստատել:

**2. Ժամանակակից, քաղաքացիական եւ մշակութային կեդրոններ**

Այս կեդրոնները պէտք է միացնեն բազմազան գործունէութիւններ՝ մշակութային, ընկերային, կրթական, արհեստագիտական: Պէտք է ստեղծուին տարրալուծարաններ, ստեղծագործական աշխատանոցներ, քննական զրոյցներու



վայրեր, ղեկավարութեան հարթակներ: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ը կը փոխուի «ձեռնարկ կազմակերպող» միութեան ղեկի կեանք կազմակերպող հաստատութիւն:

**3. Ներառական միջնորոտ**

Այս կեդրոնները պէտք է բաց ըլլան բոլոր հայ երիտասարդներուն համար, անկախ լեզուի անոնց իմացութենէն, ծագումէն կամ անցեալի ներգրաւուածութենէն: Անոնք պէտք է ըլլան յարմարեցուած «Հայալիտ հայ»երուն, նոր գաղթածներուն եւ մանաւանդ անոնց, որոնք չեն զգացած, որ հայկական տարածքներու մէջ տեղ ունին:



**4. Թուիչքի հարթակ ղեկի հայրենիք եւ աշխարհ**

Այս կեդրոնները կրնան դառնալ կուռան մը ղեկի Հայաստան ուղեւորութիւններու, համաշխարհային համագումարներու, մարդասիրական առաքելութիւններու եւ համահայկական համագործակցութիւններու: Հ.Մ.Ը.Մ.ի միջազգային ցանցը կրնայ այս ձեւով ծառայել իբրեւ խողովակ՝ պատանիներու ինքնութիւնը ընդլայնելու:

Այս ձեւով Հ.Մ.Ը.Մ.ը կրնայ վերածուիլ երիտասարդական շարժումի մը, որ ո՛չ միայն մարզանք եւ սկստութիւն կը փոխանցէ, ո՛չ միայն ձեռնարկ կը կազմակերպէ, այլեւ կը խթանէ նոր հայ ինքնութեան ձեւաւորման ամբողջական ուղին:

**ՏԵՍԼԱԿԱՆԸ ԱՐԳԷՆ ՍԿՍԱԾ Է. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ**

Այս գաղափարները արդէն սկսած են մարմնաւորուիլ կարգ մը շրջաններու մէջ:

Տրանսայի մէջ բացուելիք Եւրոպայի մարզական եւ մշակութային կեդրոնը, Լիբանանի «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» կեդրոնը, ինչպէս նաեւ Կլեմտէյի «Արարատ» մասնաճիւղին կեդրոնը կը վկայեն այս տեսլականին գործնականացման մասին: Ներկայիս, Հ.Մ.Ը.Մ.ի գանազան մասնաճիւղեր արդէն կը մշակեն նոր կեդրոններու ծրագիրներ՝ շատերը ունենալով գործարար պատրաստ ծրագիրներ:

Այս կեդրոնները պիտի ներառեն բազմաթիւ սրահներ, ստեղծագործական տարրալուծարաններ, դասարաններ, ճաշարան, մարզահարպարակներ եւ բացօթեայ բակեր: Անոնք պիտի չծառայեն միայն իբրեւ մարզասրահ կամ սկստական գետին, այլ՝ իբրեւ բազմաշերտ փորձառութիւններու տարածք:

Նման «մոտեք» մը կրնայ ծառայել իբ-

րեւ նախատիպ բոլոր այն գաղութներուն համար, որոնց մէջ սերունդներ փնտռած են արդի, բաց եւ իմաստալից հայկական ներկայութիւն:

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ. ՃԱՄԲԱՅ ՄԸ ԳԷՊԻ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՅՆՔ**

Հ.Մ.Ը.Մ.ի եւ Սփիւռքի ապագան կախեալ է այն անկեղծութենէն, որով ան կրնայ վերանայիլ իր առաքելութիւնը: Երիտասարդական կեդրոնները ուղիղ արձագանգ մըն են մեր համայնքներուն մէջ պարզուող ընդհանրական ճգնաժամին. կորսուող ներգրաւուածութիւն, յոգնած կառույցներ եւ ինքնութեան հանդէպ խամրող կապ:

Այս նոր «մոտեք»ը միաժամանակ պահպանողական եւ նորարար է: Կը պահպանէ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը, իբրեւ դաստիարակչական ու արժէքային շարժում, բայց նոր ձեւով կը մարմնաւորէ այդ նպատակը՝ ստեղծելով տարածք մը, ուր հայ պատանին կրնայ մեծնալ եւ հայ մնալ՝ առանց դուրս գալու իր ժամանակէն:

Կեդրոն ունենալու գաղափարը նոր ստեղծագործութիւն մը չէ, բայց արդի ծրագիրներու նախատիպը եւ առաջնահերթ կարեւորութեան ընդգծումն է նորութիւնը, որ նաեւ լուսարձակի տակ կ'առնէ նիւթականի ապահովման ու կազմավարարութեան կենսական կարեւորութիւնը:

Եթէ Հ.Մ.Ը.Մ.ը կարենայ փոխակերպուիլ իբրեւ «համայնք ստեղծող» կառույց, եւ ո՛չ միայն «ծրագիր իրականացրող», ապա ան կրնայ առաջնորդել համայնքային վերածաղկում մը՝ արդի, գործօն եւ ներառական:

Եւ այդ պահուն Հ.Մ.Ը.Մ.ը պիտի չըլլայ միայն շարժում մը, այլ՝ ապրելաձեւ մը:





# ՀԱՐԱՉԱՏ ՈՒ ՃՇՄԱՐԻՏ ԽՕՍՔ՝ ՀԱՒԱՏԱՒՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԱՔՐԱՀԱՄ ԱԻԸՆԵԱՆԻ ԱՆՄԱՌ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Շորժիկ Ռաստկելեճեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

**1** 955-1956 ուսումնական տարեշրջանին բախտն ու պատիւը ունեցայ Հալէպի Ազգ. Քարէն Եփփէ ճեմարանի ուսանող ըլլալով:

Ուսանողութեան տարիներուն միշտ ներկայ կը գտնուէի Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայոլի ներկայացուցչական կազմի ելոյթներուն:

Առաջին մրցումէն ուշադրութիւնս գրաւեց եւ անձիս վրայ դրական տպաւորութիւն ձգեց խումբի խմբապետ, յետսապահ գիծի կեդրոնի արթուն պաշտպան եղբ. Աբրահամ Աւրնեանը: Իր բարձր հասակով, արի կեցուածքով, աշխոյժ ու կայտառ վիճակով, Հ.Մ.Ը.Մ.ականի վեհ ու ազնիւ բարոյական նկարագիրով տոգորուած, կարող ղեկավարի հմտութեամբ ու փորձառութեամբ օժտուած, եւ աստղ մարզիկի մը յատկանիշները իր անձին մէջ խտացուցած, ան ինծի համար դարձաւ համեստ, տիպար եւ օրինակելի մարզիկ:

Մրցակից խումբերու դէմ, յետսապահ գիծի հաւատարիմ ու անսակարկ նուիրեալ եղբայրներու՝ Սահակ Եղոյեանի, Սարգիս Քէօշկերեանի (Նեկրօ), Գուլումի, Արշակի, բերդապահ Սուրէնի, ապա Անդրանիկ Սիւլիւքճեանի հետ, առիւծի նման, անոնք բոլոր գորհներն ու վտանգաւոր յարձակումները կը չէզոքացնէին: Մրցակից մարզիկները Հ.Մ.Ը.Մ.ի պողպատեայ պատնէշին զարնուելով կը ձախողէին իրենց նպատակը իրականացնել եւ Հ.Մ.Ը.Մ.ի բերդը կը մնար անխորտակելի:

Եղբ. Աբրահամ Աւրնեան բոլորիս համար Հ.Մ.Ը.Մ.ական տիպար մարզիկն էր: Հանդարտութեամբ, համբերութեամբ, խոհեմութեամբ, եղբայրական դրական վերաբերմունքով, յուսատու ժպիտը միշտ դէմքին, ան խումբը կը ղեկավարէր օգտակար, շինիչ ցուցմունքներ ու թելադրանքներ փոխանցելով, եւ մեծապէս սատար հանդիսանալով խումբին յաղթանակներուն:

Իր ունեցած տիպար ու աստղ մարզիկի այս տուեալները, ֆուլթայոլիստի վեհ ու ազնիւ մարզական ոգին ու առողջ նկարագիրը կը գրաւեն ուշադրութիւնը Սուրիոյ ֆուլթայոլի գերագոյն մարմնի պատասխանատուներուն, որոնք անմիջապէս

հրաւէր կ'ողողեն եղբ. Աւրնեանին միանալու եւ մաս կազմելու Սուրիոյ ազգային հաւաքականի կազմին:

Ան կը յաջողի լաւագոյնս արդարացնել իր վրայ դրուած յոյսերն ու ակնկալութիւնները, եւ շատ կարեւոր դերակատարութիւն կ'ունենայ հաւաքականի խումբին ձեռք բերած պատուաբեր յաղթանակներուն մէջ, եւ արդարօրէն կ'արժանանայ բոլորին սիրոյն, յարգանքին, բարձր գնահատանքին ու արժեւորումին, ի մասնաւորի՝ ֆուլթայոլի օտար համակիրներու հոծ բազմութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի հաւատաւոր համակիրները եւս նոյն վերաբերումը եւ կեցուածքը ունէին եղբ. Աւրնեանի նկատմամբ: Անոնք դաշտին վրայ, մրցումներու ընթացքին, իրենց կատարած քաջալերական ու խրախուսիչ բացականչութիւններուն ընթացքին յաճախ կը կրկնէին արտայայտութիւն մը, զոր շատ լաւ կը յիշեմ եւ մինչեւ օրս ականջիս մէջ յստակ կը հնչէ. «Հայր Աբրահամը անգամ եւս փրկեց մեզ ծանր վտանգէ»:

Եղբ. Աբրահամ Աւրնեանի Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցէն ստացած մարզկային ու ազգային վեհ ու ազնիւ դաստիարակութիւնը մեծապէս նպաստեց անոր նկարագրին առողջ կերտումին եւ կազմաւորումին, իբրեւ գիտակից մարդ, հաւատաւոր ու յանձնառու Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր եւ ճշմարիտ, անձնուրաց գաղափարի տէր հայ մարդ:

Եղբ. Աբրահամ փոքր տարիքէն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարքերուն: Աստիճան առ աստիճան կը բարձրանայ Հ.Մ.Ը.Մ.ի սանդուխներէն, ստանձնելով պատասխանատու զանազան պաշտօններ: Ան բժախնդրութեամբ եւ բարձր գիտակցութեամբ կը յաջողի արդարացնել իր վրայ դրուած յոյսերն ու ակնկալութիւնները: Հ.Մ.Ը.Մ.ի մեծ դարբնոցէն ստացած

իր դաստիարակութիւնը հետագային բարենրպաստ մեծ դեր կ'ունենայ եղբ. Աւրնեանի անհատական կեանքին մէջ, իբրեւ գիտակից ու հաւա-



տարիմ ամուսին, հոգատար ու դաստիարակիչ հայր եւ գործի ասպարէզին մէջ յաջողած, վստահելի, սիրուած եւ յարգուած անձնաւորութիւն: Ան երբ ֆուտպոլի կեանքին հրաժեշտ կու տայ իբրեւ մարզիկ, միշտ հաւատարիմ կը մնայ իր կոչումին եւ իր պաշտելի միութեան վեհ ու ազնիւ առաքելութեան: Ան կը շարունակէ իր ծառայութիւնը մատուցել հաստատ հաւատքով, անսակարկ նուիրումով, միշտ կանգուն եւ պատրաստ մնալով Հ.Մ.Ը.Մ.ի պատնէշին վրայ: Ժրաջան աշխատանքով ան կը գործադրէ իրեն վստահուած պատասխանատու պարտականութիւնները, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղական, ապա Շրջանային Վարչութեան գործօն անդամ, ու մանաւանդ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչական խոյսեան խումբի աւագ մարզիչ, արժանանալով բոլորին ջերմ սիրոյն եւ յարգանքին եւ արժանավայել կերպով զնահատուելով Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով:

1963-ի ամրան սկիզբը ես բախտն ու պատիւը ունեցայ իմ պաշտելի միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին մաս կազմելու:

Շնորհքիս հետ Հայէպ հաստատուելէ ետք, առաջին գործս եղաւ, յաջորդ օրն իսկ, եղբ. Աւրնեանին հանդիպիլ եւ իրեն յայտնել պատրաստակամութիւնս Հ.Մ.Ը.Մ.ի խումբին միանալու: Ան մեծ ուրախութեամբ դիմաւորեց զիս եւ գոհունակութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ականավայել գեղեցիկ արարքիս համար: Կարճ ժամանակ ետք մեզի միացաւ ֆուտպոլի ֆետերասիոնի անդամ, Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Մանուէլ Հալլաճեան, եւ երեքս միասին մեկնեցանք ֆետերասիոնի կեղ-



րուն եւ հոն համապատասխան տոմարի մէջ ստորագրեցի եւ իրաւունք ստացայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի մարզիկ ըլլալու:

Այդ օրը ինձի համար եղաւ բացառիկ ու յիշատակելի օր:

Չորս տարի շարունակ, եղբ. Աւրնեանի գլխաւորութեամբ ու ղեկավարութեամբ, աննման եղբայրներու հետ յաջողեցանք բացառիկ, պատմական, աննախընթաց ու պանծալի նուաճումներ, խոյսեանութիւն եւ անհաւատալի յաղթանակներ կերտել տեղական, արաբական եւ միջազգային խումբերու դէմ:

Շնորհիւ եղբ. Աւրնեանի մեզի փոխանցած շինիչ ցուցմունքներուն, օգտակար թելադրանքներուն, եղբայրական խրատներուն եւ կարեւոր շեշտաւորումին, թէ՛ միշտ կառչած պէտք է մնալ ընդհանրական անհատական հաշիւներէ եւ հասկերէ վեր դասելու սկզբունքին, մենք միացեալ ջանքերով ու յարատեւ պայքարով յաջողեցանք կերտել բազմաթիւ պատւաբեր յաղթանակներ, որոնք եկան աւելի եւս հարստացնելու, ճորտացնելու եւ ոսկի տառերով զարդարելու Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան փայլուն, պայծառ եւ պատկառելի էջերը, մանաւանդ Սուրիոյ 1964-1965 տարեշրջանի ֆուտպոլի «մուսթազ»




դասակարգի առաջին խոյսեանութեան բացառիկ նուաճումը, շնորհիւ բոլորին գերզոհողութեան, համագործակցութեան եւ թափած արդար քրտինքին, եւ խումբի աւագ մարզիչ եղբ. Աբրահամ Աւրնեանի օգտակար թելադրանքներուն եւ ցուցմունքներուն:

Բիւր յարգանք, սէր ու երախտագիտութիւն սիրելի եղբ. Աբրահամ Աւրնեան, ձեր ազգանուէր ու ազնիւ կամաւոր ծառայութեան համար:

Վարձքը կատար սիրելի ու անմուռնալի եղբ. Աբրահամ Աւրնեան:

Միշտ պիտի մնաս մեր միտքերուն, հոգիներուն եւ յիշատակներուն մէջ, յարգարժան, բացառիկ եւ իւրայատուկ տեղ գրաւող, անմոռանալի տիպար Հ.Մ.Ը.Մ.ական, ազնիւ եղբայր:



## Կ. ՊՈԼՍԻ «ՀԱՅ ՍԿԱՈՒՏ» ՀԱՆՆԴԵՍԸ (1919-1922)



Կարո  
Ուշագլեան

**Մարիամ Յովսէփեան**  
**Յ.Յ. ԳԱԱ պատմութեան ինստիտուտի**  
**աւագ գիտաշխատող,**  
**բանասիրական գիտութիւնների թեկնածու**  
**ԵՐԵՎԱՆ**

«**Հայ սկաուտ**» հանդէսը հրատարակուել է Կ. Պոլսում (1919-1922 թթ.) եւ Փարիզում (1929-1935 թթ.): Այն եղել է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (այսուհետ՝ Հ.Մ.Ը.Մ.) օրգանը: Ամսագրի խմբագիրը Կարո Ուշագլեանն էր, պատասխանատու տնօրէնը՝ Հրաչեայ Տէր Ներսիսեանը, արտօնատէրը Գարլո Շահինեանը: Աշխատակազմում ընդգրկուած էին Հ.Մ.Ը.Մ-ի անդամներ, անուանի մարզիկներ, մարզական վերլուծաբաններ Յակոբ Քրիսեանը, Վահրամ Ս. Փափազեանը, Սիսակ Նալպանտեանը եւ այլք:

Պարբերականը հրատարակուել է Օ. Արզումանեանի, «Ք.Քէչիչեան եւ որդի», «Մասիս», «Պահլի եղբայր» տպարաններում: Հանդէսի առաջին համարի՝ «Մեր գործը (1 Նոյ. 1918 - 1 Հոկտ. 1919)» հաշուետուութեան մէջ ներկայացուած էր, թէ ինչպէս էին հիմնադրուել Հ.Մ.Ը.Մ-ն ու «Հայ սկաուտը»: «Զինադադարի առաջին օրերուն, երբ հայութիւնը արիւնի մկրտութեան տակաւին նոր դուրս էր եկեր, խումբ մը երիտասարդներ հաւաքուեցանք Գրիգոր Յակոբեանի կոչին վրայ՝ կազմելու համար Հ.Մ.Ը.Մ-ն: Առաջին նիստը գումարուեցաւ 1 Նոյեմբեր 1918 թ. 9 հոգիի ներկայութիւնով, որոնք հրաչքով

մը աւերի ճիրաններէն դուրս մնացած էին եւ որ նախկին սիրահարներ ու մասնագէտներ էին մարզանքի եւ սբօրի կեանքին»<sup>1</sup>: Ժողովում որոշում են ընդունում «լայն եւ պարզ ծրագրով մը սկսիլ մարմնակրթական գործը եւ զայն մտցնել դպրոցներէ եւ հիմնելի որբանոցներէն ներս»<sup>2</sup>: Այդ մասին վկայել է նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի նախագահող-հիմնադիրներից Յակոբ Միրունին. «Առաջին հաւաքումին կային Գրիգոր Յակոբեանէ եւ ինձմէ զատ՝ Լեւոն Յակոբեանը, Հայկ Ճիգմէճեանը, Գարլո Շահինեանը եւ Տիգրան Խոյեանը, որոնց շուտով պիտի գային աւելնալ քանի մը ուրիշներ ալ, ինչպէս Յովհաննէս Հինդլեան, Ժիրայր Խորասանճեան, Վահրամ Փափազեան եւ Գրիգոր Մերճանոֆ: Այդ առաջին հաւաքման մէջ իսկ հիմը դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ին: Հ.Մ.Ը.Մ-ն ծնունդն էր իրական պահանջի մը, եւ կրցեր էր առինքնել ամբողջ հայ երիտասարդութիւնը Պոլսոյ եւ գաղութներու մէջ»<sup>3</sup>:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնական նպատակն էր՝ կազմակերպել սկաուտական խմբեր, որոնցում ընդգրկուած հայ պատանիները մարզուելու էին «մարմինով եւ հոգիով»<sup>4</sup>: «Մեր գաղափարականը խմբագրականում թուարկուած էին Հ.Մ.Ը.Մ-ի հետապնդած խնդիրները. «Մենք կ'ուզենք պատրաստել անհատներ, որոնք կարող ըլլան ապագայ քաղաքակիրթ աշխարհի հարուածներուն դիմագրակելու: Մենք կ'ուզենք պատրաստել օրինապահ, բայց ոչ ստրուկ մարդը, տալ անոր առողջ եւ կորովի մարմին եւ ուղղադատ միտք: Մեր գաղափարականն է՝ պատրաստել առողջ սերունդ մը նոր հայրենիքին համար»<sup>5</sup>: Հայ սկաուտը պէտք է լինէր լաւատես, յուսադրող, վստահելի եւ կարգապահ անհատ, որին «կարենայ յանձնուել եւ յանձնել հայրենիքի շահերը»<sup>6</sup>: Հայ սկաուտի նշանաբանն էր՝ «Բարձրացիր-բարձրացուր», իսկ նպատակը՝ «բարձրանալ հոգիով, միտքով եւ մարմնով»<sup>7</sup>: Յակոբ Քրիսեանի կոչում, ուղղուած հայ սկաուտներին, մատնանշուած էին նրանց առջեւ դրուած խնդիրները. «Ուշադրութեամբ դիտէ, հայ սկաուտ, ճակատը զարգարող մետալը՝ վրան Արարատի յուշարձանը: Ան կը խորհրդանշէ հայը, հայը, որ կանգուն մնացած է միշտ, հակառակ թշնամիներու տեւական հալածանքին ու ջարդին: Յարգանքով ու երկիւղածութեամբ կանգնէ այս մեծ յուշար-

ճանին առաջ եւ միտքդ դիր կատարել անոր արձակած պատգամը: Քու խոհարար պէտք է ըլլայ ոչ միայն բարձրանալ, այլ նաեւ բարձրացնել»<sup>8</sup>:

Հայ սկստականներն ու հայ արիները պիտի կարողանային դիմակայել փորձութիւններով, Յեղասպանութեան սարսափներով, դեռ եւս շարունակուող կռիւներով լեցուն ժամանակաշրջանի մարտահրաւէրներին: Թէեւ 1918 թ. Հոկտեմբերի 30-ին Մուտրոսում զինադադար էր կնքուել Անտանտի երկրների եւ Առաջին համաշխարհային պատերազմում պարտուող կողմ ճանաչուած Թուրքիայի միջեւ՝ վերջինիս առջեւ որոշակի պարտաւորութիւններ դնելով Հայաստանի Առաջին Հանրապետութեան հետ պատերազմական գործողութիւնների մէջ չմտնելու առումով, բայց զինադադարը ժամանակաւոր ու խաբուսիկ էր: Կրկին վտանգուած էր հայ ժողովրդի խաղաղ գոյակցութիւնը: Նման քաղաքական հանգամանքներում լիովին տեղին էին Մեծ Եղեռնից մազապուրծ եղած հայ երիտասարդների հայրենասիրական մղումները Հ.Մ.Ը.Մ-ի ստեղծման, աճող սերնդին մարտունակ դարձնելու եւ հայեցի դաստիարակութիւն տալու ուղղութեամբ: Բնութագրական է Տ. Չիթուտու «Վերցո՛ւր ձեռնոցդ, հայ արի» արձակ բանաստեղծութիւնը, որը տպագրուած էր «Հայ սկստական» հանդէսում<sup>9</sup>: Այնտեղ կոչ էր արւում պաշտպանել Հայաստանի պատիւը այնպէս, ինչպէս վայել էր Գայլ Վահանների ու Դաւիթ Բէկերի ժառանգորդներին. «Հայ արի, վերցո՛ւր երեսիդ նետուած կարմիր ձեռնոցը. բարձրացի՛ր արարատեան վէստութիւնով, բարձրացո՛ւր կոխոտ պատիւը Մայր Հայրենիքիդ: Յուցո՛ւր, թէ դուն սերունդն ես Տրդատներու, որք Հռոմի կրկէսները պակուցին, Արշակներու, որ Շապուհները դողացուցին: Դո՛ւն ես հայրն ու նոր ծնունդը Գայլ Վահաններու, Դաւիթ-Մհերներու, Սասունցի Յովնաններու եւ նոր Դաւիթ Բէկերու, Անդրանիկ-Մուրատներու: Վերցո՛ւր ձեռնոցը, բարձրացո՛ւր դրօշը հայ անկախութեան, տնկէ՛ Եռագոյնը աճիւնագարդ հայ դրախտին մէջ»<sup>10</sup>:

Հ.Մ.Ը.Մ-ն տարբեր յօդուածներում անդրադառնում էր հայ ընտանիքներին հետաքրքրող այն հարցին, թե որքանով էր նպատակայարմար մեզանում հիմնել նաեւ աղջիկ սկստականների կազմակերպութիւններ: Օրինակ՝ «Աղջիկ սկստականները պարտուած կար նոյնիսկ Հ.Մ.Ը.Մ-ի պաշտօնական պատասխանը. «Երբ կը կազմենք մարդը, բնական է, որ պիտի պատրաստենք անոր համար կինը: Պէտք է աշխատինք, որ ծնողներ պատիւ համարեն իրենց աղջիկները այդ կազմակերպութիւններու անդամագրելը»<sup>11</sup>:

Պատուաբեր էր անդամակցել Հ.Մ.Ը.Մ-ին, քանի որ այն, ելնելով ժամանակաշրջանի հրամայականից եւ հայասպասպանութեան, հայրենիքը հզօրացնելու նպատակից՝ փորձելու էր դառնալ հայ ժողովրդի տարբեր հատուածները միմիանց միա-



ցնող գօտի. «Մեզի համար արժէք ունի ամէն անհատ՝ ինչ յարանուանութեան եւ ինչ կուսակցութեան ալ պատկանի»<sup>12</sup>: Հանդէսը ճշմարիտ հայրենասիրութիւն էր համարում Հ.Մ.Ը.Մ-ին սատարելը եւ օգնելը, քանի որ այդ համահայկական կառույցը ցանկանում էր պատրաստել «առողջ ու տոկուն երիտասարդութիւն մը, պատրաստ նուիրուելու հայրենիքի վերաշինութեան մեծ գործին, պատրաստ՝ հայրենիքի պաշտպանութեան, նախանձախնդիր՝ անոր բարձրացման ու զօրացման»<sup>13</sup>: Աւերուած հայրենիքի վերականգնման համար անհրաժեշտ էին հուժկու բազուկներ, հզօր կամք եւ անխոնջ աշխատանք: «Մարմնակրթիւնը ու սքօրներն են, որ պիտի կարենան այս բարեմասնութիւններով օժտուած անհատներ պատրաստել», եւ արւում էր հետեւութիւն, թէ «ամէն հային համար հայրենասիրական պարտք մըն է քաջալերել մարմնակրթական շարժումը»<sup>14</sup>: 1920 թ. ընթացքում լոյս տեսած յօդուածներում այս միտումը առաջնային էր դարձել, եւ շարունակ մատնանշուում էր, թէ հայրենիքը հայ սկստական կարիքն ունի, թէ հայ սկստականները պիտի ոչ միայն երկիրը վերականգնէին, այլեւ պիտի լինէին հայրենիքը պաշտպանող բազուկներ՝ պատասխանատուութիւն ստանձնելով կազմել «հայրենիք մը եւ բարգաւաճեցնել զայն»<sup>15</sup>: Սակայն ոչինչ արժեք անգամ բարգաւաճ հայրենիքը, եթէ չունէր «զինք պաշտպանող բազուկներ, եթէ չենք ուզեր տնտեսապէս, քաղաքականապէս գերուել ուրիշներէ, գիտակից քաղաքացիութեան ոգի ներարկենք մեր պատանիներուն, զրահապատ ֆիզիքականով օժտենք զանոնք: Անոնց բազուկներով ցանկապատ հիւսենք հայրենիքին շուրջ»<sup>16</sup>:

1. «Հայ սկստական» հանդէս, Կ. Պոլիս, 1919, թիւ 1, էջ 13-14:
2. Նոյն տեղում:
3. Սիրունի Յ., «Ինքնակենսագրական մօթեր», Երեւան, 2006, էջ 204, 208:
4. «Հայ սկստական» հանդէս, Կ. Պոլիս, 1919, թիւ 1, էջ 3-9:
5. Նոյն տեղում:
6. Նոյն տեղում:
7. Նոյն տեղում, 1919, թիւ 4, էջ 51-52:
8. Նոյն տեղում:
9. Նոյն տեղում, 1919, թիւ 1, էջ 14:
10. Նոյն տեղում:
11. Նոյն տեղում, էջ 9:
12. Նոյն տեղում, էջ 3:
13. Նոյն տեղում:
14. Նոյն տեղում, թիւ 3, էջ 41-42:
15. Նոյն տեղում, 1920, թիւ 15, էջ 234:
16. Նոյն տեղում, 1920, թիւ 5, էջ 65:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Գ. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ ՆԻՍՏԵՐԸ ՓԱՐԻՉԻ ՄԷՉ

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի մարզահամալիրին բացման առիթով Փարիզ այցելող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 18-21 Նոյեմբեր 2025-ին գումարեց 2023-2027 քառամեակի իր երրորդ լիագումարին նիստերը:



Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական 13-րդ բանակում, քարոզչական առաջին համագումար, խմբապետական 10-րդ համագումար, միջ-դիւանական 12-րդ խորհրդաժողով, «Արցախ հիմնադրամ»ի աշխատանքներ, միութեան շահութաբեր գլխաւոր նախաձեռնութիւնը հանդիսացող

Քառօրեայ նիստերու ընթացքին, Կեդրոնական Վարչութիւնը նախ գնահատումը կատարեց անցնող մէկ տարուան ընթացքին իր ունեցած բեղուն գործունէութեան, որուն գլխաւոր արտայայտութիւնները եղած են.- համա-Հ.Մ.Ը.Մ.ական դիւանական 11-րդ խորհրդաժողովը, 12-րդ մարզախաղերը, միջ-գամաքամասային բանակումները (Աստրալիա եւ ամերիկեան ցամաքամաս, Սիջին Արեւելքի երկիրներ), ատենապետներու առջանց եռամսեայ հանդիպումները, սկաուտական «Արարատեան» կարգի կազմակերպումը, սկաուտական գործուղումները, քարոզչական լայնածաւալ աշխատանքները (շրջաններու պատասխանատուներու եւ ցամաքամասային ներկայացուցիչներու առջանց հանդիպումներ, քարոզչական համակարգի ստեղծում, գրասենեակի հաստատում, նոր կայքէջի պատրաստութիւն, երկլեզու ել-բերթի հրապարակում), «Մարզիկ» պաշտօնաթերթի տպագիր եւ առջանց հրատարակութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ի «Արցախ հիմնադրամ»ի աշխատանքները, «Ժիրայր Սարգիսեան եկամտաբեր ֆոնտ»ի ծրագիրները եւ այլն:

Նաուպտոյտ, արխիւներու եւ թանգարանային իրերու թուայնացման աշխատանքի մեկնարկ եւ այլն:

Լիագումար նիստերու առընթեր, Կեդրոնական Վարչութեան անդամները այցելեցին եւ ծանօթացան Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի Իսի լէ Մուլինոյի նորակառոյց համալիրին, որ բոլոր տունեալներն ու յարմարութիւնները ունի դառնալու Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի մարզական կարեւորագոյն ու մեծագոյն կեդրոնը: Կեդրոնական Վարչութիւնը հանդիպումներ ունեցաւ բացման առիթով միութեան զանազան շրջաններէն եւ յատկապէս Եւրոպայի Մեկուսի շրջաններէն ժամանած վարչական պատասխանատուներու հետ:

Լիագումար նիստերը քննեցին միութեան 41 շրջաններու կազմակերպական իրավիճակը եւ տուին համապատասխան որոշումներ: Առանձին նիստով մը վերամշակուեցաւ միութեան փրոթօքալային ուղեցոյցը:

Իբրեւ յառաջիկայի աշխատանքներ, ծրագրուեցան 2026-ի համա-Հ.Մ.Ը.Մ.ական ձեռնարկները՝ համա-

Նիստերու աւարտին, Կեդրոնական Վարչութեան անդամները այցելեցին Թիէի գերեզմանատուն եւ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին միութեան հիմնադիրներէն՝ սկաուտապետ Գրիգոր Յակոբեանի շիրիմին:



# ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 13-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԵՌՕՐԵԱՅ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

**Հ**ամա-Հ.Մ.Ը.Մ.ական 13-րդ բանակումի նախապատրաստութեան աշխատանքներու ծիրէն ներս, 4-6 Դեկտեմբեր 2025-ին, եւրոպայ հանդիպումներ տեղի ունեցան Հայաստանի մէջ՝ մասնակցութեամբ բանակումի խմբապետական կազմին (ընդհանուր խմբապետ եղբ. Ռուբէն Նալպանտեան, փոխ խմբապետներ եղբ. Սեւակ Նազարեան եւ



քոյր Ալիք Տէր Պետրոսեան-Մելքոնեան) եւ Կեդրոնական Վարչութեան սկաուտական կորիզի ներկայացուցիչներուն:

Փողովներուն ընթացքին մանրամասնօրէն քննարկուեցան բանակումին առընչակից բոլոր հարցերը՝ մասնակցողներու թիւ, յայտագիրներ, շրջապտոյտներ, ազգային դաստիարակութիւն, բացման եւ փակման հանդիսութիւններ եւ այլն:

Խմբապետական կազմը, Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներն ու Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անդամները այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Գառնիկ Մկրտիչեան» սկաուտական բանակավայր, որ 24 Յուլիսէն 2 Օգոստոս 2025 պիտի հիւրընկալէ աւելի քան 800 սկաուտներ:



**Հ**.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեայ ծրագիրներուն մէջ կը նախաձեռնէ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան բարձրագոյն կարգին՝ «Արարատեան»ին կազմակերպման:

Այս նպատակով, Կեդրոնական Վարչութիւնը քառամեակին սկիզբը յառաջացուց յանձնախումբ մը, որ սկաուտական կորիզի ներկայացուցիչներուն հովանաւորութեամբ մշակեց 2023-2027 քառամեակի «Արարատեան» կարգի ծրագիրը, որուն տեսական բաժինը ընթացք առաւ Մայիս 2025-ին:

Դասընթացքին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքի 16 շրջաններէն 88 թեկնածուներ: Տեսական հանգրրուանը իր աւարտին հասաւ Նոյեմբեր 2025-ին:

## ՍԿԱՈՒՏԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄՆԸ ԱՒԱՐՏԱԾ

Նկատի ունենալով մասնակիցներուն մեծ թիւը, յարմար նկատուեցաւ զանոնք բաժնել երկու խմբակի, ըստ աշխարհագրական դիրքի՝ Միջին Արեւելք-Եւրոպա եւ ամերիկեան ցամաքամաս:

Երկու խմբակներէն իւրաքանչիւրը երկաւարութեայ հերթականութեամբ մասնակցեցաւ առցանց 11 հանդիպումներու, որոնց ընդհանուր թիւը հասաւ 22-ի: Հանդիպումներուն ընթացքին փոխանցուեցան մասնագիտական նիւթեր, տեղի ունեցան անհատական, զոյգերով եւ խմբակներով աշխատանքներ, կլոր սեղանի քըննարկումներ եւ այլն:

Դասընթացքը ներառեց հետեւեալ թեմաներով դասախօսութիւններ.

(Շար.ը էջ 112)

# ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՏԵՆԱՊԵՏՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ 5-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ



**Հ**.Մ.Ը.Մ-ի համահայկական կառույցի պատասխանատուներու հետ հերթական հանդիպումներու շարքին, Կիրակի, 2 Նոյեմբեր 2025-ի երեկոյան տեղի ունեցաւ միութեան Շրջանային եւ Մեկուսի Շրջանային վարչութիւններու ատենապետներու առցանց 5-րդ հանդիպումը Կեդրոնական վարչութեան հետ:

Հանդիպումին բացումը կատարեց եւ օրակարգի կէտերը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Ան իր խօսքին սկիզբը գումարէ Արեւմտեան Մ. Նահանգներու Կլեմտէյի «Արարատ» մասնաճիւղի մարզիկ՝ եղբ. Տարօն Մեսպոպեանի անակնկալ մահը պասքեթպոլի մրցումի մը ընթացքին: Մեսրոպեան եղած է յանկարծամահ եւ դաշտին վրայ կեանքը փրկելու բոլոր ճիգերը անցած են ապարդիւն:

Ապա, եղբ. Խաչերեան ամփոփ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան անցնող մէկ տարւան իրագործումները եւ հրաւիրեց Կեդրոնական վարչութեան յանձնախումբերու ներկայացուցիչները աւելի մանրամասնօրէն պարզելու իւրաքանչիւրին կատարած աշխատանքը: Այսպէս, եղբ. Մհեր Դաւիթեան խօսեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ մարզախաղերու եւ 2026-ի նաւապտոյտին մասին, քոյր Թալին Օրտոյլեան՝ խմբապետական համագումարի, «Արարատեան» կարգի եւ 2026-ին տեղի ունենալիք համա-Հ.Մ.Ը.Մ.ական 13-րդ բանակումին

մասին, իսկ եղբ. Վիգէն Աւագեան՝ քարոզչական աշխատանքներու ընդհանուր ընթացքին մասին (գրասենեակ, գործավարութիւն, կազմէջ, էլ-թերթ, քարոզչական զանազան նախաձեռնութիւններ եւ այլն):

Ձեկուցումներուն շուրջ եղան հարցում-պատասխաններ:

Առիթ տրուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի ատենապետ եղբ. Անտրէ Տատայեանին, որպէսզի ներկայացնէ Մեկուսի մասնաճիւղին նորակերտ կեդրոնին բացման հանդիսութիւնը (22 Նոյեմբերին) եւ այդ առիթով նախատեսուած յայտագիրները:

Աւարտին, Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան բոլորին թելադրեց շրջաններն ու մասնաճիւղերը դուրս բերել իրարու հետ մրցակցելու տրամադրութեան եւ գործել իբրեւ մէկ կամաւոր բանակ: Ան ըսաւ, որ այսօրուան փոխուող աշխարհին մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի ուժը իր համահայկական միաձուլ եւ յարատեւ զարգացող կառույցին մէջն է, իր 25 հազար անդամներու կարողութիւններուն ծանօթ ըլլալու եւ այդ կարողութիւնները ճիշդ ձեւով օգտագործելու մէջ է: «Մենք պարտուելի չենք գիտեր, անպամյան պիտի յաղթենք», հաստատեց եղբ. Խաչերեան եւ նկատել տուաւ, որ Կեդրոնական վարչութիւնը շուտով պիտի գումարէ իր երրորդ լիազումարը, ուր պիտի քննէ միութեան յառաջիկայ հանգրուանի գլխաւոր ձեռնարկները եւ մարտահրաւէրները:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ ԵՒ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ Ա. ՄԱՐՁԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԱՌՅԱՆՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

**Հ**.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 14 Դեկտեմբեր 2025-ի կէսօրին ժամը 12-ին (Միացեալ Նահանգներու ժամով) տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի

Ամերիկաներու եւ Աւստրալիոյ ցամաքամասային Ա. մարզախաղերու ծրագրի պատասխանատուներուն հանդիպումը:

(Շար.ը էջ 112)

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒ ԱՌՑԱՆՑ Բ. ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

**Հ.**Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպութեամբ, Ուրբաթ, 27 Յունիս 2025-ի երեկոյեան ժամը 10-ին (Պէյրուսի ժամով) տեղի ունեցաւ միութեան Շրջանային եւ Մեկուսի Վարչութիւններու քարոզչական պատասխանատուներու առցանց երկրորդ հանդիպումը: Առաջին հանդիպումը տեղի ունեցած էր Հոկտեմբեր 2024-ին:

Հանդիպումին մասնակցեցան 19 շրջաններու պատասխանատուներ, որոնց կարգին, համա-Հ.Մ.Ը.Մ.Վական նախաձեռնութեան մը առաջին անգամ ըլլալով մասնակցող, Հ.Մ.Ը.Մ.Ի Եաֆայի մասնաճիւղին ներկայացուցիչը: Հանդիպումին սկիզբը ներկայ գտնուեցաւ եւ Եաֆայի մասնակիցը ծանօթացուց Հ.Մ.Ը.Մ.Ի Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեան: Հանդիպումին միացաւ եւ մասնակիցներուն իր սրբոտի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Ներկայ գտնուեցան նաեւ կազմակերպիչ քարոզչական յանձնախումբի անդամներ եւ յանձնախումբին մօտ Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վիգէն Աւագեան:

Հանդիպումին մասնակիցներու ներկայութեան ստուգումը կատարեց քարոզչական գրասենեակի գործավար Յարութ Մարկոսեան: Ներկաները ողջունեց, քարոզչական աշխատանքներու կարեւորութեան եւ նման հանդիպումներու անհրաժեշտութեան մասին արտայայտուեցաւ քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գէորգ Յակոբճեան: Եղբայրը շեշտեց միութեան աշխատանքները հայ թէ՛ օտար շրջանակներուն ծանօթացնելու հրամայականը՝ նոր անդամներ ներգրաւելու, համակիրներու մեր շրջանակը ընդլայնելու եւ բարեկամներ ու բարերարներ ներգրաւելու համար: Ան ըսաւ, որ քարոզչական աշխատանքը մեր օրերուն ընտրանք մը չէ այլ լեւս, այլ՝ որեւէ գործունեութեան անբաժան մէկ մասն է: Քարոզչութիւնը, իբրեւ միջոց, տեղ գտած է Հ.Մ.Ը.Մ.Ի վերամըշակուած կանոնագիրին մէջ եւ շրջաններ պարտին իրենց աշխատանքներուն մէջ կարեւոր ու լայն տեղ տալ անոր:



Խօսք առաւ Կեդրոնական Վարչութեան անդամ եւ քարոզչական յանձնախումբի մօտ ներկայացուցիչ եղբ. Վիգէն Աւագեան: Եղբայրը ներկայացուց Հոկտեմբերի առաջին հանդիպումէն մինչեւ օրս միութեան քարոզչական մարզին զըլխաւոր նորութիւնները՝ զանոնք բաժնելով երկու մասի.-

**Ա.** Քարոզչական համակարգի ստեղծում.- Շրջաններու պատասխանատուներու ճշդում, քարոզչական գրասենեակի հիմնում, գործավարի աշխատանքի հրաւիրում, քարոզչական պատասխանատուներու ցամաքամասային առցանց հանդիպումներու կազմակերպում, ցանցային հարթակներու ստեղծում, կայքէջի արդիականացում, E-letter-ի եւ E-Marzig-ի (marzig.org) գործարկում եւ այլն:

**Բ.** Միութեանական ձեռնարկներու քարոզչութիւն.- Միջ-դիւանական խորհրդաժողով, սկառուտական համագումարի 100-րդ օրուան նշում, միութեան համագաղութային կառույցի ստեղծման 50-ամեակի յիշատակում, «Հայ սկառուտի օր»-ուան առիթով միութեան շեփորախումբերու ծանօթացում, «Մարզիկ»ի 45-ամեակի, Հ.Մ.Ը.Մ.Ի նաւապտոյտի, «Արցախ հիմնադրամ»ի, «Եկամտաբեր ֆոնտ»ի, ցամաքամասային բանակումներու եւ համա-Հ.Մ.Ը.Մ.Վական 12-րդ մարզախաղերու իրագրելում եւ այլն:

(Շար.ը Գ. կողք)





**Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ  
ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՈՒՄԸ ՊԱՍՔԻՆԹԱՅԻ ՄԷՉ  
ԱՒԵԼԻ ՔԱՆ 1000 ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ**





**Թղթակից  
ՊԵՅՐՈՒԹ**

**Ե**րեքշաբթի, 15 Յուլիս 2025-ի երեկոյան ժամը 6.15-ին, Լեռնալիբանանի Պասքինթա գիւղաքաղաքին մէջ ընթացք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Միջին Արեւելքի ցամաքամասային առաջին բանակումը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, կազմակերպութեամբ այս նպատակին համար յառաջացած խմբապետական յատուկ կազմին, հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի, Սուրիոյ, Գահիրէի եւ Ամմանի շրջաններէն աւելի քան 1000 սկաուտներու:

**ՆԵՐԿԱՆՆԵՐԸ ԵՒ ԴՐՕՇԱԿԻ  
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**

Բանակումին բացումը կատարուեցաւ պաշտօնական հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան Լիբանանի Թեմի Հայոց Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեան, Լիբանանի մարմ-

նակրթութեան եւ երիտասարդութեան նախարար դոկտ. Նորա Պայրազտարեան, երեսփոխան Յակոբ Թերզեան, Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Սեդրակ Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ քոյր Թալին Օրտոյլեան, եղբայրներ Վիգէն Աւագեան եւ Աւետիս Տէրվիշեան (Սուրիա), Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ալպէր Պալապանեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Արա Յակոբեան եւ Իշխան Եղիայեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, Լիբանանի Թեմի Ազգային Վարչութեան ատենապետ Գրիգոր Արսլանեան, Այնճարի եւ Պասքինթայի քաղաքապետներ Սեդրակ Հաւաթեան եւ Անթուան Հըրրաուլի, Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի անդամ Մարտիկ Արսլանեան եւ հիւրեր:

Հանդիսութեան սկիզբը, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին նըլազով, տողանցելով դրօշակի արարողութեան վայր մուտք գործեցին բանակումին մասնակից պատուիրակութիւնները: Հնչեցին Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայ-





լերգները, որոնց հետ բարձրացան Հայաստանի, Արցախի, Հ.Մ.Ը.Մ.ի եւ բանակուծին մասնակից շրջաններու երկիրներուն դրօշները:

**Հ.Մ.Ը.Մ.ի ԼԻԲԱՆԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Դրօշներու բարձրացումէն ետք խօսք առաւ բանակուծի հիւրընկալ շրջանի՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահան Համամճեան: Ան իր խօսքին մէջ յայտնեց, որ բանակուծները առիթ են միութեան մէջ մեր սորվածները գետնի վրայ կիրարկելու, տեսականը գործնականի վերածելու, միասնաբար ծրագիրներ մշակելու եւ իրականացնելու, միասին ապրելու, բարեկամանալու, ազգային ու մարդկային արժէքներու շուրջ համախմբուելու, Հ.Մ.Ը.Մ.ով զօրանալու եւ ամրապնդուելու:

Եղբայրը խօսեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտին եւ Հ.Մ.Ը.Մ.ին վստահուած դերակատարութեան մասին եւ ընդգծեց, որ «Հ.Մ.Ը.Մ.ի մէջ կը կերտուի ինքնավստահ մարդը, կը կոփուի ազգին նուիրուելու պատրաստ հայր: Հ.Մ.՝

Ը.Մ.ի մէջ հասակ կ'առնեն պատասխանատու եւ տիպար միութենականներ, որոնց մէջ մենք կը տեսնենք մեր ապագան, մեր վաղուան առաջնորդներն ու ազգին պահպանները»:

Ապա, Միջին Արեւելքի ցամաքամասային առաջին բանակուծին անդրադառնալով, եղբ. Համամճեան ըսաւ. «Թող այս բանակուծը առիթ մը ըլլայ բնութեան գիրկը մտերմիկ եւ օգտաշատ օրեր անցընելու, նորութիւններ սորվելու եւ բաժնեկցելու, ընկերութիւններ հիմնելու, փորձառութիւններ շահելու՝ միշտ առաջնորդուելով հայրենիքին, ազգին ու Աստուծոյ ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանով»:

Աւարտին, եղբ. Համամճեան Միջին Արեւելքի «Իւրայատուկ օրրան»էն՝ Լիբանանէն, բանակուծի մասնակիցներուն անունով ողջունեց Հայաստանի, Արցախի եւ համայն աշխարհի Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները՝ «խոստանալով միասնաբար շարունակել մեր նախնիներուն երթը եւ կերտել նորանոր յաջողութիւններ»:

**Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Թալին Օրտողեան եւ ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն պատմութեան ծանօթներուն համար նորութիւն կը նկատուի ցամաքամասային բանակուծի գաղափարը: Բոլորս ալ ծանօթ ենք համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակուծներուն, որոնք քառամեայ հերթականութեամբ տեղի կ'ունենան՝ իրենց հովանիին ներքեւ համախմբելով զանազան երկիրներէ ժամանած հարիւրաւոր Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտներ: Հ.Մ.Ը.Մ.ական իւրաքանչիւր սկաուտի երազն է գէթ մէկ անգամ մասնակցիլ այդ բանակուծներուն՝ վայելելու անոնց խանդավառ միջնորդութիւնը եւ կապեր հաստատելու իրեն նման Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերու եւ եղբայրներու հետ: Այլազան պատճառներով սակայն ամէն սկաուտ առիթը չ'ունենար մասնակցելու այդ բանակուծներուն եւ կը զրկուի այդ պահէն ու անոր հաճելի յիշատակներէն: Նկատի ունենալով այս պարագաները Կեդրոնական Վարչութիւնը գաղափարը յղացաւ կազմակերպելու ցամաքամասային բանակուծներ, որոնք պիտի համախմբեն աշխարհագրականօրէն նոյն տարածքին մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի շրջաններու սկաուտները՝ առիթը տալով անոնց սկաուտական բացօթեայ կեանքը վայելելու՝ թէեւ իրարմէ հեռու շրջաններու մէջ ապրող, սակայն նոյն միութեան պատկանող քոյրերու եւ եղբայրներու հետ»:

Շարունակելով, քոյր Օրտողեան ողջունեց բանակուծին





Հիւրընկալ եւ մասնակից շրջանները եւ խօսքը բանակող սկաուտներուն ուղղելով ըսաւ. «Օգտուեցէ՛ք այս եզակի առիթէն, որ ձեզի կը տրուի, մոռցէ՛ք թէ ո՞ր մասնաճիւղին կամ ո՞ր շրջանին կը պատկանիք, յիշեցէ՛ք միայն, որ դուք Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներն էք եւ կը մասնակցիք իր տեսակին մէջ իւրապատուկ այս բանակումին: Վայելցէ՛ք իւրաքանչիւր պահը, հաստատեցէ՛ք նոր բարեկամութիւններ եւ այդ կապերը ամուր պահեցէ՛ք ու շարունակեցէ՛ք բանակումէն ետք ալ: Եղէ՛ք կարգապահ, հետեւեցէ՛ք ձեզի փոխանցուած հրահանգներուն եւ թելադրանքներուն, որովհետեւ այս բանակումին յաջողութիւնը կախեալ է ձեր բոլորին գործակցութենէն եւ կարգապահութենէն»:

**ԲԱՅՈՒՄԷՆ ԵՏՔ**

Բանակումի պաշտօնական բացումին յաջորդեց բանակողներուն ուղղուած առաջին խօսքը՝ բանակումի ընդհանուր խմբապետ քոյր Ալիք Տէր Պետրոսեան-Մելքոնեանի կողմէ: Քոյրը դիտել տուաւ, որ նման բանակումի մը յաջողութեան համար կատարուած է համախմբուած ու կազմակերպուած





աշխատանք: Ան պատիւ նկատեց գործակցիլ եւ աշխատիլ Հ.Մ.Ը.Մ.ական տիպար, անձնուէր եւ ապագայ ղեկավար խմբապետներու հետ, որոնց ուժերուն, ազգասիրութեան ու հաւատքին շնորհիւ կարելի դարձաւ նման բանակում մը իրականացնել:

Ապա, խօսքը տարազաւորներուն ուղղելով, քոյրը մաղթեց, որ բանակումը ըլլայ հեզասահ, չարքաշ, կարգապահ, ուրախ բանակում մը՝ առաջնորդուելով միութեան «Բարձրացի՛ր՝ բարձրացուր» նշանաբանով:

Այս առիթով արբերէնով կարճ խօսք մը արտասանեց բանակումի փոխ ընդհանուր խմբապետուհի քոյր Թամար Աւետեան-Փատէհեան եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը ունեցան բանակումի յաջողութեան:

Բացման հանդիսութենէն եւ խմբապետական կազմի փոխանցումներէն ետք բանակողները ուղղուեցան իրենց ներքին բանակավայրերը՝ գործադրելու երեկոյեան համար ճշդուած յայտագիրները:



Արի-արեճոյշները եւ  
երեց-պարմանուհիները  
Հ.Մ.Բ.Մ.ի Պէրյուֆի ակումբին մէջ:







# Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՂ «ԿԱՄԱՒՈՐ ԲԱՆԱԿ»Ի ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ  
ԵՂԲ. ԱԻԵՏԻՍ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ  
ԽՕՍԲԸ՝ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼԲԻ  
ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ  
ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

**Հ**.Մ.Ը.Մ.Ի-ը համագաղութային կառույց մը ըլլալով, կը գործէ 26 երկիրներու մէջ, 41 շրջաններով, 101 մասնաճիւղերով, 13 միաւորներով եւ աւելի քան 25 հազար անդամներով: Մարմնակրթական միութիւն մը ըլլալով, Հ.Մ.Ը.Մ.Ի պարտականութիւնն է սկստութեան եւ մարզախաղերու ճամբով սերունդներ դաստիարակել: Ան կը զբաղի նաեւ պատմութեամբ, մշակոյթով եւ հոգեւոր արժէքներով: Իսկ անոր գերագոյն ժողովը բոլոր մտահոգութիւններէ առաջ կը զբաղի Արցախով, Արցախի հայութեան օժանդակութեան ծրագիրներով: Եւ հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.Ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովի որոշումներուն, ժողովը կու գայ հաստատելու, որ Արցախը մնայուն ներկայութիւն է Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր աշխատանքներուն մէջ:-

Ա. Պահպանելով Արցախի Հանրապետութեան խորհրդանիշները: Հ.Մ.Ը.Մ.Ի-ականներ Արցախի դրօշը եւ պէճերը կրելով ժողովուրդին պիտի յիշեցնեն, թէ ազատ, անկախ եւ ամբողջական Հայաստանի երազ մը կայ, որ պէտք է օր մը իրականանայ:



Բ. Ստեղծելով «Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի հիմնադրամ»ը:  
Գ. Մշակելով Արցախէն բռնի տեղահանուած փոքրիկներու համար ծրագիրներ:





Իսկ սկաուտական եւ մարզական աշխատանքներու պարագային ժողովը որոշած է համա-Հ.Մ.Լ.Մ.ական քառամեայ ձեռնարկներու կողքին թափ տալ ցամաքամասային նախա-ձեռնութիւններու, շրջանները աւելի աշխուժացնելու, փոխադարձ կապերը սերտացնելու եւ նոյն ցամաքամասի սկաուտներն ու մարզիկները իրարու քով բերելու համար: Ահալաւաիկ, այս որոշումէն մեկնած՝ Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպեց առաջին միջ-ցամաքամասային բանակումը, Եւրոպայի համար, Շուէտի Վեսսարօ կղզիին մէջ, 13-20 Յունիս 2024-ին: Իսկ երկրորդ բանակումը, ամերիկեան եւ աւստրալական ցամաքամասերու բանակումը, որ տեղի կ'ունենայ 15-20 Յունիս 2025-ին, Հ.Մ.Լ.Մ.ի Թեքույա բանակավայրին մէջ, Միացեալ Նահանգներ: Իսկ երրորդը Միջին Արեւելքի ցամաքամասային բանակումն է, որուն պաշտօնական փակման արարողութեան ներկայ կը գտնուինք, հիւրընկալութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի շրջանին, 15-19 Յունիս 2025-ին, Պասքինթայի մէջ, մասնակցութեամբ Լիբանանի, Սուրիոյ, Ամմանի եւ Գահիրէի 1000 սկաուտներու: Ցամաքամասային բանակումը իր տեսակին մէջ առաջինը ըլլալու կողքին ունի նաեւ տարբեր իմաստ եւ արժէք, որն է՝ նոյն ցամաքամասի երկիրներու Հ.Մ.Լ.Մ.ական սկաուտները քով-քովի բերել, մասնակցողներուն մօտ զարգացնելով ծառայասիրութեան, համագործակ-

ցութեան, ինքնավստահութեան եւ ազգային ոգին, զարգացընելով նաեւ սկաուտական գիտելիքներու պաշարը, քաջալերելով նախաձեռնութեան եւ մրցակցութեան ոգին, պատրաստելով ամուր նկարագիրի եւ բարոյական բարձր արժանիքներու տէր, հաւատաւոր եւ անձնուէր հայեր՝ ծառայելու ազգին եւ հայրենիքին, ըլլալով առողջ եւ չարքաչ անհատներ, հասնելու բանակումի խմբապետական կազմի որոշած կարգախօսին՝ «Ազգային վեհ նկարագիրով, միասնական ոգիով, կարգապահ շարքերով դէպի նորանոր նուաճումներ» եւ նշանաբան ունենալով՝ «Երգուէ՛ Եւագոյնին, յուսա՛ լաւագոյնին, աշխատէ՛ գերագոյնին»:

Աւարտին, սիրելի քոյրեր եւ եղբայրներ, Հ.Մ.Լ.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը ուղեցոյց ունենալով, դուք ձեր աշխոյժ մասնակցութեամբ պիտի դառնաք Հ.Մ.Լ.Մ.ի երթը շարունակող «Կամաւոր բանակ»ի զինուորներ:

Այս առիթով շնորհակալութեան խօսք կ' ուղղենք Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Շրջանային Սկաուտական Խորհուրդին, խմբապետական կազմին, գործադիր եւ օժանդակ կազմերուն, պատուիրակութիւններու խմբապետական կազմերուն եւ բոլոր անոնց, որոնք օժանդակեցին այս բանակումին յաջողութեան:

Ձեր վարձքը կատար եւ յաջողութիւն:





**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ ԵՒ ԱՒՏՐԱԼԻՈՅ  
ՑԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ  
ԲԱՑՈՒՄԸ ԹԵՔՈՒՅԱՅԻ ՄԵՉ  
ԱԻԵԼԻ ՔԱՆ 700 ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՎ**



**Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼՍ**

**Ե**րեքշաբթի, 15 Յուլիս 2025-ի երեկոյան ժամը 5-ին (Լոս Անճելլոսի ժամով), Լոս Անճելլոսի Թեքույա բանակավայրին մէջ իր աշխատանքներուն սկսաւ Հ.Մ.Ը.Մ-ի Ամերիկացիներու եւ Աւստրալիոյ ցամաքամասային առաջին բանակումը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, կազմակերպութեամբ այս նպատակին համար յառաջացած իմբապետական յատուկ կազմին, հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու, Գանատայի, Հարաւային Ամերիկայի եւ Աւստրալիոյ շրջաններէն աւելի քան 700 սկաուտներու:

**ՆԵՐԿԱՆԵՐԸ**

Բանակումին բացումը կատարուեցաւ պաշտօնական հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդ-

րոնական Վարչութեան անդամ եղբայրներ Մհեր Դաւիթեան, Վիգէն Աբէլեան (Արեւմտեան Մ. Նահանգներ), Վահէ Թանաշեան (Արեւելեան Մ. Նահանգներ), քոյր Լիոնի Սարմազեան (Գանատա) եւ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններու անդամներ:

Ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեանէն եղբայրներ Փիէր Մանուկեան (ատենապետ), Զարեհ Մովսէսեան (փոխ ատենապետ եւ սկաուտականի ներկայացուցիչ), Վիգէն Տաքէսեան, Բաֆֆի Վարժապետեան, քոյր Ալիս Սիմոնեան, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեանէն եղբ. Ասատուր Երեմեան (ատենադպիր), որ այս առիթով զնահատական յուշանուէր մը յանձնեց հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան:

Ներկաներու շարքին էին նաեւ բանակումի Ընդհանուր Խմբապետուհի քոյր Շարլին Կէօզալեան (Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Ընդհ. Խմբապետուհի) եւ բանակումի Փոխ Խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան (Գանատայի Շրջանային Ընդհ. Խմբապետ):





**ԲԱՑՄԱՆ ԽՕՍՔԸ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆԸ**

Բացման խօսքով հանդես եկաւ բանակումի օրուան հերթապահ քոյր Մանէ Շահպազեան (Պրոպէնքի «Սիփան» մասնաճիւղէն): Երեկոյեան ծրագիրը ներկայացուցին քոյրեր Նաթալի Եփեփեան (Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղէն) եւ

Գարինա Մսրրլեան (Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղէն): Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Փոխ Խմբապետուհի քոյր Քաթիա Գէորգեան սկաուտներուն յանձնեց կրօնական շքանշաններ: Նշանները օրհնեց Մովսէս Քհնյ-Շաննազեան, որ նաեւ օրհնեց ջուրը, աղն ու հացը:

**ԽՕՍՔԵՐԸ**

Այս առիթով խօսքեր արտասանեցին հիւրընկալ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու եւ Գանատայի Շրջանային Վարչութիւններու անդամներ՝ եղբայրներ Զարեհ Մովսէսեան եւ Ասատուր Երեմեան: Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Վահէ Թանաշեան:

Եղբայր Թանաշեան գոհունակութեամբ ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի Ամերիկաներու եւ Աւստրալիոյ ցամաքամասային առաջին բանակումը: Ան ըսաւ, որ ցամաքամասային բանակումներ կազմակերպելու որոշումը տուաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովը, Հոկտեմբեր 2023-ին: Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին լիազուածարին հաստատեց որոշումը եւ ծրագրեց ցամաքամասային երեք բանակումներու կազմակերպումը Եւրոպայի, Ամերիկաներու եւ Միջին Արեւելքի մէջ: 2024-ի ամրան տեղի ունեցաւ Եւրոպայի բանակումը եւ ահաւասիկ, տարի մը ետք կը կատարուի այս բանակումը եւ նոյն պահուն՝ Լիբանանի մէջ Միջին Արեւելքի բանակումը:

Շարունակելով, եղբ. Թանաշեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ. 107 տարուան իր փառապանծ երթը կը պարտի իր գաղափարաբանութեան հետեւեալ յատկանիշներուն.-

Ազգային գաղափարաբանութիւն.- Հ.Մ.Ը.Մ-ը գոլտ ազգային կազմակերպութիւն է, որ կը նպատակադրէ պատրաստել տիպար հայեր. սկաուտութիւնը եւ մարզախաղերը միջոցներ են միայն:





Ընտանեկան միջնորդություն.- Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարաբանությունն մէկ այլ կարեւոր յատկանիշը անոր անդամներուն միջեւ տիրող ընտանեկան միջնորդութեան է, ուր բոլորը իրարու քոյր-եղբայրով կը դիմեն եւ անոնց միջեւ կը տիրէ սէրն ու յարգանքը:

«Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանը.- Հ.Մ.Ը.Մ-ական սկաուտը միշտ կը ձգտի բարձրանալ եւ իր հետ բարձրացնել մնացեալ անդամները, մանաւանդ աւելի փոքրերը:

Հետեւաբար,- հաստատեց եղբ. Թանաշեան,- եթէ կ'ուզէք ցամաքամասային այս առաջին բանակումին յաջողութիւնը, հետեւեցէք այս երեք յատկանիշներուն: Բանակումին ընթացքին միայն հայերէն խօսելով, իրարու քոյր ու եղբոր պէս սիրելով, եւ նոր գիտելիքներ սորվելով՝ բարձրանալով եւ ձեզի հետ բարձրացնելով բոլորը:





# ՄԿԱՈՒՏՈՒԹԻՒՆԸ ՄԻԱՅՆ ՇԱՐԺՈՒՄՉԷ, ԱՅԼ՝ ԿԵԱՆՔԻ ՈՒԺ Է

**(Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՓԻԷՐ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԽՕՍԲԸ՝ ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ ԵՒ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԶԱՄԱԲԱՄԱՍԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ, ԹԵՔՈՒՅԱ)**

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամներ,  
Քոյր կազմակերպութիւններու ղեկավարներ եւ ներկայացուցիչներ,  
Շրջանիս մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ,  
Շատ սիրելի ծնողներ, հանդիսատեսներ, համակիրներ, կամաւորներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի անդամներ,  
Բարի եկած էք:  
Կ'ուզեմ սրտանց շնորհակալութիւն յայտնել Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, որ այս իւրայատուկ առիթը ընծայեց, առաջին անգամը ըլլալով, ցամաքամասային բանակում կազմակերպելու Ամերիկայի շրջաններու եւ Աւստրալիոյ հետ, եւ առաւել՝ մեծ ուրախութեամբ եւ հպարտութեամբ մեր քոյրերն ու եղբայրները հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.Ի Թեքույա բանակավայրին մէջ:

Թանկագին խմբապետներ եւ սիրելի սկաուտներ,  
Սրտանց կը շնորհակարտեմ ձեզ այս յատուկ եւ կարեւոր օրուան առիթով:  
Այսօր կը վկայենք, թէ սկաուտութիւնը ուժեղ եւ կենդանի է: Ձեր մասնակցութիւնն ու նուիրումը կը շարունակեն ամրապնդել մեր իտէպնները՝ պատրաստակամութիւնը, հայրենասիրութիւնը, ծառայութիւնը եւ առաջնորդութիւնը:



Սիրելի՛ ղեկավարներ,  
Ձեր հետեւողական աշխատանքը, ձեր ոգեւորիչ օրինակը եւ ձեր խնամքը արժանի են ամենաբարձր գնահատանքի: Դուք էք սկաուտական բանակումներու ոգին՝ անշահախնդիր առաջնորդները, որ կը ձեւաւորէք մեր ժողովուրդի վաղուան ղեկավարները:

Բանակումը թող ըլլայ ոգեշնչումի նոր աղբիւր, վերանորոգումի ու անասման ընկերութեան վայր:  
Շնորհակալութիւն բոլոր կազմակերպիչներուն, կամաւորներուն եւ ծառայողներուն, որոնք այս բացառիկ բանակումը իրականութիւն դարձուցին:

Սիրելիներ,   
Գարեգին Նժդեհ կ'ըսէ. «Եթէ կը փափաքիս ճանչնալ ազգի մը ապագան՝ նայէ իր երիտասարդութեան»:

Եւ այսօր, այստեղ, մեր Հ.Մ.Ը.Մ.Ի բանակումին մէջ մենք կ'ընենք ճիշդ այդ: Մենք կը նայինք մեր երիտասարդներուն աչքերուն մէջ եւ հոն կը տեսնենք հաւատք, ոգի, նուիրում եւ սիրոյ պատուանդան՝ պատրաստ ծառայելու ազգին, հայրենիքին, եկեղեցիին եւ մարդկութեան:



Այս բանակում միայն օրացուցային իրադարձություններ մը չէ: Աւելի քան յիշատակելի պահ մըն է: Ան վկայութիւն է, որ Հ.Մ.Ը.Մ.ի ջանքերով մեր երիտասարդութիւնը կը մեծնայ ճշմարիտ արժէքներով՝ պատրաստ կերտելու այն ապագան, զոր Նժդէհ կը նշանագրէր:

**Սիրելիներ,**

Ձեր նուիրումն ու սիրով կատարած ծառայութիւնը չափազանց արժէքաւոր է: Դուք էք այն սիւները, որոնց վրայ կանգնած է սկաուտական մեր ընտանիքը: Ձեր օրինակով կը ձեւաւորուի նոր սերունդը՝ հաւատարմութեամբ, պատասխանատուութեամբ եւ հայրենիքի հանդէպ նուիրումով:

Այո՛, մենք այստեղ ենք՝ բնութեան գիրկին մէջ, մեր վրաններուն տակ, կրակներուն շուրջ... բայց շատ աւելին համար:

Մենք այստեղ ենք՝ սրտով, հոգիով եւ համոզումով: Մենք այստեղ ենք, որովհետեւ սկաուտութիւնը մեր սրտին մէջ է:

Ձեր բոցաշունչ երգերով, ձեր խարոյկներով ու երգումներով դուք ո՛չ միայն կը շարունակէք 107-ամեայ աւանդութիւն մը, այլ՝ կ'արարէք ապագայ մը: Բանակումը այն վայրն է, ուր առաջնորդներ կ'աճին, ուր ընկերութիւնները կը դառնան եղբայրութիւն, ուր կեանքի դասերը կը սորվինք՝ առանց դասաբաններու:

**Սիրելի՛ ղեկավարներ,**

Ձեր աչքերուն փայլը, ձեր լուութեան ուժը, ձեր նուիրումին խոստումը այն լուռ հերոսութիւնն է, զոր մեզ կ'ոգեշնչէ: Ձեր անքուն գիշերներուն եւ անձայն աշխատանքին շնորհիւ է, որ այս փորձառութիւնը կը դառնայ անմոռանալի: Դուք սկաուտութեան ոգին էք՝ քալող օրինակն էք:

**Սիրելի՛ սկաուտներ,**

Ձեր ներկայութիւնը բանակումին մէջ այսօր ապացոյցն է, որ հայ երիտասարդը տակաւին ունի նպատակ, հաւատք ու երազանք: Ձեր քայլը, երգը, ժպիտն ու կարգապահութիւնը կը պատմեն այն պատմութիւնը, որ սկաուտութիւնը միայն շարժում չէ, այլ՝ կեանքի ուղի է:

**Սիրելիներ,**

Ձեր ամէն մէկ խօսքը, ձեր ամէն մէկ գիշերուան արթուն պահակութիւնը ու ձեր սրտցաւ խորհուրդները կը կերտեն ապագայի վստահութեան հիմքը: Դուք էք սկաուտական մեր բանակը, որ կ'ողողէ եւ կ'ոգեւորէ մեզ:

Այս բանակումը մեզի կու տայ ո՛չ միայն յուշեր, այլեւ՝ վերանորոգ հաւատք, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր կեանքին մէջ պատահական կերպով չէ, այլ՝ կոչում է:

**Կեցցէ՛ սկաուտական բանակումը:**

**Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:**

**Կեցցէ՛ մեր երիտասարդութիւնը:**



**Հ.Մ.Ը.Մ.-«ՖԻԿՍ»Ի ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԱՄԱԼԻՐԻՆ ՓԱՌԱՇՈՒՔ ԲԱՅՈՒՄԸ  
ԻՍԻ ԼԷ ՄՈՒԼԻՆՈՅԻ ՄԷՉ**







աւելի քան վեց տարուան վրայ, Հ.Մ.Լ.Մ.-«Ֆրանս»ի եւ Իսի լէ Մուլինոյի քաղաքապետութեան նախնական համաձայնութենէն՝ 17 Մայիս 2019-էն մինչեւ պաշտօնական համաձայնութիւն՝ 21 Սեպտեմբեր 2019 եւ շինարարական աշխատանքներու մեկնարկէն՝ Ապրիլ 2022-էն մինչեւ պաշտօնական բացում՝ 22 Նոյեմբեր 2025:

Կեդրոնը կը գտնուի Փարիզի անմիջական արուարձան Իսի լէ Մուլինոյի հայաշատ շրջանին մէջ (Ռապըլէ փողոց, թիւ 6) եւ կը տարածուի 3000 քառ. մեթր տարածութեան վրայ:

**ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԻՍԸ**

Մարզահամալիրին պաշտօնական բացումը կանխեց Հ.Մ.Լ.Մ.-«Ֆրանս»ի պատմութեան նուիրւած նկարներու ցուցահանդէսը, որ տեղի ունեցաւ համալիրին դէպի մարզադաշտ առաջնորդող նախասրահին մէջ, ներկայութեամբ բացման հանդիսութեան պաշտօնական հիւրերու եւ շուրջ 800 ազգայիններու:

Պաշտօնական հիւրերու շարքին էին Ֆրանսայի հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական եկեղեցիներու առաջնորդները, Հ.Մ.Լ.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան եւ Կեդրոնական Վարչութեան գրեթէ լրիւ կազմը, որ նոյն օրերուն Փարիզի մէջ կը գումարէր իր լիազումար նիստերը, Իսի լէ Մուլինոյի փոխ քաղաքապետ Արթիւր Խանճեան, Լիբանանի նախկին վարչապետ

**Թղթակից ՓԱՐԻՉ**

Շաբաթ, 22 Նոյեմբեր 2025-ը այսուհետեւ իր յատուկ տեղը պիտի ունենայ Հ.Մ.Լ.Մ.-ի տօնացոյցին մէջ, իբրեւ եւրոպական ցամաքամասի Հ.Մ.Լ.Մ.-ական մեծագոյն կեդրոնի բացման փառաշուք հանդիսութեան թուական:

Այդ օր սերունդներու եւ տասնամեակներու երազ մը իրականացաւ Հ.Մ.Լ.Մ.-«Ֆրանս»ի Իսի լէ Մուլինոյի մարզամշակութային կեդրոնին բացումով: Կեդրոն մը, որուն հողաչերտին ապահովման եւ կառուցման աշխատանքները երկարեցան





Սաստ Հարիրիի ներկայացուցիչ՝ գաևակը Հոսամ Հարիրի, Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Համակարգող Խորհուրդի (CCAF) համանախագահներ Մուրատ Փափազեան եւ Արա Թորանեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յովսէփ Տէր Գէորգեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի անդամներ, Համագգայինի եւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի եւ «Իմաստուններու յանձնախումբ»ի անդամներ, Պուրճ Հա-

մուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեան, ազգային բարերար տէր եւ տիկ. Ատոմ եւ Սեյրա Թնճուկեաններ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբայրներ Անդրանիկ Պահարեան եւ Լեւոն Պաղտասարեան, Հ.Մ.Ը.Մ-ի գանազան շրջաններէն (Հայաստան, Լիբանան, Լոնտոն, Ալմեյր, Սոտերթեյրա, Վիեննա, Միւնիխ, Մարսէյ, Նիս, Վալանս) ներկայացուցիչներ, Ֆրանսահայ ազգային, եկեղեցական, կրթական մարմիններու ներկայացուցիչներ, հայ թէ օտար թղթակիցներ, բարեկամներ, բարերարներ եւ մեծ թիւով ծնողներ:

Յետմիջօրէի ժամը 4.45-ին, պաշտօնական բացումը կատարեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, փոխ քաղաքապետ Արթիւր Խանճեան, Հոսամ Հարիրի եւ «Իմաստուններու յանձնախումբ»ի անդամներ՝ եղբայրներ Հրաչ Սիսեռեան եւ Լեւոն Պաղտասարեան: Անոնք մկրատով մը հատեցին Ֆրանսական դրօշին երեք գոյներով ժապաւէնը եւ բուռն ծափողջոյններով ներկաները առաջնորդեցին մարզադաշտ, ուր ընթացք առաւ օրուան հանդիսութիւնը:

**ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Բացման հանդիսութիւնը բաղկացաւ երեք մասէ՝ տողանցք, խօսքեր եւ գեղարուեստական բաժին:

Սկիզբը, Մեկուսի շրջանի խմբապետուհի քոյր Կասիա Վէքիլեանի առաջնորդութեամբ տողանցեցին մասնաճիւղին սկաուտական շարքերը՝ երէցներ, արի-արեւոյճներ, գայլիկ-արծուիկներ եւ նորակազմ մոկլի վոճմակի անդամներ: Անոնք հետեւեցան դրօշակակիրներու խումբին եւ տպաւորիչ կերպով դաշտին շրջանը կատարելով՝ գրաւեցին իրենց համար ճշգրտած տեղերը:

Ֆրանսայի, Հայաստանի եւ Արցախի քայլերգները կատարեց սփիրանօ Լուսի-







պատկանի. այսուհետեւ, 3000 քառ. մեթր տարածութեամբ այս կեդրոնը հայ աշխարհի սրբավայր մըն է»:

Հուսկ, եզրափակիչ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: «Այս կեդրոնը պիտի պատրաստէ ապագայի հայ մարդը: Յանձնեցէ՛ք ձեր գաւակները այս հաստատութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ին, եթէ կ'ուզէք որ անոնք լաւ հայեր դառնան», - յայտարարեց ան՝ ամբողջական յաջողութիւն մաղթելով այս ծրագիրին, որ պիտի հանդիսանայ համախմբման խթան (Խօսքը տեսնել էջ 4-5):



գիրին իրենց մասնակցութիւնը բերին Ալթունեանը, Իսիլէ Մուլինոյի «Արարատ» ժողովրդային պարաօմբը (գեղարուեստական ղեկավարներ՝ Քաթարինա եւ Արամ Արզումանեաններ), երգչուհի էրմոնիա եւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»-ի սկաուտներ:

**ՄԵՆԵԱԿՆԵՐՈՒ ԲԱՅՈՒՄԸ**

Նոյն օրը, նորակառոյց համալիրին մէջ տեղի ունեցաւ բացումը եօթը սենեակներու,

որոնք կրեցին անունները միութեանական երախտաշատ դէմքերու եւ Հ.Մ.Ը.Մ-ականներու ծնողներու: Այսպէս, յատուկ ցուցանակներ պատուեցին յիշատակը եղբայրներ Սուրէն Մուրատեանի (Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի հիմնադիր), Կապի Փոստուլի (Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի առաջին վարչութեան ատենապետ), Գառնիկ Մկրտիչեանի (Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ), Միհրան Շիմշիրեանի (Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ), Գեղամ եւ Ալիս Սիսեռեաններու, Յակոբ եւ Անահիտ Պաղտասարեաններու եւ Կարօ Վէքիլեանի: Սենեակներու բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան եղբ. Գառնիկ Մկրտիչեանի զաւակը՝ Նօթէ՛՛ Մկրտիչեան (Երեւանէն), եղբ. Միհրան Շիմշիրեանի դուստրը՝ Հուրի Շիմշիրեան (Պէյրութէն), Սուրէն Մուրատեանի զաւակը՝ Տիգրան Մուրատեան, Կապի Փոստուլի կինն ու աղջիկը՝ Սեդա եւ Լենա Փոստուլ, ինչպէս նաեւ՝ Սիսեռեան, Պաղտասարեան եւ Վէքիլեան ընտանիքներու հարազատները:

**ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ**

Խօսքերու աւարտին կիրարկուեցաւ 40 վայրկեաննոց գեղարուեստական յայտագիր մը՝ երգերով, պարերով, կենդանի պատկերով եւ տեսանիւթի օգտագործումով: Յայտագիրը ներկայացուց Հայոց Յեղասպանութիւնը, հայ ժողովուրդի յարուսթիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի 48 տարիներու պատմութիւնը՝ շատ գեղեցիկ համադրումով եւ գեղարուեստական բարձր վայելքով:

Ֆրանսահայ արուեստագէտ, Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Եսայի Ալթունեանի մտաղացումով եւ պատրաստութեամբ յայտա-



**ԸՆԹՐԻՔԸ ԵՒ ՇՆՈՐ ՀԱՒՈՐԱԿԱՆ ՅՈՒՇԱՆՈՒՒՆԵՐՈՒ ՓՈՆԱՆԱԿՈՒՄԸ**

Բացման հանդիսութեան փառաշուք հանդիսութեանէն եւ անոր յաջորդած հիւրասիրութեանէն ետք, ներկայ Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուները եւ հիւրերը ընթրիքի հիւրը եղան Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի «Իմաստուններու յանձնախումբ»ին:

Ընթրիքի ընթացքին, «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս» յատուկ յուշանուէրներով գնահատեց քաղաքապետ Անտրէ Սանթինին (ի բացակայութեան), փոխ քաղաքապետ Արթուր Խանճեանը, գեղարուեստական յայտագիրի հեղինակ Եսայի Ալթունեանը եւ բոլոր անոնք, որոնք նպաստեցին կեդրոնին իրականացման

# ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԸ

Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի Իսի լէ Մուլինոյի նորակառուց մարզահամալիրը արդիական է և բնապահպանական կեդրոն մըն է, 3000 քառ. մետր տարածութեամբ:

Մարզահամալիրը օժտուած է նորարար արհեստագիտութիւններով՝ բնական է և խնայողական ջեռուցումով և ջուրի շոգիացման միջոցով օդափոխման համակարգով, ինչ որ յարմարաւէտութիւն կ'ապահովէ՝ առանց ածխածնային վնասներու: Կանաչապատ տանիքներով և բնական միջոցներու գործածութեամբ կեդրոնը կը ստեղծէ կայուն և շնչող քաղաքային միջավայր:

Մարզահամալիրը ունի բոլոր տարիքներու յարմար ծառայութիւններ: Այսպէս.-

- Բազմապատակ հանդիսասրահ (400 քառ. մետր).- Կեդրոնին մէջտեղը գտնուող այս սրահը կրնայ ընդունիլ 380 հոգի (նստած՝ 260) տօնական և մշակութային ձեռնարկներու համար (հարսանիքներ, կնունքներ, դասախօսութիւններ, ցուցահանդէսներ, համերգներ, պարի դասընթացքներ, ընդունելութիւններ, պարահանդէսներ և այլն):

- Սկաուտական բաժին.- Յատուկ ենթակառուցներ՝ սկաուտները ընդունելու և անոնց ուսուցումն ու զարգացումը ապահովելու համար:

- Ճաշարան.- Հանգի վայր մը սնունդի համար:

- Գլխաւոր մարզադաշտ (1200 քառ. մետր).- Շըրքանային չափանիշերու համապատասխան, օժտուած՝ 300 հանդիսատեսի համար նախատեսուած աստիճանաւոր նստարաններով: Հոն կարելի է կիրարկել՝ պասքէպոլ, ֆուսբալ, վոլիպոլ, հէնտպոլ, պատմիճըն և փինկ-փոնկ:

- Կանգառ.- Ստորգետնեայ՝ 60 ինքնաշարժի համար:

- Մարզական և կազդուրիչ գործունէութիւններ.- Բացի խմբային մարզաձեւերէն, կեդրոնը կ'առաջարկէ հետեւեալները՝ որակաւոր մարզիչներով.

- ա. Քոնկ ֆու (պատանիներու համար):

- բ. MMA (Խառն մարտական արուեստներ- 14 տարեկանէն վեր):

- գ. Եոկա, սալսա և փիլաթես:

Կապ և ամրագրումներ (reservations).- Կեդրոնը կը հիւրընկալէ նոր աշխատանոցներ և ձեռնարկներ ամբողջ տարուան ընթացքին: Օրացոյցը պարբերաբար կը թարմացուի ընկերային ցանցերու և պաշտօնական կայքէջին վրայ՝ [www.homenetmen.fr/le-centre](http://www.homenetmen.fr/le-centre)

Դասընթացքներու արձանագրութիւն՝ [www.homenetmen.fr/contact](http://www.homenetmen.fr/contact)

Սրահի կամ ձեռնարկներու ամրագրում.- Կապ հաստատել Հարմիկ Օհանեանի հետ՝

+ 33 07-61-35-84-89 թիւին:  
Տեսանիւթ՝ <https://youtu.be/whdTpLOIR2I>



աշխատանքներուն: Յուշանուէր մըն ալ յանձնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը յուշանուէր մը յանձնեց քաղաքապետ Անտրէ Սանթինի ներկայացուցիչ՝ Արթիւր Խանճեանին, երկրորդ մը՝ Խանճեանին և իր ատենապետին բերնով յայտարարեց, որ Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ի նորակառուց համալիրին կը նուիրէ Պէյրութի մէջ յատկապէս պատրաստուած և Փարիզ բերուած միութեան պրոնզէ մեծ նշանակը՝ վահանը, մարզադաշտին պատերէն մէկուն վրայ ամրացնելու համար զայն:

Այս առիթով, արտասանուեցան սրտի խօսքեր: Ընթերցուեցաւ նաեւ Պուրճ Համուտի քաղաքապետին Ֆրանսերէն խօսքը: Ընթերթին ներկայ Հ.Մ.Ը.Մ.-ի շրջաններու ներկայացուցիչները իրենց կարգին փոխանցեցին յուշանուէրներ: Միջոցորտէն խանդավառուած կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ:

(Տեղի հասկնալի պատճառներով, Հուսամ Հարիրիի և Արթիւր Խանճեանի խօսքերուն ամբողջութիւնը կը ներկայացընենք «Մարզիկ»ի յաջորդ թիւով):





## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի Մեկուսի վարչությունը եւ մարզական համալիրի կառուցման «Իմաստուններու յանձնախումբ»ը կը պատրաստուին Շաբաթ, 22 Նոյեմբեր 2025-ին, Փարիզի արուարձաններէն Իսի լէ Մուլինոյի մէջ հանդիսաւոր բացումը կատարելու Հ.Ս.Ը.Ս.-Ֆրանսի նորակերտ մարզական համալիրին:

Մարզահամալիրին իրագործման համար իրենց անսակարկ աջակցութիւնը փոխանցեցին Իսի Լէ Մուլինոյի քաղաքապետ պրն. Անտրէ Սանթինին եւ յատկապէս փոխ քաղաքապետ պրն. Արթիւր Խանճեանը: Արդարեւ, պրն. Արթիւր Խանճեանը Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի նախկին անդամ է եւ երկար տարիներէ Հ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքին համակիրը: Ան իր համբերատար մօտեցումով, ապագայի տեսլականով եւ ամբողջական նուիրումով ջանք չխնայեց, որպէսզի Իսի լէ Մուլինոյի քաղաքապետութիւնը որդեգրէ եւ բարենպաստ պայմաններ շնորհէ Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ին՝ մարզահամալիրի ծրագիրը իրականացնելու համար: Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի Մեկուսի շրջանը հպարտութեամբ կ'արձանագրէ պրն. Արթիւր Խանճեանին անունը, իբրեւ մարզահամալիրի իրականացման կարելոր եւ նուիրուած անձերէն մէկը: Շնորհակալութիւն, պրն. Խանճեան, քու անկեղծութեանդ եւ յարատեւ աջակցութեանդ:

*Փարիզ, 17 Սեպտեմբեր 2025*

**Հ.Ս.Ը.Ս.-«ՖՐԱՆՍ»Ի ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ  
«ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ»**



Բացման հանդիսութեան ներկայ Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան կազմը:



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի Մեկուսի վարչութիւնը եւ մարզական համալիրի կառուցման «Իմաստուններու յանձնախումբ»ը կը տեղեկացնեն, որ տարիներու աշխատանքի իբրեւ արդիւնք, Շաբաթ, 22 Նոյեմբեր 2025-ին, Փարիզի արուարձաններէն Իսի լէ Մուլինոյի մէջ հանդիսաւոր բացումը պիտի կատարուի Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի նորակերտ մարզական համալիրին:

Մարզական համալիրը կը բաղկանայ պասքէթպոլի դաշտէ, ժողովասրահներէ, դասարաններէ, ճաշարանէ, 400 հոգինոց սրահէ եւ տարբեր խաղավայրերէ: Քաղաքապետ պրն. Անտրէ Սանթինին հետ կնքուած պայմանագիրին համաձայն, համալիրը Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի Վարչութեան կը տրուի 99 տարուան համար:

Մարզահամալիրը կ'իրականանայ երկար տարիներու հետապնդումներէ, բանակցութիւններէ եւ անխոնջ աշխատանքէ ետք: Իրագործուած մեծ ծրագիրը պիտի ծառայէ ո՛չ միայն Ֆրանսայի, այլեւ ամբողջ Եւրոպայի հայ պատանիներու եւ երիտասարդներու ֆիզիքական առողջ դաստիարակութեան եւ հայեցի մթնոլորտով կազմաւորման աշխատանքին:

Մարզահամալիրին իրագործման համար իրենց մեծ ներդրումը ունեցան Իսի լէ Մուլինոյի քաղաքապետ պրն. Անտրէ Սանթինին, քաղաքապետութեան խորհուրդի անդամները, ինչպէս նաեւ Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի առաքելութեան հաւատացող երկար տարիներու անհատ նուիրատուները:

Հ.Ս.Ը.Ս.-«Ֆրանս»ի յաջորդական Վարչութիւնները եւ անդամները Հ.Ս.Ը.Ս.ական դաստիարակութեամբ զինուած՝ իրականութիւն դարձուցին տարիներու երազը՝ յաջորդող սերունդներուն հայապահպանութեան տեսլականով եւ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին հետեւողականութեամբ:

Կեցցե՛ն «Նահատակ ցեղի անմահները»:

Կեցցե՛ Հ.Ս.Ը.Ս.ը:

*Փարիզ, 5 Սեպտեմբեր 2025*

**Հ.Ս.Ը.Ս.-«ՖՐԱՆՍ»Ի ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
ԵՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ  
«ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ»**





# ՄԵՆՔ ՀԱՒԱՏԱՑԻՆՔ, ՅՈՒՍԱՑԻՆՔ, ՍԻՐԵՑԻՆՔ ԳՈՐԾԸ ԵՒ ՄԿՐՏՈՒԵՑԱՆՔ ԱՅՍ ԳՈՐԾԻՆ ՄԷՉ ՈՒ ԱՅՍ ԳՈՐԾՈՎ

**«ՄԱՐԶԻԿ»-ԻՆ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ Հ.Մ.Ը.Մ.-«ՖՐԱՆՍ»-Ի «ԻՄԱՍՏՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ»-Ի ԱՆԴԱՄ ԵՂԲԱՅՐՆԵՐ՝ ՀՐԱՉ ՍԻՍԵՌԵԱՆ ԵՒ ԼԵՒՈՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ**

**Հարցազրույցը վարեց՝ Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ**

*Ուրկէ՞ ծնունդ առաւ եւ սաղմնաւորուեցաւ կեդրոն մը կառուցելու գաղափարը:*

-1981-ին, Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպած էր համա-Հ.Մ.Ը.Մ.ական առաջին մարզախաղերը, որոնք տեղի ունեցան Մոնթրէյալի եւ Թորոնթոյի մէջ: Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը մասնակցած էր պասքէթպոլի խումբով: Մոնթրէյալի մէջ տեսանք եկեղեցի-դպրոց-ակումբ եռեակը, որ իսկապէս տպաւորիչ էր իբրեւ հայկական տաքուկ անկիւն: Մեր վերադարձին ու այդ օրուրէն սկսեալ մենք ալ սկսանք փայփայել Փարիզի մէջ նման բան մը իրականացնելու երազը: Անշուշտ, այդ օրերուն անկարելի էր, սակայն գաղափարը միշտ մեր մէջ վառ մնաց, թէ պէտք է անպայման մեր սեփական կեդրոնը ունենանք, մասնաւորապէս որ թափառական վիճակի մէջ էինք: Վարչութիւններուն մտասեւեռումն էր իրականութիւն դարձնել այդ իրիւրը:

Թափառական կ'ըսենք, որովհետեւ սկառուտական հաւաքատեղին ամէն տարի կը փոխուէր, տարբեր կեդրոնի մը մէջ էր, մէկ դպրոցէն միւսը...: Պասքէթն ու Ֆուլթպոլը տարբեր արուարձաններու ու դաշտերու վրայ՝ Փարիզ, Ալֆորվիլ, Շուազի, Քլամար... ստիպուած էին ընելու իրենց փորձերը եւ ամէն անգամ այդ վայրերը ունենալու համար բաւական դժուարին դիմումներ ու խնդրանքներ պէտք է ներկայացուէին քաղաքապետարաններուն, պատկան մարմիններուն... իսկապէս չլատիչ էր:

Կ'ուզէինք մեր կեդրոնը, որովհետեւ կը տեսնէինք, որ մասնաճիւղը քսան-քսանհինգ տարուան աշխատանքէն ետք ո'չ մէկ յառաջդիմութիւն արձանագրած էր, նոյն տեղն էր: Մեր գործունէութիւնները չէինք կրնար ընդլայնել, որովհետեւ համախմբելու տեղ չկար, միջնորոտ ստեղծելու կարելիութիւն չկար:



Նորակառույց մարզահամալիրին գլխավոր մարզադաշտը:

Մարզիկներուն եւ սկաուտներուն միջեւ կապեր չէին ստեղծուել, որովհետեւ այն միջնորդողը զոր ամէն տեղ ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ը, հոս չկար, իւրաքանչիւր միաւոր տարբեր կողմ մըն էր, տաղտղնուած, իրարմէ անտեղեակ:

Միջնորդող բացակայութիւնը լուրջ պատճառ էր նաեւ, որ միութիւնը չհզօրանայ, չծաղկի, թիւը չբարձրանայ, սահմանափակ վիճակի մէջ մնայ: Կարծէք գոյութիւն ունէր սահմանագիծ մը. տեղ մը կը հասնէինք, կ'ուրախանայինք, բայց աւելի անդին չէինք կրնար երթալ, որովհետեւ սեփական տեղ չունէինք:

Բայց նաեւ արեւելքէն՝ Պէյրութէն եկած Հ.Մ.Ը.Մ.ական տղաք էինք եւ վարժուած էինք ահումբ հասկացողութեան եւ ահումբ յաճախելու հական նշանակութեան: Եւրոպայի մէջ հաւանաբար նման հասկացողութիւն չկար, եւ այդ մասին չէին մտածած:

Այդ օրերուն արեւելքէն՝ Լիբանան, Սուրիա, Իրաք, Պարսկաստան, դէպի Եւրոպա հասնող ահագին շարժում մը կար: Նոր ուժեր կը հասնէին, նախկին Հ.Մ.Ը.Մ.ականներ կամ ոչ, եւ այդ մեզ աւելի խթանեց, անպայման նման կեդրոնի մը գաղափարը ունենալու:

**Ինչպէ՞ս գործնականացաւ այդ երազը, որովհետեւ գաղափարը գեղեցիկ է, սակայն միջոցները եւս անհրաժեշտ են գայն իրականացնելու համար:**

- 2000-2001-ին, երբ Հ.Մ.Ը.Մ.-«Ֆրանս»ը 50.000 եւրոյի առաջին նուիրատուութիւնը ստացաւ Պրն. Սաատ Հարիրիէն, այն ժամանակուան վարչութիւնը որոշեց մեծ գումարն ու հետագային ստանալիք նուիրատուութիւնները իբրեւ ահումբի շինութեան հիմնադրամ ու անձեռնմխելի գումար պահ դնել: Եւ ահումբի գաղափարը սկսաւ մարմին առնել...:

**«Իմաստուններու յանձնախումբ»ի ստեղծման ուղղութեամբ ի՞նչ տեղեկութիւններ կրնաք փոխանցել:**

- «Իմաստուններու յանձնախումբ» կազմելու գաղափարի միտք բանին ստեղծելն էր մարմին մը, որուն գործը պիտի ըլլար հսկել, ահումբին տիրութիւն ընել, նուիրատուութիւններ գտնել, գումարներ հաւաքել եւ շինարարութեան աշխատանքները կատարել: Մեծ պատասխանատուութիւն էր, կարելի չէր երկու տարին անգամ մը նորընտիր վարչական կազմին, որ փոփոխական մարմին մըն էր, ձգել այդ գործը:

2018-ին կազմուեցաւ յանձնախումբը: Մինչ տարի մը առաջ պատրաստուած էր անոր կանոնագիրը եւ ներկայացուած՝ Կեդրոնական Վարչութեան: Այնուհետեւ սկսան Իսի լէ Սուլի-նոյի քաղաքապետութեան հետ յարաբերութիւնները:

«Իմաստուններու յանձնախումբ»ի իրաւասութեան սահմաններն են զբաղիլ կեդրոնի շինարարութեամբ, ու անկէ ետք՝ ապահովել պիւտձէն ու անոր գոյատեւումը: Այս ձեւով վարչութիւններն ալ այդ մտահոգութենէն զերծ կը պահուին:

«Իմաստուններու յանձնախումբ»ի գոյութիւնը կը միտի նաեւ պահպանել ահումբը, որ ժամանակի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի վերահսկողութենէն դուրս չելլէ: Ան բաղկացած է հինգ մնայուն անդամներէ, առաւել երկու անդամէ, մէկը նշանակուած ընդհանուր ժողովի կողմէ, միւսն ալ՝ վարչութեան ներկայացուցիչն է, որոնք փոփոխական են: Յանձնախումբի անդամներուն իբրեւ տարիք ճշդուած է 75 տարեկանը, որ կրնայ մէկ անգամ երեք տարիով երկարաձգուիլ, որմէ ետք անպայման պէտք է անդամը փոխուի: Զինք փոխարինողը կ'որոշուի մնացեալ չորս անդամներուն կողմէ:

Օրին, «Իմաստուններու յանձնախումբ»ը սկսած էր Իսի լէ Սուլի-նոյի քաղաքապետ Պրն. Անտրէ Սանթինիին հետ կապեր հաստատել եւ առաջին համաձայնութիւնը (ներքին) ստորագ-

**Ֆրանսերէն ըսելածն մը կայ՝ «բնալ խնդիր չկայ, այլ կան լուծումներ»:** Հ.Մ.Ը.Մ.ի մէջ մենք պէտք է հետեւինք այս գաղափարին, մեզի համար միայն լուծումներ կան եւ այդ ձեւով աշխատել ենք:

**Մենք գիրար հասկցեր ենք գործի յարատեւութեան մէջ:**



Մարզահամալիրի կառուցման պաշտօնական համաձայնութեան յայտարարութիւնը 21 Սեպտեմբեր 2019-ին:



րը եցաւ 2019-ին, իսկ երկրորդ պաշտօնական համաձայնութիւնը ստորագրուեցաւ քաղաքապետարանին մէջ, 2022-ին:

Ի դէպ, համայնքային խորհուրդի նիստին, քաղաքապետն ու քաղաքապետարանի 49 անդամները թեր քուէարկեցին 99 տարուան պայմանաժամով կեդրոնին հողը Հ.Մ.Ը.Մ-ին յատկացնելու որոշումին:

Պէտք է նշել, որ Իսի լէ Մուլինօ քաղաքը իր բոլոր պայմանագրութիւնները կը ստորագրէ 45 տարուան ժամկէտով: Երկար ճիգերէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ին համար, բացառաբար, ունեցանք 99 տարուան ժամկէտով եւ վերանորոգելի պայմանով պայմանագիր մը:

Անշուշտ որոշ խոչընդոտներ եղան, սակայն միշտ ալ արագ լուծումներ գտնուեցան:

Բոլոր կողմերը հիմնական գաղափարին համաձայն էին, գլխաւորաբար՝ քաղաքապետը: Անշուշտ այս ծրագիրը հաւանաբար չէր իրականանար եթէ այս քաղաքապետը չ'ըլլար ու մանաւանդ՝ փոխ քաղաքապետ եղբ. Յարութ Խանճեանը, որուն նպաստն ու ճիգը անգնահատելի է ու խաղացած դերը՝ անշուշտ նշանակալի:

**Աշխատանքին ծաւալը բնաւ մտավախութիւն չէ՞ յառաջացուցած:**

- Այո՛, ծրագիրը հսկայական էր, բայց «խենթ»եր էինք, շատ հաշիւ չըրինք թերեւս: Կամ բնա՛ւ հաշիւ չըրինք: Բայց եթէ մտավախութեամբ ճամբայ ելլէինք տեղ պիտի չհասնէինք: Կ՛ըսեն «խենթը քար մը գլորեց, տասը խելացի չկրցաւ զայն դուրս հանել»: Նետուեցանք եւ յաջողեցանք:

Ամէնէն մղիչ ուժ տուողները եղան մեզ հեգնողները, անոնք որոնք չհաւատացին մեր կարելիութիւններուն եւ չլըստահեցան մեր լըջութեան:

Կ՛ուզէինք նաեւ փաստել, որ Հ.Մ.Ը.Մ-ականը իր որոշումներուն կը հաւատայ եւ կը հասնի իր նպատակին: Անգիտակցօրէն անոնք մեզի տուին ուժ մը, փոխան՝ յուսահատութեան զգացումի:

Հ.Մ.Ը.Մ-ի սկսուածութեան մէջ մեր ստացած դաստիարակութիւնը անբացատրելի, լրացուցիչ, ապահով եւ վստահ բան մը ունի իր մէջ, որ կը ներշնչէ անձը եւ կը ստեղծէ այնպիսի

վիճակ մը, որ յուսահատութիւն չես ճանչնար, տոկոսութիւն մը կու տայ:

Փրանսերէն ըսեալէն մը կայ՝ «Բնաւ խնդիր չկայ, այլ՝ կան լուծումներ»: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ մենք պէտք է հետեւինք այս գաղափարին, մեզի համար միայն լուծումներ կան եւ այդ ձեւով աշխատել ենք:

Մենք գիրար հասկեր ենք գործի յարատեւութեան մէջ:

Այսօր յետադարձ ակնարկ մը նետելով, այո՛, կրնանք ըսել, որ ուրիշ բանաձեւում չկայ, բացի «խենթ ենք»էն: Ո՛չ ոք 10 միլիոն պարտքի տակ կը մըտնէր, պարզապէս բան մը ընելու համար:

Մենք պատասխանատու ձեւով այդ պարտքը առինք, գիտակից, որ ապագայ սերունդը միայն պարտատէր պիտի չգառնայ: Պատասխանատուութիւններն ու նիւթական եկամուտները որոշ չափով ծրագրուած ու կազմակերպուած են արդէն, թէեւ ամբողջութեամբ չէ վերջացած, բայց շատ լաւ ընթացքի մէջ է:

Կեդրոնը իր ծախսերը պիտի փակէ եթէ մեծ սխալներ չգործընեն: Երիտասարդները այս գործին համար պէտք է հասունանան: Մտավախութիւն չի մնար եթէ ընթացքը չխախտի, պահուի զծրուած ուղին ու լաւ ձեւով կատարուի յանձնաձեւումն ու տնօրինումը:


**Շինարարական բաժինը աւարտած է, ինչպէ՞ս պէտք է «լեցնել» զայն:**

- Այո՛, շինարարութեան բաժինը յաջողեցանք իրականացրել, այժմ կը մնայ այս կառուցին կեանք տալ ու անոր շարունակականութիւնը ապահովել:

Այդ մէկը շատ աւելի մեծ գործ է: Ներկայիս, վարչութիւն, Սկսուած Խորհուրդ, յանձնախումբ, բոլորը միասնաբար կը փորձեն աշխատանքը յառաջ տանիլ:

Երկու ամիսէ ի վեր գործունէութիւնները սկսած են ակումբէն ներս եւ արձանագրուողներուն թիւը արդէն 84 հոգիով աւելցած է, թէեւ բոլորը անդամ չեն, բայց մասնակցողներ են որեւէ գործունէութեան:

Կը խորհինք, որ պէտք ունինք երկու տարիի, որպէսզի կեդրոնը ինքզինք հաստատէ:



99 տարուան պայմանագրութեան ստորագրութիւն 28 Յոկտեմբեր 2022-ին:

Եթէ գործը հարկ ու պատշաճ ձեւով հետապնդուի, պատճառ չկայ չյառաջդիմելու:

Իսի լէ Մուլինոյի եկեղեցւոյ տուեալներով 92-ի շրջանին մէջ (Hauts-de-Seine) 15.000 հայ ընտանիք կ'ապրի, շուրջ 50-60 հազար հոգի: Կը խորհինք, որ անոնցմէ հազար հոգին պիտի կարենանք ներգրաւել մեր ակմբային կեանքէն ներս: Փարիզի հարաւը եւս հայեր կ'ապրին, հայկական գաղութ ունեցող շրջան՝ Ալֆորվիլէն եւս գետնուղիի ուղիղ գիծ պիտի հասնի այս կողմը, ուրեմն կարելիութիւններ կան, հիմնականը լաւ կազմակերպուիլն է:

Մեր կեդրոնը ո՛չ քաղաքական եւ ո՛չ ալ կուսակցական ազդեցութեան ենթակայ է: Բաց է բոլորին, ամէն մարդ կրնայ օգտուիլ անկէ, անշուշտ լրացնելով որոշ պայմաններ, բայց ան Հ.Մ.Ը.Մ-ի միակ ակումբն է, որ հարիւր առ հարիւր անկախ է: Անշուշտ մենք մեր քաղաքական համոզումները ունինք, իբրեւ անդամ եւ միութիւն, սակայն կեդրոնը անով պիտի չառաջնորդուի: Կը հաւատանք, որ այս կեդրոնը պէտք է պատկանի բոլոր համայնքին, առանց քաղաքական գունաւորումի: Ով որ կը փափաքի ու կը յարգէ Հ.Մ.Ը.Մ-ի ծրագիր-կանոնագիրը կեդրոնէն ներս տեղ ունի:

Կեդրոնի ֆիզիքական բաժինին ու ապագայ ծրագիրներուն եւ գործունէութեան մասին կրնա՞ք փոքր անդրադարձ մը կատարել:

- Իսի լէ Մուլինոյի բոլոր կազմակեր-

պութիւններուն հետ կապեր հաստատուած են, գործակցութեան ձեռք մեկնուած եւ շատ լաւ յարաբերութիւններ ստեղծուած են՝ եկեղեցի, դպրոց, մշակութային միութիւններ...: Մշակութային գործունէութիւններ միասնաբար համադրելու ուղիին վրայ կը գտնուինք:


Սկառուութեան համար ունինք չորս սրահներ, որոնք մկրտուած են մահացած վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբայրներու անուններով՝ Գառնիկ Մկրտիչեան, Միհրան Շիմշիրեան, Սուրէն Մուրատեան եւ Կապի Փոստու, նաեւ գործունէութեան համար բակ մը:

Գոյութիւն ունի մարզասրահ՝ ներքին ֆութպոլի, պասքեթպոլի, վոլիպոլի, պատմինթրնի... ուր վեց-եօթը խաղաձեւեր կարելի է կիրարկել:

Ունինք սրահ մը տրամադրուած ժլտոյի, քոնկ ֆուլի, թայչի...

Գործունէութիւններու կարգին են նաեւ՝ եոկա, փիլաթ (pilate), սալա... ումանք շատ լաւ չեն ընթանար, թիւերը դուրսացուցիչ չեն, սակայն կ'ենթադրուի, որ քանի մը ամիս փորձառական շրջան մը պիտի ունենանք գիտնալու թէ մարդիկ ինչի՞ պէտք ունին, կամ ո՞ր մարզը զիրենք կը հետաքրքրէ:

Մշակութային առումով առայժմ սրահ մը պիտի տրամադրուի «Արարատ» պարախումբին: Համազգայինի հետ հայերէն դասընթացներու ծրագիր մը գոյութիւն ունի, նաեւ կը





28 Հոկտեմբեր 2022-ի հանդիպումին ներկայացրած:

մտածենք երեխաներու երգչախումբի մասին, ինչ որ կրնայ միջնորդրտի ստեղծման նպաստել:

Կեղրոնը ունի նաև ճաշարանի բաժին մը: Ան նաև կրնայ օգտակար դառնալ միջնորդրտի ստեղծման, ծանօթացման...:

Առկայ է վարձակալութեամբ գործածուելիք սրահ մը: Տակաւին նոր ենք, պէտք է հետաքրքրուիլն ստեղծենք, մարդիկ լսեն: Նոյնիսկ մեր մօտիկ միջավայրէն անձեր տակաւին կեղրոնը չեն տեսած: Բացման արարողութիւնը առիթ պիտի ըլլայ ծանօթանալու, ճանչնալու կեղրոնը, կարծիք կազմելու, գարմանալու, հիանալու, յուզուելու...:

Տակաւին կան անկատար աշխատանքներ, որոնք այժմ իրենց լրումին հասցնելու ընթացքին մէջ ենք, որմէ ետք, քանի մը ամիս ետք կ'անցնինք այլ մասնամասնութիւններու:

Մարդուժի առումով, բաց մը միշտ ու ամէն տեղ գոյութիւն ունի, բայց շատ լաւ երիտասարդական խաւ մը ունինք, աշխոյժ վարչութիւն մը կը գործէ, ինչպէս նաև՝ Սկաուտ. Խորհուրդը: Լիբանանէն հասած են պատրաստուած ուժեր, որոնք նոր եռանդ կու տան մասնաճիւղին:

Հայ՞ր կ'ընդունուին գործունէութեանց, թէ՞ բոլորին համար բաց է:

- Առաջիկայ միայն հայերը կ'ընդունինք, բայց եթէ հետագայ

յին հայ մը իր հետ օտար բարեկամ մը բերէ, անհատական մարզանքի համար, ու վերջինս փակէ այդ մարզաձեւին տարեկանը, կ'ընդունինք. կարելի չէ մերժել...:

**Միայն քանի մը բառ. ինչպէ՞ս կը սահմանէք այս ծրագիրն ու անոր աւարտը:**

- Քրիստոնէական առաքինութեան մաս կազմող բառերը փոխ առնելով՝ «Հաւատք, Յոյս, Սէր եւ Մկրտութիւն»:

Մենք հաւատացինք, յուսացինք, սիրեցինք գործը եւ մկրտուեցանք այս գործին մէջ ու այս գործով:

- Կամքի ուժ: Ինքզինքին յաղթել մըն էր այս աշխատանքը: Ինքզինքին յաղթելով ամբողջ համայնքին ցոյց տալ նաև Հ.Մ.Ը.Մ-ի էությունը:

- Միասնականութեան ուժ: Շուրջ 500.000 հաշուող համայնքի մը մէջ նման մեծ նրաճումներ գրեթէ չկան, բացի եկեղեցիէն ու քանի մը դպրոցէ:

Մենք կառուցեցինք միասնական ուժով ու... կարծէք

զարմացանք անոր յաջողութեան:

- Հ.Մ.Ը.Մ-էն անդին, գաղութին ծառայող կեղրոն մը ստեղծելու երազն էր, գոր յաջողեցանք իրականացնել:

- Տեսլական ունենալ, միջոցներ ստեղծել եւ կամքի ուժով իրագործել այդ տեսլականը:

**Իսի լէ Մուլինոյի եկեղեցւոյ տուեալներով 92-ի շրջանին մէջ (Hauts-de-Seine) 15.000 հայ ընտանիք կ'ապրի, շուրջ 50-60 հազար հոգի: Կը խորհինք, որ անոնցմէ հազար հոգին պիտի կարենանք ներգրաւել մեր ակմբային կեանքէն ներս: Փարիզի հարաւը եւս հայեր կ'ապրին, հայկական գաղութ ունեցող շրջան՝ Ալֆորվիլէն եւս գետնուղիի ուղիղ գիծ պիտի հասնի այս կողմը, ուրեմն կարելիութիւններ կան, հիմնականը լաւ կազմակերպուիլն է:**





# ՀԱՄԱ-ԱՐՑԱԽԵԱՆ ԵՐՐՈՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ «ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑԵԱԼ, ԳԵՐԵՎԱՐՈՒԱԾ ՆԵՐԿԱՅ ԵՒ ԽՈՍՏՄՆԱԼԻՑ ԱՊԱԳԱՅ» ԲՆԱԲԱՆՈՎ

Բանակող  
ԵՐԵՒԱՆ

**20** Օգոստոս 2025-ին մեկնարկը տրուեց Համա-արցախեան երրորդ բանակմանը՝ Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան»ի անուան բանակավայրում:

Այս բանակումը տարբերում էր մնացածներից, քանզի սա մասնաճիւղի հաշուետուութեան շարունակութիւնն էր. թէ ի՞նչ է արել մասնաճիւղը անցնող երկու տարիների ընթացքում:

Բանակմանը մասնակցեցին Հ.Մ.-Ը.Մ.-ի Արցախի Մեկուսի շրջանի Երեւանի, Արմաւիրի եւ Մասիսի խմբերը:

21 Օգոստոսին տեղի ունեցաւ բանակման բացման պաշտօնական արարողութիւնը: Բանակմանը մասնակցեցին 60 սկաուտներ եւ 30 գայլիկներ: Համա-արցախեան երրորդ բանակման բնաբանն էր «Պատմական անցեալ, գերեվարուած ներկայ եւ խոստմնալից ապագայ»: Բանակումը եւս մէկ անգամ յիշեցուց, որ ունենք անօրինական գերեվարուած հայրենակիցներ: Նրանց վերադարձի համար, ինչու ոչ նաեւ մեր հայրենիք վերադարձի համար մենք պարտաւոր ենք լինել պահանջատէր:

Բանակման մեկնարկից յետոյ ունեցանք բուժօգնութեան դասախօսութիւն: Այդ ստացած գիտելիքները պար-

տաւոր ենք կիրառել բանակման ողջ ընթացքում:

Ունեցանք նաեւ դաստիարակչական խաղ, ինչպէս նաեւ անցկացուեց Scout Squid Game, որի ընթացքում ստեղծուեց մտերմիկ մթնոլորտ, որի միջոցով բանակողները ընկերացան իրարու:

22 Օգոստոսին ունեցանք արչաւ դէպի Ամբերդ ամրոց: Արչաւի ընթացքում ներկայացրինք նաեւ արչաւի տեսակները: Դժուարութիւնները միասին յաղթահարելով խմբերը աւելի մտերմացան իրարու:

23 Օգոստոսին օրը աւելի շատ ուսուցողական էր: Սկաուտներին նախապատրաստում էինք մեր ապագայ ծրագրերին:

Սկաուտները ունեցան գործիքների կիրառութեան վերաբերեալ դասախօսութիւն, դրան յաջորդեց սուլփշով հրահանգների եւ հետախուզական նշանների դասախօսութիւնը:

Ազգային ոգին բարձր պահելու համար բանակման ընթացքում անպակաս եղան հայրենասիրական երգերը, ազգային պարերը եւ մշակութային ներկայացումները:

Մարմինը կոփեցին անցնելով խոչընդոտներով լի ճանապարհով:

«Պատմական անցեալ, գերեվարուած ներկայ, խոստմնալից ապագայ» խորագիրը կրող բանակումը եւս մէկ անգամ եկաւ հաւաստելու, որ նորահաս սերուն-





դը պահանջատէր է եւ ոչինչ մոռացութեան չի տուել:

Բանակումի պաշտօնական փակմանը տեղի ունեցաւ սկաուտներին եւ դայ-լիկներին երգման արարողութիւն, որի ընթացքում՝ ըստ արժանիքների եւ բանակումին ցուցաբերած պատրաստակամութեան, մասնակիցները ստացան Առաջնորդի, Վեցեակապետի եւ Փոխ Առաջնորդի, Փոխ Վեցեակապետի աստիճաններ, իսկ որոշ պատասխանատուներ էլ արժանացան Վարիչ Առաջնորդի աստիճանի: Ինչպէս նաեւ, պատուոգրեր յանձնուեցին լաւագոյն արժանիքներով օժտուած սկաուտներին:

Բանակումի մասնակիցներին ողջոյնի եւ քաջալերանքի խօսքեր հնչեցրին Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ քոյր Սանտրա Վարդանեանը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արցախի



Մեկուսի վարչութեան ատենապետ եղբայր Արմոնտ Թահմասեանը:

Փակման պաշտօնական մասի աւարտին յաջորդեց զեղարուեստական հատուածը, որի ընթացքում.-

- Արինները բեմադրեցին փոքրիկ ներկայացում՝ ցոյց տալով, թէ ի՞նչպէս են ազատագրում Արցախը եւ վերադարձը նուազ իրենց գերեզմարուած ընկերոջը:

- Արեւոյշները հանդէս եկան նագպարով: Պատասխանատուական կազմը նոյնպէս ցուցադրել էր պարային համար:

- Գայլիկները բուրգ, իսկ արծուիկները պար էին նախապատրաստել սիրելի ու պատուարժան հիւրերի համար:

Միջոցառման աւարտին բանակումի մասնակիցները խարոյկի շուրջ հայրենասիրական երգերի ու ազգային պարերի ուղեկցութեամբ ջերմ ու անմիջական ելոյթներ ունեցան:

Փակմանը ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի տարբեր մասնաճիւղերի սկաուտներ, Կենտրոնական Վարչութեան անդամներ, սկաուտների ընտանիքներ եւ այլք:

Իսկ երեկոյան ունեցանք կինոդիտում: Սկաուտները մեծ հաճոյքով նայեցին «Գարեգին Նժդէհ» պատմաուսուցողական ֆիլմը՝ վերլուծելով Գարեգին Նժդէհի կեանքը:

Օրուան վերջում ամփոփեցինք անցնող չորս օրերի ընթացքում կազմակերպուած մրցոյթների արդիւնքները եւ յաղթողներին յանձնեցինք իրենց նուէրները:



**Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԻՖԼԻՍԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ**

Թիֆլիսի Մեկուսի շրջանի 6-րդ անդամական ժողովը կայացաւ 12 Յոկտեմբեր 2025-ին: Ընթացաւարտ վարչութիւնը գեկուցեց կատարած աշխատանքները, ապա ժողովը քննարկեց յառաջիկայ աշխատանքները եւ լսեց ներկայների առաջարկները:

Ժողովի աւարտին ընտրուեց յառաջիկայ մէկամեայ նոր վարչութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի Մեկուսի շրջանի 2025-2026 տարեշրջանի վարչութիւնը բաղկացաւ հետեւալներէն.-

- Ատենապետ- քոյր ԱՃՆԱ Ռամազեան
- Ատենադպիր- քոյր Քրիստինա Մկրտչեան
- Գանձապահ- քոյր Լիզա Երանոսեան
- Խորհրակազմեր- եղբ. Յակոբ Լամազեան եւ քոյր Իա Կախելաշվիլի-Դարսանիա





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ 90-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

### Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

Հովանավորությամբ Հ.Մ.-Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, կազմակերպությամբ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան, Կիրակի, 16 Նոյեմբեր 2025-ի կէսօրէ ետք ժամը 5-ին, «Յակօբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղի 90-ամեակի տօնակատարութիւններու փակման պաշտօնական հանդիսութիւնը:

Նախով կերտել տիպար հայ քաղաքացիներ, որոնք գիտակից են իրենց կոչումին ու պարտականութիւններուն: Ան շեշտեց, որ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղի իւրաքանչիւր անդամ քաջ կը գիտակցի՝ միասնական գործելու անհրաժեշտութեան, վստահութեան, անկեղծութեան, փոխադարձ հասկացողութեան, ծառայութեան կարեւորութեան, աւելցնելով, որ այս գրաւականներու հաւատքով է, որ մասնաճիւղը յառաջդիմած է յաջողութեամբ եւ հասած է մինչեւ 90-ամեակ՝ հարթելով իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները, իր քայլերը ուղղելով դէպի լաւն ու բարին, յոյս եւ ինքնավստահութիւն ներշնչելով կեանքին իմաստը նոր հասկնալ փորձող սերունդին:

Այնուհետեւ գեղարուեստական յայտագիրով սկսուեցին ներկայացուցին երգեր, նուազ, պար, նաեւ ցուցադրուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պուրճ Համուտի մասնաճիւղին անցնող 90 տարիներու գործունէութիւնը ներկայացնող տեսերիզը:

### ԲԱՑՄԱՆ ԽՕՍԿԸ ԵՒ 90-ԱՄԵԱԿԻ ՏԵՍԵՐԻՉԸ

Հ.Մ.-Ը.Մ.Ի շեփորախումբին կատարողութեամբ Լիբանանի, Հայաստանի, Արցախի եւ «Յառաջ նահատակ» քայլերգներու ունկնդրութենէն ետք, բացման խօսքը արտասանեց օրուան հանդիսավար Մարալ Հարպոյեան: Ան դիտել տուաւ, որ տարիներ առաջ ծնունդ առած Հ.Մ.-Ը.Մ.-ը իր առաքելութեան հաւատարիմ՝ շարունակեց իր երթն ու գործունէութիւնը՝ հակառակ տիրող ծանր պայմաններուն, նպատակ ունե-





**ՅՈՐԲԵԼԵԱՐ ՄԱՍՆԱԾԻՂԻ ԱՏՆԵԱՊԵՏԻՆ ԽՕՍԻՐԸ**

Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ֆուատ Մուրատեան իր խօսքին մէջ ղիտել տուաւ, որ պաշտօնական այս հանդիսութեամբ իր աւարտին կը հասնի մասնաճիւղի 90-ամեակի տօնակատարութիւններուն շարքը, սակայն երթը կը շարունակուի, որպէսզի նուիրումի ջանքը, հաւատքի դրօշակը փոխանցուի 100-ամեակի սերունդին: Ան շեշտեց, որ ժամանակները կը փոխուին, դէմքերը կը փոխուին, բայց մասնաճիւղին եւ միութեան նպատակները չեն փոխուիր, կը մնան նոյնը՝ հայ պատանին եւ երիտասարդը մոլորութիւններէ եւ յուր բարքերէ հեռու պահել, տիպար քաղաքացիներ եւ յանձնառու հայեր կերտել:

Եղբ. Մուրատեան շեշտեց, որ 90 տա-

րի մարզական եւ սկստական յաջողութիւններ արձանագրած է Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտը՝ դառնալով սփիւռքահայութեան բաբախող սրտին մայր երակը: Ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ իր անունը կերտած է շնորհիւ հազարաւոր միութենականներու եւ հարիւրաւոր նուիրեալներու, որոնք 90 տարիներու ընթացքին եկած, անցած եւ այս միութեան տուած են իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը՝ ստեղծելով պատմութիւն հսկայական գոհաբերութիւններով, կերտելով վաստակ եւ ապահովելով հռչակ: Շատերը անոնցմէ հիմա մեզի հետ չեն այլեւս, բայց վստահաբար հոգիի աչքերով մեզի կը դիտեն եւ գոհունակութիւն կ'ապրին, որ իրենց գործը շարունակողներ եւ զիրենք յիշողներ կան, նաեւ հիմա խիղճի հանգստութիւն մը կ'ապրին անոնք՝ տեսնելով, թէ ինչպէ՛ս

իրենց սիրելի մասնաճիւղը ամբողջ տարի մը 90-ամեակը նշեց՝ մարզական մրցաշարքներով, սկստական բանակումով, յուշեր եւ տպաւորութիւններ ներկայացնող տեսերիզներով, մասնաճիւղին պատմութիւնը ներկայացնող գիրքով եւ, տակաւին, իր վաստակաւորները մեծարելով:

Եղբ. Մուրատեան այնուհետեւ թրեկց իրագործուած յաջողութիւններ, նաեւ մասնաճիւղի կազմակերպած նախաձեռնութիւնները՝ նկատել տալով, որ այդ բոլորը կը կատարուին Լիբանանի եւ հայ կեանքի ամէնէն տագնապալի օրերուն, մարդուժի եւ նիւթականի մեծ դժուարութիւններու մէջ, առանց արժանապայել ակումբ եւ հաւաքավայր ունենալու, առանց մարզական դաշտ եւ նիւթականի մնայուն աղբիւր ունենալու: «Հրաշքի պէս բան մըն է, որ կը կատարուի այս մասնաճիւղին մէջ: Հրաշքին գաղտնիքը դուրսը մի՛ փնտռէք: Գաղտնիքը ներսն է, անդամներու դաստիարակութեան եւ հաւատքին մէջն է, անոնց նուիրումին եւ գոհողութեան մէջն է: Հրաշքը կը կոչուի՝ Հ.Մ.Ը.Մ-ական ոգի: Ուր որ Հ.Մ.Ը.Մ-ական այդ ոգին կայ, հրա՛շքը կայ», եզրափակեց եղբ. Ֆուատ Մուրատեան:

**ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ**

Օրուան պատգամը արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եւ «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Եղբայրը կրկնակի տօն նկատեց այդ





օրուան նշումը, որովհետեւ գեղեցիկ գուգադիպուկութեամբ մը 16 Նոյեմբերը նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան տարեդարձն է, իսկ Պուրճ Համուտի մասնաճիւղը նոյն օրը կը նշէ իր հիմնադրութեան 90-ամեակը: Ան դիտել տուաւ, որ թուանշանները այս պարագային ցուցանիչ են փորձառութեան եւ ոչ՝ ծերութեան, հասունութեան եւ ոչ՝ տկարութեան, որովհետեւ հոն, ուր մնալուն շարժում եւ նորութիւն կայ, հոն ծերութիւն չկայ: Այս հաստատումին ապացոյցը 90-ամեակի գեղատիպ գրքոյկն է, ուր ամենայն հարագատութեամբ կ'երեւին մասնաճիւղին յաջորդական վարչութիւններուն եւ յանձնախումբերուն կատարած աշխատանքները:

Եղբ. Աւագեան անդրադարձաւ մասնաճիւղի յաջողութիւններուն, անոր երդիքին տակ կազմաւորուած Հ.Մ.Ը.Մ-ականներուն, որոնք բարձր դիրքերու տիրացած են, շքանշանակիրներ

դարձած, համա-Հ.Մ.Ը.Մ-ական պատասխանատուութիւններ ստանձնած եւ միութեան զանազան շրջաններուն մէջ պատասխանատու դիրքեր նուաճած են: Եղբայր հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի սկստական նուագախումբը սկսած է Պուրճ Համուտի մասնաճիւղով, ԼԵՎԱՄ-ի նախաքայլը հանդիսացող միջ-վարժարանային առաջին խաղերը եւս, 1963-ին, սկսած են նոյն մասնաճիւղով: «Տակաւին, շատ աւելին տուած է Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտը զինք ծնող միութեան եւ ժողովուրդին, անսակարկ ու անշահախնդիր կերպով, նուիրեալ եւ կամաւոր աշխատանքով», նշեց ան:

Եղբ. Աւագեան նկատել տուաւ, որ, թէեւ կարելի է երկար խօսիլ 90-ամեայ Պուրճ Համուտի մասնաճիւղի անցեալին ու վաստակին մասին, սակայն այսօր, շնորհաւորութեան եւ երախտագիտութեան խօսքերէն ետք, օրն է հարց տալու, թէ ո՞ւր ենք մենք, իբրեւ միութիւն

եւ շրջապատ, ի՞նչ կ'ընենք եւ ի՞նչպէս կ'ընենք, որպէսզի պատուաբեր անցեալին վրայ բան մըն ալ մենք աւելցնենք, որպէսզի Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտը զօրանայ, իրմով Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի շրջանը ամրանայ, եւ Լիբանանի շրջանով միութեան համահայկական կառույցը ամէն օր քիչ մը աւելի մեծնայ, զարգանայ եւ յառաջանայ:

Ապա, պատգամաբեր եղբայրը հաստատեց, որ Լիբանանի իր քոյր մասնաճիւղերուն նման, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ եւս կը դիմագրաւէ լուրջ դժուարութիւններ. հայութեան թիւի նօսրացում, տնտեսական սուր տագնապ, քաղաքական եւ ապահովական ցնցումներ, անորոշ ապագայի մտահոգութիւններ եւ ներազգային յուսախաբուութիւններ: Ան նկատել տուաւ, որ դժուար է այսօր Հ.Մ.Ը.Մ-ի գործը, բայց եւ այնպէս, ներքին ու արտաքին պայմանները միշտ ալ նպաստաւոր եղած չեն միութեանական աշխատանքի համար, այնուամենայնիւ:





նախիւ, միշտ ալ գտնուած են Հ.Մ.-Ը.Մ.-ական հաւատքի ու գործի «խենթ»եր, որոնք երթը շարունակած են ի գին մեծ զոհողութիւններու:

«Երբ արդի արհեստագիտութիւնը նոր սերունդը կը հեռացնէ ծնողական, ընկերային եւ ազգային իր շրջանակէն,

երբ համաշխարհայնացած աշխարհը կը քանդէ ազգային ամէն արժէք, կառույց եւ ըմբռնում, երբ մարդկային ազատութիւններու եւ իրաւունքներու անունով մէջտեղ կը նետուին ընկերային տեսակ-տեսակ այլանդակութիւններ, երբ նիւթապաշտ ու մեքենապաշտ աշխարհի

կեղծ արժէքները նորահաս սերունդը կը պարպեն ոգիէ, երազէ եւ ձգտումէ ու երբ մոլորութիւնները, յուրի բարքերը եւ այլասերումը կը թակեն մեր անմիջական մօտիկներուն դռները, իր մթնոլորտը իբրեւ շաղախ ունենալով՝ Հ.Մ.-Ը.Մ.-մասնիկները իրարու կը միացնէ, նորա-





հաս սերունդի ներկայացուցիչները քրվ-քրվի կր բերէ, բոլորին սիրտերը իրարու կը կապէ, կամքերը իրարու կը միացնէ, անհատականութիւնները հաւաքակա-նութեան կը վերածէ», հաստատեց եղբ-Աւագեան եւ վկայեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը ան-վերջ շարժում կը ստեղծէ, կեանք եւ աշ-խուժութիւն սփռող, լաւատեսութիւն եւ յոյս ներշնչող, հայացնող շարժում կը յառաջացնէ, յաղթել կը սորվեցնէ հա-յուն, եւ այս բոլորին գաղտնիքը միու-թեան մէջ եւ միութեան շուրջ եղող տեւական խանդավառութիւնն է», ինչ որ հայ մարդը կը կերպարանափոխէ անոր գոյութեան եւ գոյատեւման ուժ կու տայ, հայ ըլլալու եւ հայ մնալու կո-րով կը ներշնչէ, նաեւ գաղտնիքը միու-թեան նպատակին զիտակցութիւնն է, եւ այդ նպատակին ծառայելու Հ.Մ.Ը.Մ-ա-կաններու մնայուն պատրաստակամու-թիւնն է:

Հոսակ, պատգամը եզրափակելով

եղբ. Աւագեան ըսաւ. «Կա՞յ աւելի մեծ գաղտնիք՝ քան Հ.Մ.Ը.Մ-ի եւ հայու-թեան նպատակներուն միջեւ գոյութիւն ունեցող զուգորդութիւնը: Այն, որ եր-կուքն ալ բնական ձգտումը ունին յաղ-թական ազգ դառնալու, հօր եւ անպար-տելի հայրենիք ունենալու: Ինչ որ մեր օրերու հիմնական պահանջն է: 90-ամ-եակի եւ 107-ամեակի գլխաւոր հրամա-յականն է», ընդգծեց ան (պատգամին ամբողջութիւնը տեսնել էջ 6-8):

**ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ**

Խօսքերէն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ֆուատ Մուրատեան յուշանուէր մը յանձնեց մասնաճիւղի ֆուտպոլի խումբի բարերար Շանթ Շէկ-եանին:

Ապա տեղի ունեցաւ շքանշաններու տուչութիւն: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շըր-ջանային Վարչութեան ատենապետ եղբ.

Վահան Համամճեան Հ.Մ.Ը.Մ-ի «Ծա-ռայութեան» շքանշանով պարգեւատ-րեց մասնաճիւղի վաստակաշատ եղբայր-ներ Պաղտասար Յարութիւնեանը, Բաֆֆի Քէշիշեանը, Կարապետ Աբրա-համեանը (ի բացակայութեան՝ ստացաւ դուստրը), Սեպուհ Թոփալեանը, Գօգօ Քէշիշեանը, Հրայր Ֆերմանեանը եւ Յո-վիկ Պիլէմճեանը:

Այս առիթով Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնա-կան Վարչութեան ատենապետ եղբ. Յա-կոբ Խաչերեան բացատրեց, որ Հ.Մ.-Ը.Մ-ը ունի երեք տեսակ շքանշան.- «Ար-տակարգ», որ կը տրուի Հ.Մ.Ը.Մ-ի յատուկ ծառայութիւն մատուցած անհատներու, որոնք կրնան նոյնիսկ Հ.Մ.Ը.Մ-ական չըլլալ: «Ծառայու-թեան», որ կը տրուի եղբօր մը կամ քրոջ մը ծառայութեան ժամանակաշրջանի համապատասխան: Իսկ գերագոյն շքանշանը «Արժանեաց» շքանշանն է, զոր քիչեր ունին եւ կը տրուի անոնց, որոնք կեանք մը մաշեցուցած են Հ.Մ.-Ը.Մ-ի մէջ եւ առ ի գնահատանք այդ եր-կարամեայ ծառայութեան՝ ստացած են այս շքանշանը:

Եղբ. Խաչերեան հաստատեց, որ շքանշանները ունին իրենց կանոնակար-գը, սակայն յատուկ կարգադրու-թեամբ, Պուրճ Համուտի մասնաճիւղին առաջարկը նկատի ունենալով, Կեդրո-նական Վարչութիւնը որոշեց կանոնա-կարգէն դուրս «Արժանեաց» շքանշանի տուչութիւն կատարել երկու Հ.Մ.-Ը.Մ-ականներու, որոնք իրենց կեանքի կարճ ժամանակամիջոցին ծառայեցին Հ.Մ.Ը.Մ-ին, հայ ազգին, անոր տենչե-րուն, Դատին եւ զիտակից մահով իրենց





Կեանքը զոհաբերեցին վասն հայրենիքի. Սիմոն Եահնիկյան եւ Վիրգէն Զաքարեան, որոնց շքանշանները յանձնուեցան իրենց քոյրերուն:

Ձեռնարկը փակուեցաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Արք. Փանոսեանի «Պահպանիչ»ով:

**ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍ ԵՒ 90-ԱՄԵԱԿԻ ԳԻՐԲ**

Նշենք, որ թատերասրահի մուտքին ցուցադրուած էին Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին հարուստ արխիւները՝ լուսանկարներ, դիմումներ, պետական հաստատագիրներ, նամակներ, Կաղանդի հին ու նոր քարտեր, դրօշակներ, ինչպէս նաեւ՝ մարզական յաջողութիւններու ցուցանիշ հանդիսացող մեծաթիւ բաժակներ:



Այս առիթով նաեւ լոյս տեսաւ «90-ամեայ պատուաբեր երթ» խորագիրով մասնաճիւղի 90 տարիներու գործունէութեան նուիրուած գիրքը, որուն մէջ, մասնաճիւղին պատմականին կողքին, ողջոյնի եւ շնորհաւորութեան գիրքեր յղած են զանազան անձնաւորութիւններ եւ իրենց յուշերը արձանագրած են մասնաճիւղին մէջ գործած Հ.Մ.Ը.Մ.ականներ:

**ՅԵՏ ՄԱՅՈՒ «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆ**

Շուշիի ազատագրման կռիւներուն զոհուած Հ.Մ.Ը.Մ.ական նահատակն է եղբ. Վիգէն Զաքարեան:




Ան ծնած է 1969-ին, Պուրճ Համուտ: Փոքր տարիքին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին, նախ իբրեւ տարագաւոր գայլիկ ու ապա՝ սկաուտ, երէց: Աւելի ուշ, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի հեծելարշաւի խումբին: Միաժամանակ, ան անդամակցած է Յ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան եւ իր մասնակցութիւնը բերած է Լիբանանի քաղաքացիական պատերազմի օրերուն՝ հայահոծ թաղերու ինքնապաշտպանութեան աշխատանքին:

Արցախեան պայքարի կոչին անսալով, Ապրիլ 1992-ին, եղբ. Վիգէն կը մեկնի Հայաստան՝ անցնելու համար Արցախ: Կը մասնակցի Շուշիի ազատագրման հերոսական կռիւներուն եւ կը նահատակուի Լիսազորի բարձունքներուն դիմաց՝ 8 Մայիս 1992-ին: Կը թաղուի Եռաբլուրի նահատակաց պանթէոնը, Երեւան:

Յետ-մահու ան կը պարգևատրուի Լ.Ղ.Հանրապետութեան «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով եւ «Արիութեան համար» մետալով:

**ՅԵՏ ՄԱՅՈՒ «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ՍԻՄՈՆ ԵԱՅՆԻԵԱՆ**

Լիզպոնի հերոսական գործողութեան հինգ անձնագոհ անդամներէն մէկն է եղբ. Սիմոն Եահնիկեան: Լուռ, համեստ, ծառայասէր եւ ընկերասէր Հ.Մ.Ը.Մ.ական մը, որ իր ժողովուրդի արդարութեան ձեռք բերման պայքարի ճամբուն վրայ, 27 Յուլիս 1983-ին, գարուն կեանքը զոհաբերեց Փորթուզալի մայրաքաղաք Լիզպոնի թրքական դեսպանատան գրաման ընթացքին:



Եղբ. Սիմոն Եահնիկեան ծնած է Պէյրութ, 1 Մարտ 1962-ին, հայեցի շունչով եւ գաղափարական մթնոլորտով ընտանիքի մը յարկին տակ: Նախակրթութիւնը ան կը ստանայ Ազգ. Կիլիկեան եւ Այնճարի Յառաջ-Գ. Կիլիկեան վարժարաններուն մէջ, իսկ միջնակարգ եւ երկրորդական կրթութիւնը՝ մինչեւ 10-րդ դասարան, Ազգ. Սուրբ Խանամիրեան եւ Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճներ:

Ուսումը կիսատ ձգելէ ետք ան կը հետեւի արհեստի եւ սորվի ինքնաշարժի նորոգութիւն: Կը սիրէր նուագել: Սրինգը իր անբաժան ընկերն էր:

1980-ականներու սկիզբը, ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի պասքէթպոլի տղոց խումբին եւ հանդէս կու գայ իբրեւ կարգապահ ու պարտաճանաչ մարզիկ:

Կը նահատակուի 21 տարեկանին եւ կը թաղուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ, կողքին Լիզպոնի իր չորս անձնուրաց ընկերներուն՝ Սագո Աբրահամեանին, Վաչէ Տաղլեանին, Սեդրակ Աճէմեանին եւ Արա Քըրճըլեանին:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ 90-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՖՈՒԹՊՈՒԼԻ, ՔՐՈՍ ՔԱՈՒՆԹԻԻ, ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ, ՀԵԾԵԼԱՐՇԱԽԻ, ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԵՒ ՃԱՏՐԱԿԻ ՄՐՑԱՇԱՐՔՆԵՐԸ

## Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

**2** 025-ը յոբելենական տարի մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին համար, որ հիմնադրութեան 90-ամեակը նշեց ձեռնարկներու եւ նախաձեռնութիւններու շարքով մը: Այդ նախաձեռնութիւններու շարքին եղան մարզական վեց մրցաշարքներ՝ նուիրուած 90-ամեակի պանծալի առիթին: Ստորեւ, իրագործուած մրցաշարքները ժամանակագրական կարգով:

### ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Մրցաշարքներուն բացումը կատարուեցաւ ֆուլթայլով: Արդարեւ, Կիրակի, 25 Մայիս 2025-ի, «Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ֆուլթայլի Ակադեմիայի դաշտ»ին վրայ տեղի ունեցաւ 90-ամեակի մրցաշարքը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի եւ Ժրտէյտիի խումբերուն, մեծաթիւ ծնողներու եւ համակիրներու: Ներկայ էր նաեւ ֆուլթայլի Լեռնայի լիբանանի նահանգի ֆետերատիոնի քարտուղար Սայիտ Ապտէլ Սալէք:

Մրցաշարքը սկսաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը-

11 տարեկան եւ վար տարիքային խումբի մրցումներ- Հ.Մ.Ը.Մ. Ժրտէյտի առաջին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս երկրորդ, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ երրորդ:

15 տարեկան եւ վար տարիքային խումբի մրցումներ- Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ յաղթեց Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասին:

Տարիքային խումբերու մրցումներու աւարտին բոլոր մասնակիցները ստացան մետալներ:

Այս դաշտ ներկայացան Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի եւ Անթիլիասի վեթերան մարզիկները, ընկերակցութեամբ զոյգ խումբերու կրասեր մարզիկներուն: Մըրցումը աւարտեցաւ 2-2 հաւասարութեամբ: Փենալթիներով յաղթեց Հ.Մ.՝



ԸՄԻ Անթիլիասի խումբը (4-5 արդիւնքով): Խաղի աւարտին բոլոր մարզիկները ստացան մետալներ:

Վեթեան խումբերու մրցումին կիսուն, ՀՄԸՄ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւնը յուշանուէրներով պատուեց եղբայրներ Վարդան Մաթոսեանը, Գօգօ Մարտիրոսեանը եւ Վաչէ Սարգիսեանը, առ ի երախտագիտութիւն երկար տարիներու իրենց նուիրումին եւ ծառայութեան:



**ՔՐՈՍ ՔԱՈՒՆԹԻԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ**  
Երկու շաբաթ ետք, Կիրակի, 8 Յունիսի առաւօտեան, Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տեղի ունեցաւ 90-ամեակի քրոս քաունթիի տարիքային մրցաշարքը, որ երկարեցաւ երեք փլումեթրի վրայ: Մրցումին մասնակցեցան 14 տարեկանէն վար 73 մարզիկ-մարզիկուհիներ:

Վագորդները անցան Պուրճ Համուտի թաղամասերէն, հասան մինչեւ Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակը, ապա նոյն ճամբով վերադարձան քաղաքապետարանի դաշտ: Մրցաշարքի իրաւարարներն էին Շրջանային Վարչութեան ակթիթի յանձնախումբի անդամները, գլխաւորութեամբ քոյր Մարիա Գէորգեանի: Մարզիկ-մարզիկուհիներու ճամբու ապահովութիւնը ստանձնած էին Պուրճ Համուտի քաղաքապետութեան ոստիկանները, որոնց կ'օժանդակէին ՀՄԸՄ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին սկաուտները, ինչպէս նաեւ՝ քաղաքացիական պաշտպանութեան ուժեր:

Ստորեւ, արձանագրուած արդիւնքներուն պատկերը- Մեծ տղաք- առաջին Շարլի-ձօ Թաննուրի, երկրորդ Փի-



թըր-Փօլ Թաննուրի, երրորդ Սերուժ Պէպէճեան: Մեծ աղջիկներ- Ռանա Նապհան, երկրորդ Էսթրելիթա Քէշիշեան, Տեսիլ Քահվէճեան: 14 տարեկանէն վար տղաք- առաջին Նարեկ Տօնապետեան, երկրորդ Սամուէլ Գաբլանեան, երրորդ Աւօ Գալաճեան: 14 տարեկանէն վար աղջիկներ- առաջին Լէա Պէքէրէճեան, երկրորդ Նարօտ Գազէզեան, երրորդ Բալիկ Թնկըրեան:



**ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ**  
Նոյն օրը, նախկին Ազգ- Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի սրահին մէջ տեղի ունեցաւ 90-ամեակի փինկ-փոնկի մրցաշարքը՝ 18 եւ 15 տարեկանէն վար տղոց ու աղջկանց բաժանումներով: Մրցումներուն մասնակցեցան 33 մարզիկներ: Արդիւնքները պարզեցին հետեւեալ պատկերը- 15 տարեկանէն վար տղաք- առաջին Միքայէլ Աղասարգիսեան, երկրորդ Ժինօ Զոսիմօ, երրորդ Կարօտ Կիրակոսեան եւ Քրիստ Արամալի:



15 տարեկանէն վար աղջիկներ- առաջին Լիլա Աղասարգիսեան, երկրորդ Ռիթա Մունջօղլեան, երրորդ Ալիք Աղասարգիսեան եւ Վանա Մունջօղլեան

18 տարեկանէն վար տղաք- առաջին Պաղտիկ Պաղտասարեան, երկրորդ Վեհ-Քրիստ Հարպոյեան, երրորդ՝ Ժորժ Զիֆճեան եւ Անտրիւ Հայայեան:

**ՀԵԾԵԼԱՐՇԱԻՒ ՄՐՑԱՇԱՐՔԸ**

Երկու շաբաթ ետք, Կիրակի, 22 Յունիսի առաւօտեան, Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակէն ընթացք առաւ 90-ամեակի հեծելարշաւի մրցաշարքը, որ երկարեցաւ 1.5 քլմ-ի վրայ, 15 տարեկանէն վեր եւ վար տղոց ու աղջկանց բաժանումներով: Մասնակիցներու շարքին էին 9 տարեկանէն վար երեք մարզիկներ:

Մրցաշարքին ներկայ էր հեծելարշաւի Լիբանանի Ֆետերասիոնի նախագահ եղբ. Հրայր Սէթեան:

Հեծելանորդները անցան Պուրճ Համուտի թաղամասերէն եւ վերադարձան քաղաքապետարանի հրապարակ: Մասնակիցներուն ճամբու ապահովութիւնը ստանձնած էին Պուրճ Համուտի քաղաքապետութեան ոստիկանները: Ներկայ էին նաեւ քաղաքացիական պաշտպանութեան ուժեր:

Մրցաշարքի աւարտին Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին վարչութիւնը յուշանուէրով մը պատուեց եղբ. Սաօ Նալպանտեանը, առ ի զնահատանք երկար տարիներու իր նըւերումին եւ ծառայութեան:

**ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ**

Յաջորդ ժամադրութիւնը պասքեթպոլի մրցաշարքն էր:

Կիրակի, 6 Յուլիսին, 90-ամեակի պասքեթպոլի մրցաշարքը կատարուեցաւ «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահան Համամեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի եւ Անթիլիասի մասնաճիւղերու վարչութիւններուն: Ներկայ էին նաեւ 2024-2025 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ-ի տղոց պասքեթպոլի ներկայացուցչական յանձնախումբի ատենապետ եղբ. Կի Մանուկեան եւ մեծ թիւով համակիրներ:

Առաջին հերթին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վեթերան աղջիկներուն մրցումը ընդդէմ Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրութի մասնաճիւղի վեթերաններուն: Խաղը



աւարտեցաւ ի նպաստ Հ.Մ.Լ.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղին:  
 Երկրորդ մրցումը իրարու դէմ հանեց Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի եւ Պէյրուսի մասնաճիւղերու վեթերան տղոց խումբերը եւ դարձեալ աւարտեցաւ Հ.Մ.Լ.Մ. Պէյրուսի յաղթանակով:

**ՃԱՏՐԱԿԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ**

Մրցաշարքներուն վերջինը՝ ճատրակը տեղի ունեցաւ Կիրակի, 27 Յուլիսին, Նորաշէնի Հ.Յ.Դ. «Ռուբէն» ակումբին մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Պուրճ Համուտի, Անթիլիասի, Պէյրուսի եւ Ժըտէյտի մասնաճիւղերու 8-18 տարեկան 18 երկսեռ մարզիկ-մարզիկուհիներու:

Մրցաշարքը կատարուեցաւ 5 հանգրուանով: Իւրաքանչիւր հանգրուանի աւարտին խաղացողներուն հաւաքած կէտերը գումարուեցան եւ ըստ այնմ ճշդուեցաւ յաջորդ հանգրուան անցնողներուն ինքնութիւնը:

Մրցաշարքներու աւարտին, հարկ է շնորհակալութեան խօսք յայտնել բոլոր իրաւարարներուն եւ գլխաւորաբար Վարդան Մաթոսեանին, Սեպուհ Պապիկեանին (Փուլթպոյ), Մարիա Գէորգեանին (քրոս քառուսթի), Նոէլ Քէշիշեանին

(փինկ-փոնկ), Սագօ Նալպանտեանին (հեծելարչաւ), Էլի Հուլիշեանին, Անդօ Մարտիկեանին, Շարլ Գալուստին եւ Կի Գալուստին (ճատրակ), որոնք մեծ ներդրում ունեցան մրցաշարքներու յաջողութեան մէջ: Շնորհակալութեան խօսք նաեւ բոլոր մրցումները դիմատետրի էջով ուղղակիօրէն լուսաբանած, հարցազրոյցներ վարած եւ խաղերու արդիւնքները ներկայացուցած հաղորդավար Մարալ Հարպոյեանին: Ամբողջ տարուան ընթացքին Հարպոյեան վարեց նաեւ մասնաճիւղի վաստակաւոր եղբայրներու հետ հարցազրոյցներ, որոնք շաբաթական դրութեամբ լոյս տեսան մասնաճիւղին դիմատետրի էջով:

90-ամեակի այդ հարցազրոյցներուն հիւրերը եղան մասնաճիւղի ներկայի եւ անցեալի վաստակաշատ հետեւեալ եղբայրներն ու քոյրերը- Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Ֆէտի-Խաթակ Գազանճեան, Մկրտիչ Մկրտիչեան, Սեդա Պէշեան, Գէորգ Յակոբճեանեան, Անի Ուրֆալեան-Բազրատունի, Սահակ Խաչատուրեան, Աւետիս Տէմիրճեան, Նօթէճ Մկրտիչեան, Լուսին Գազէգեան, Տիգրան Ճինպաշեան, Աթո Մոսիկեան, Յովիկ Պիլէմճեան, Յակոբ Չպլաքեան, Գրիգոր Քէշիշեան եւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Վիգէն Աւագեան:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ 24-ՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

**Հ**ՄԸՄԻ Սուրիոյ շրջանի 24-րդ Ներկայացուցչական Ժողովը գումարուեցաւ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2025-ի առաւօտեան ժամը 10-ին, «Ա. Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին 20 լիազօր ներկայացուցիչներ եւ 5 խորհրդակցական ձայնով մասնակիցներ: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Աւետիս Տէրվիչեան, պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը, Շրջանային Սկստուած խորհուրդի եւ խմբագրութեան, Հայէպի, Դամասկոսի, Լաթիաքիոյ եւ Քեսապի մասնաճիւղերու, Շրջանային Վարչութեան յանձնախումբերու ներկայացուցիչները եւ Ժողովի հրահրեալները:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Օգճեան ողջունեց ներկաները եւ բարի գալուստ մաղթեց անոնց: Ան շնորհակալական խօսք ուղղեց Կեդրոնական Վարչութեան եւ պատկան մարմինին՝ Շրջանային Վարչութեան ծրագիրներուն իրենց ցուցաբերած աջակցութեան համար:

Ժողովի դիւանի ընտրութենէն ետք, ընթերցուեցան մասնաճիւղերու վարչութիւններուն ամփոփ տեղեկագիրները եւ Շրջանային Վարչութեան նիւթաբարոյս-



կան երկամեայ տեղեկագիրը:

Ժողովականներուն այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Ազգարեան եւ իր հայրական օրհնանքը տուաւ ներկաներուն: Ան շեշտեց, որ Սուրիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ը այսօր իր հինգ մասնաճիւղերով ու երկու միաւորներով կը գոյատեւէ շնորհիւ ազգասէր եւ անձնուէր միութենական քոյրերու եւ եղբայրներու: Սրբազան հայրը ուժ եւ կորով մաղթեց ժողովի մասնակիցներուն եւ յաջողութիւն՝ միութեան յառաջիկայ ծրագիրներուն:

Այնուհետեւ քննարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անցնող երկամեակի գործունէութիւնը եւ գնահատուեցան իրագործուած աշխատանքները, ապա առաջարկներ ներկայացուցան յառաջիկայ Շրջանային Վարչութեան:



Պատկան մարմինն ի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան խօսք առելով բարձր գնահատեց մարզական եւ սկաուտական ծիրէն ներս միութեան կատարած աշխատանքը: Ան մաղթեց, որ նորընտիր վարչութիւնը յաճախակի այցելութիւններ կատարէ Տէրիք եւ Հասիչէ՝ մօտէն հետեւելու համար նորակազմ միաւորներու գործունէութիւններուն:

Այնուհետեւ ժողովը ընտրեց յառաջիկայ երկամեայ նստաշրջանի նոր Շրջանային Վարչութիւնը հետեւեալ պատկերով.- եղբ. Մերուն Գահուէճեան, քոյր Անի Մինասեան, եղբ. Տիգրան Պալապանեան, եղբ. Կարօ Ապաճեան, եղբ. Աբիկ Խաչոյեան, եղբ. Կարօ Մահերէճեան, քոյր Լիլիթ Տոլմոյլեան, եղբ. Սազօ Քէ-



չէճեան (Աթաքիա), եղբ. Յակոբ Հանէշեան (Քեսապ), քոյր Անի Սարգիսեան (Գամիշլի) եւ եղբ. Աւօ Աճէմեան (Դամասկոս):

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Աւետիս Տէրվիշեան գնահատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան աշխատանքը եւ շնորհակտեց նորընտիր Վարչութեան անդամները: Ան թելադրեց, որ յառաջիկայ շրջանին զարկ տրուի միութեան քարոզչական աշխատանքներուն՝ արդիական միջոցներով ներկայացնելու համար շրջանին լայնածաւալ գործունէութիւնը:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 107-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՀՈԳԵՀԱՆԳԱՍԵԱՆ ՊԱՇՏՕՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Ազգարեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 30 Նոյեմբեր 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի 107-ամեակին առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի ննջեցեալներու եւ նահատակներու հոգիներուն յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ:

Արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Սուրբոյ անդամ եղբ. Աւետիս Տէրվիշեան, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ական շքանշանակիր երէց եղբայրներ

եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի տարագաւոր սկաուտներ:

Պատարագէն ետք, Սրբազան Հօր նախագահութեամբ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ննջեցեալներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ական նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի շեփորախումբին եւ սկաուտներուն առաջնորդութեամբ ներկաները ուղղուեցան Ազգային գերեզմանատան մէջ գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի դամբարան, ուր Արմէն Աբդ. Գալաճեանի առաջնորդութեամբ աղօթք բարձրացուցին առ Աստուած՝ Հ.Մ.Ը.Մ.ական ննջեցեալներու հոգիներուն խաղաղութեան համար: Ներկաները շեփորախումբին նուագակցութեամբ երգեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգը: Ապա, Արցախեան գոյապայքարի Հ.Մ.Ը.Մ.ական նահատակներու յուշակոթողին դիմաց մոմավառութիւն կատարուեցաւ եւ շեփորախումբը հնչեցուց Արցախի քայլերգը:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՍԻՉԷԻ ՄԻԱՒՈՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԱԾ ՍՐԱՀԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄԸ

Թղթակից  
ՀԱԼԷՊ

**Հ**ովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Արք. Աշգարեանի, նախագահութեամբ Ճէզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեանի, Կիրակի, 23 Նոյեմբեր 2025-ին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հասիչէի միաւորի վերանորոգուած սրահին պաշտօնական բացումը:

Բացման արարողութեան ներկայ էին Գամիշլիի եւ Հասիչէի թաղական խորհուրդներու ներկայացուցիչները, պատկան մարմինը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ քոյր Անի Սարգիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի Վարչութիւնն ու Սկառուտ. խորհուրդը, Հասիչէի միաւորի պատասխանատու կազմը եւ Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր եւ եղբայրներ:

Սրահի մուտքին Գամիշլիի մասնաճիւղին շեփորախումբը ազգային նուազներով դիմաւորեց հիւրերը, ապա կատարուեցաւ վերանորոգուած սրահին բացումը:

Օրուան հանդիսավարն էր քոյր Յողիկ Սարգիսեան: Հայերէն եւ արաբերէն լեզուներով բացման խօսքեր արտասանեցին եղբ. Նարեկ Մարտօ եւ եղբ. Մուրատ Մատարեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան խօսք առնելով շնորհակալութիւններով անդրադարձաւ վերանորոգման կարեւորութիւնը, մատնանշելով, որ այս նախաձեռնութիւնը համայնքի միասնական աշխատանքին արդիւնքն է:

Այնուհետեւ, Ճէզիրէի Առաջնորդական Փոխանորդ Լեւոն Վրդ. Եղիայեանի փոխանցեց իր հայրական օրհնութիւնը: Հայր սուրբը շնորհակարարեց ներկաները սրահի վերանորոգման աւիթով, ապա գնահատեց վերջին երեք տարիներուն Հասիչէի մէջ իրագործուած կազմակերպչական աշխատանքը, զայն նկատելով համայնքի գոյատեւման եւ ազգային հաստատութիւններու կենսունակութեան անբեկանելի գրաւականը:

### ԶՕՐԱԿՑԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՏԵՐԻՔԻ ՄԻԱՒՈՐԻՆ

**Շ**աբաթ, 28 Յուլիս 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչը, Շրջանային Սկառուտ. Խորհուրդին ու խմբապետութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղին վարչութիւնը այցելեցին Տէրիքի միաւոր:

Միաւորի անդամ քոյր Դալար Սարգիսեան բարի գալուստ մաղթեց բոլորին, ապա դայիկները հանդէս եկան ասմունքով եւ ազգային երգերով: Այնուհետեւ, անոնք հետեւեցան Շրջանային Խմբապետ եղբ. Ռաֆֆի Կարապետեանի եւ Շրջանային Խմբապետուհի քոյր Թամար Աւետեանի կողմէ պատրաստուած դաստիարակչական ծրագիրին:

Սուրիոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Նազօ Խաչոյեան մօտէն հետաքրքրուեցաւ միաւորի գործունէութեամբ եւ բարձր գնահատեց անոր աշխատանքները: Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան, իր կարգին, յաջողութիւն մաղթեց միաւորին՝ յառաջիկայի իր ծրագիրներուն մէջ:

Տէրիքի թաղականութեան ատենապետ Սերոբ Սուսանեան յայտնեց, որ միշտ թեւ ու թիկունք են Տէրիքի միաւորին եւ պատրաստ՝ գորավիզ կանգնելու անոր, որպէսզի դայիկներն ու սկառուտները Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին տակ համախմբուած՝ ստանան հայեցի կատարեալ դաստիարակութիւն:

Աւարտին, Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ քոյր Անի Սարգիսեան խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց Շրջանային Սկառուտ. Խորհուրդին եւ բարի երթ մաղթեց Տէրիքի միաւորին:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՔՈՒԷՅԹԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՎԵՐԱՄՈՒՏԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ՔՈՒԷՅԹ

**Ո**ւրբաթ, 17 Հոկտեմբեր 2025-ի առաւօտեան ժամերէն խանդավառ եռուզեռ էր Քուէյթի Ազգային վարժարանին մէջ: Այնտեղ հաւաքուած էին Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի արի-արեւոյշներն ու գալլիկ-արժուիկները՝ 2025-2026 տարեշրջանի բացման պաշտօնական հանդիսութեան:



Ներկաներու շարքին էին Քուէյթի մէջ Հայաստանի դեսպան դոկտ. Արսէն Առաքելեանն ու հիւպատոսը, Թեմի Առաջնորդական Տեղապահ Արտակ Ա. Քհնյ. Քէհեայեան, ազգային մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներ, շքանշանակիրներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ, նախկին խմբապետներ եւ պատասխանատուներ, ծնողներ եւ համակիրներ:

Վարչութեան անունով ներկաներուն բարի գալուստ մաղթեց քոյր Դալար Սարգիսեան-Սումպուլեան: Ապա, քոյր

հրահրեց Արտակ Ա. Քհնյ. Քէհեայեանը դրօշակը օրհնելու: Յաջորդեց դրօշակի արարողութիւն:

Այնուհետեւ, տեղի ունեցան փոխանցման, խոստման եւ երդման արարողութիւններ եւ աստիճանատուուչութիւն:

Կատարուեցան հետեւեալ աստիճանատուուչութիւնները-

- Եղբ. Վարդան Ճուլհայեան- Մեկուսի չըջանի խմբապետ
  - Եղբ. Գէորգ Նալճեան- Միւսուրի խմբապետ
  - Քոյր Ռիթա Տէկիրմէնճեան- Միւսուրի խմբապետուհի
  - Եղբ. Գօգօ Ճարդոյեան- Խմբապետ (Աքելլա)
  - Քոյր Գարէն Աշոտեան- Խմբապետուհի (Աքելլա)
  - Քոյր Հուրի Պալճեան- Խմբապետուհի (Մեսուա)
  - Եղբ. Մելիք Գ. Մելիքսէթեան- Խմբապետ (Փաղանգապետ)
  - Եղբ. Յովիկ Գուզոյեան- Խմբապետ
  - Քոյր Լիլա Զէյթունցեան- Փոխ խմբապետուհի (Փոխ փաղանգապետուհի)
  - Եղբ. Գէորգ Պէրպէրեան- Փոխ խմբապետ
  - Քոյր Նայիրի Պալճեան- Փոխ խմբապետուհի
  - Եղբ. Մելիք Յ. Մելիքսէթեան- Փոխ խմբապետ (Պաղիրա)
  - Քոյր Սելլա Սարգիսեան- Փոխ խմբապետուհի (Պաղիրա)
  - Եղբ. Ալեք Թեմամեան- Փոխ խմբապետ (Պալու)
  - Քոյր Թալիա Ներսէսեան- Փոխ խմբապետուհի (Քաա)
- Սկսուտներու մեծ ոգևորութեամբ եւ վերանորոգուած երգումով հանդիպումը հասաւ աւարտին:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԳԻՂԻ ՆԱԽԿԻՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐՈՒ ԵՒ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԵԼՏԸՆԻ ՄԷՁ, ՆԵՏԸՐԼԵՆՏՆԵՐ



### Անիթա Իշխանեան ՊԱՂՏՍ

**28** Մայիսին 1 Յունիս 2025, Նետորդիստների Տելտըն քաղաքին բանակավայրը հիւրընկալեց Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի նախկին խմբապետներու եւ սկաուտներու «Կրկին սոււրճ» բանակումը, մասնակցութեամբ 5 երկիրներէ (Նետորդիստներ, Գերմանիա, Պելճիքա, Գանատա եւ Մ.Նահանգներ) 32 քոյր-եղբայրներու: Իր տեսակին մէջ աննախընթաց եւ իւրայատուկ այս բանակումը կազմակերպեցին



Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի անցեալի խմբապետներ՝ եղբայրներ Սեւան Իշխանեան, Սեւան Կորկիսեան, Արշամ Ասատուրեան եւ Արազ Աւետիսեան:

Բանակումը նուիրուեցաւ մասնաճիւղի 75-ամեակին եւ նպատակ ունեցաւ վերանորոգել ու թարմացնել անդամներուն եղբայրական կապերն ու յիշատակները, քաջալերելով որ անոնց զաւակները ժամանակ անցընեն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէջ, ինչպէս որ օրին իրենք հասակ աւելն Հ.Մ.Ը.Մ.ի շուքին տակ:

Բանակումի չորս օրուան ընթացքին մասնակիցները ունեցան հարուստ յայտագիր, զոր կարելի է ներկայացնել հետեւեալ ձեւով:-

**Առաջին օր.**- ժամանում եւ հանդիպում բանակավայրին մէջ: Երեկոյեան մասնակցութիւն տեղւոյն Հ.Յ.Դ. կոմիտէին կազմակերպած Մայիս 28-ի խրախուսանքին

**Երկրորդ օր.**- մասնակցութիւն ունի խաղին, որ կազմակերպուած էր Հ.Մ.Ը.Մ.ի Ալմերոյի մասնաճիւղի խմբապետներուն կողմէ, ընդգրկելով հետախուզական նշաններ, մորսի քոտ եւ հարցում-պատասխան:

Միջոյրտը եղաւ ջերմ, մտերմիկ եւ



ոգեչնչող: Բազմազանութեան եւ համերաշխութեան այս հարթակը նոր դռներ բացաւ բարեկամութեան եւ ապագայ համագործակցութեան:

**Երրորդ օր**- նաևով պտոյտ դէպի Կիթհորն գիւղը: Նաեւ տեղի ունեցաւ առցանց հանդիպում մը այն քոյրերուն եւ եղբայրներուն հետ, որոնք զանազան պատճառներով չկարողացան մասնակցիլ բանակումին: Հանդիպումին միացան նախկին ընդհանուր խմբապետներ՝ եղբայրներ Ռազմիկ Աւագեան, Գրիգոր Պաթմանեան, Բաֆֆի Թովմասեան (Պաղտատի մասնաճիւղի ներկայ ատենապետ), խմբապետներ՝ եղբայրներ Վաղինակ Վահանեան, Պերճ Թիւֆէնկճեան, Շանթ Տատուրեան, Բաֆֆի Լուսեան, քոյրեր Սիւզան Պօղոսեան եւ Անիթա Իշխանեան (Պաղտատի մասնաճիւղի ներկայ խմբապետուհի):



Բանակումի աւարտին մասնակիցները իրարու հրաժեշտ տուին շատ գոհ, ոգեւորուած եւ զգացուած, յուսարով որ դարձեալ առիթ կը ստեղծուի քով-քովի գալու, միասնաբար գեղեցիկ յիշատակներ վերապրելու, այս անգամ, ինչու չէ, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի կեդրոնին մէջ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ Ց-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հուլիս  
ԹՈՐՈՆՅՈ

**Ե**րկար տարիներու ընդմիջումէ ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան հովանաւորութեամբ եւ Շրջանային Սկանուտ-Խորհուրդի եւ խմբապետութեան կազմակերպութեամբ, չրջանի միջ-մասնաճիւղային Ց-րդ բանակումը տեղի ունեցաւ «Մէկ չրջան, մէկ բռունցք» կարգախօսով:

Բանակումին ընդհանուր պատասխանատուն էր Շրջանային Ընդհանուր Խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեան, փոխ պատասխանատուներ՝ Շրջանային Խմբապետ եղբ. Ռաֆֆի Դաւիթեան եւ Շրջանային Խմբապետուհի քոյր Կասիա Կարապետեան-Կիւլեան:

Շրջանային Խմբապետները ամիսներու ընթացքին խմբապետական եւ աստիճանաւորական կազմերու հետ կատարեցին առցանց ժողովներ, ծրագրեցին եւ սերտեցին բանակումին աշխատանքները, դասախօսական նիւթերը,

արշաւներն ու պտոյտները եւ իրենց լրումին հասցուցին բանակումին յայտագիրը:

Բանակողները՝ Թորոնթոյի, Մոնթրէլի, Գէմպրիի, Սէնթ Գաթրինգի, Համիլթընի եւ Օթթաուայի մասնաճիւղերէն ժամանած էին բանակավայր եւ կը պատրաստուէին եօթը օրուան անախադէպ բանակում մը կատարել:

Բանակավայրը չրջապատուած էր կանաչապատ վիթխարի ծառերով եւ գե-

ղեցիկ բնութեամբ, իսկ տափարակ ու ընդարձակ դաշտը յարմարաւէտ վայրն էր իրագործելու սկաուտական բոլոր ծրագիրները:

Շուրջ 320 սկաուտներէ եւ խմբապետական ու աստիճանաւորական կազմերէ բաղկացած բանակումը սկիզբ առաւ 3 Օգոստոսին, «Blue Springs camp»-ի մէջ, բոլոր մասնաճիւղերու եւ խմբապետական կազմերու ներկայութեամբ:

Հսկայական կայմը, որ պատկերա-





ցուցած էր միութեան Շուշանածաղիկն ու Վահանը, գերաններով եւ կապերով հմուտ կերպով պատրաստուած, կանգնեցաւ բանակավայրին կեդրոնը, իր շուրջը համախմբելով բանակող քոյրերն ու եղբայրները:

Դրօշակի եւ բացման արարողութեան պահը տպաւորիչ էր. կարգապահ շարքերը, դրօշակներու ծածանումը եւ սկաուտական դրօշակի արարողութեան լրիւ իրագործումը պահ մը մտաբերել տուին, որ աւելի քան մէկ դարու պատմութիւն ունեցող միութիւն մը տակաւին կը շարունակէ իր առաքելութիւնը նոյն կտրովով, թափով եւ եռանդով, շնորհիւ իր նուիրեալ խմբապետներուն:

Խանդավառութիւնն ու աշխուժութիւնը զգալի էին ամէնուրեք: Սկաուտներ խմբակային դրութեամբ բաժնուեցան խումբերու, կատարեցին առաջնահան մարզանքներ, սորվեցան եւ լսեցին սկաուտական եւ ազգային դասախօսութիւններ, մասնակցեցան արշաւներու, պտոյտներու, խաղերու եւ եօթը օրուան ընթացքին պատրաստեցին խարուկահանդէսին աշխատանքները:

«Մէկ շըջան, մէկ բուռնցք» կարգախօսով անոնք մտերմիկ եւ բարեկամական կապեր հաստատեցին իրարու հետ



եւ բերկրանքով կատարեցին իրենց համար պատրաստուած աշխատանքները:

Վրաններու գետեղումը, մասնաճիւղերու խմբակային եւ միացեալ գործունէութիւնները լաւագոյն օրինակն էին ներկայացուած կարգախօսին:

Կիրակի, 10 Օգոստոս 2025-ին տեղի ունեցաւ խարուկահանդէսը, որ սկիզբ առաւ դրօշակի արարողութեամբ եւ խարոյկի բոցավառութեամբ:

Գաւազանով մարզանքը, հայկական պարը, թատրոնն ու ասմունքը բարձր տրամադրութիւն ստեղծեցին ծնողներու մօտ, որոնք կէսօրուան ժամերէն արդէն կը գտնուէին բանակավայր եւ մասնակից էին օրուան յայտագիրին:

Ծնողներ ծափողջոյններով բարձր գնահատեցին խարուկահանդէսը եւ անոր մասնակից բոլոր խմբապետները:

Խարուկահանդէսի աւարտին, բանակումի ընդհանուր պատասխանատուն գնահատեց խմբապետական եւ աստիճանաւորական կազմերուն կատարած աշխատանքները: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ ծնողներուն, որոնք իրենց զաւակները անվերապահօրէն վստահած են Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին:

Բանակողներ բերկրանքով եւ յուզումնախառն զգացումներով ցտեսութիւն մաղթեցին իրարու՝ յաջորդ տարի դարձեալ տեսնուելու յոյսով:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ 48-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

### Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

**Ո**ւրբաթ, 24 Հոկտեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 8.30-ին, Լաւալի Հայ Կեդրոնի «Պարոնեան» սրահին մէջ սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի 48-րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը:

Ժողովը վայելեց ներկայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ քոյր Լիոնի Սարմազեանի, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Քէօսէեանի, ընթացաւարտ Շրջանային Վարչութեան անդամներու, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ներկայացուցիչ եղբ. Ռաֆֆի Խտրլարեանի, Շրջանային Ընդհանուր խմբապետ եղբ. Արուշ Պէրպէրեանի եւ Շրջանային Խմբապետներ՝ եղբ. Ռաֆֆի Դաւիթեանի եւ Քոյր Կասիա Կարապետեան-Կիւլեանի, Շրջանային մարզական յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Ռաֆֆի Հատիտեանի:



Ժողովին հիւրաբար ներկայ եղան Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Հրակ Տարագճեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Մոսիկ Թոփուզեան, Գանատայի Հայոց Թեմի Ազգ. Վարչութիւն ներկայացուցիչ Յակոբ Պուլկարեան, Համագայինի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ Թամար Շահինեան եւ ատենադպիր Անահիտ Պալեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Բրիտտին Հեքիմեան-Աֆարեան, Հ.Յ.Դ. Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Հրակ Գահիէեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբագրական եւ վարչական կազմերու անդամներ՝ քոյր Հուրինա Պէրպէրեան-Վերտանեան եւ եղբ. Տիրան Շահինեան:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի, Թորոնթոյի, Գէմպրիճի, Սէնթ Գաթրինայի, Լաւալի մասնաճիւղերու եւ Համիլթընի միաւորի ներկայացուցիչները:

Շաբաթավերջի երեք օրերուն ընթացքին, օրակարգի համապատասխան կէտերով, ժողովը անդրադարձաւ սկաուտական, մարզական եւ կազմակերպական հարցերու: Քննարկուեցան շրջանի մտահոգութիւններն ու դժուարութիւնները, ինչպէս նաեւ տրուեցան առաջարկներ աւելի աշխուժացնելու մարզական եւ սկաուտական շարքերը: Ժողովը թելադրանքներ կատարեց միջ-մասնաճիւղային եւ միջ-ցամաքամասային մարզախաղերու առնչութեամբ:

Ժողովի դիւանին մաս կազմեցին եղբ. Վիգէն Գէորգեան եւ Տաթև Պէպէճեան՝ նախագահներ, քոյր Զապէլ Թորոսեան եւ եղբ. Տարօն Տէրտէրեան՝ քարտուղարներ: Ժողովի բանաձեւի յանձնախումբին մաս կազմեցին եղբ. Մոսիկ Քարկոցեան, քոյր Արմէնուհի Վարդանեան եւ եղբ. Վրէժ Փամպուլբեան:

(Շարլ. Գ. կողմ)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ 46-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

**Հ**.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 46-րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը սկիզբ առաւ Ուրբաթ, 12 Նոյեմբեր 2025-ի երեկոյեան ժամը 7.30-ին, մասնակցութեամբ 82 լիազօր ներկայացուցիչներու եւ աւելի քան 15 հրաւիրեալներու: Ժողովին մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Աբէլեան եւ Մհեր Դաւիթեան, 47-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ-

ներ՝ դոկտ. եւ տիկին Մայք եւ Եւելինա Սարեաններ եւ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գէորգ Յակոբճեան եւ մասնաճիւղերու լիազօր ներկայացուցիչներ: Ժողովին ընթացքին, ընթացաւրտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան «Հ.Մ.Ը.Մ.Ի վաստակաշատ պաշտօնեայ»ի յուշանուէրը յանձնեց քոյր Ռուբինա Ծանսրդեանին, առ ի երախտագիտութիւն եւ բարձր գնահատանք՝

երկար տարիներ քրոջ նուիրեալ ծառայութեան եւ օրինակելի աշխատանքին:

Շաբաթ, 15 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 46-րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովը շարունակեց իր աշխատանքները «Գէորգ Անտոնեան» սրահին մէջ, նոր եռանդ եւ պատասխանատուութիւն ներշնչելով: Ժողովին ընթացքին կատարուեցան յանձնախումբերու բաժանումները, իսկ զանազան յանձնախումբերու կողմէ պատրաստուած եւ վաւերացուած առաջարկները քննարկուեցան մանրակրկիտ կերպով՝ ընդգրկելով կազմակերպչական, դաստիարակչական, մարզական, սկստակական, «Հրաշք», բանակապարէն մինչեւ Նաւասարդեանի եւ հանրային կապերու մարզերը: Այս համապարփակ քննարկումները նպատակ ունեցան Հ.Մ.Ը.Մ.ը հասցնել նոր բարձունքի՝ իբրեւ աւելի զօրաւոր եւ յառաջդիմած կազմակերպութիւն, որ միշտ կը շարունակէ ծա-





Հ.Մ.Ը.Մ.ի  
Եւմտեան Միացեալ Նահանգ  
անային Ներկայացուցչակա  
Ժողով  
14-16 Նոյեմբեր, 2025



ուայել մեր երիտասարդութեան, մեր համայնքին ու մեր ազգին:

Կիրակի, 16 Նոյեմբեր 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու 46-րդ Շրջանային Ներկայացուցչական եռօրեայ ժողովը հասաւ իր աւարտին:

Ժողովը շաբաթավերջի երեք օրերուն ընթացքին, օրակարգի յստակ կէտերով անդրադարձաւ սկստական, մարզական եւ կազմակերպական հարցերու: Քննարկուեցան մտահոգութիւններ եւ դժուարութիւններ, նաեւ տրուեցան առաջարկներ՝ աւելի եւս աշխուժացնելու մարզական եւ սկստական շարքերը: Շեշտը դրուեցաւ նաեւ շրջանի ներքին կանոնադրի բարեփոխման առաջարկներուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները այս նշանակալի շաբաթավերջին, որ կը զուգադիպէր միութեան հիմնադրութեան 107-ամեակին, բովանդակալից եւ աշխոյժ կերպով գծեցին յաջողող երկու տարիներու նորընտիր Շրջանային Վարչութեան գործունէութեան նախագիծը:

Ներկայացուցչական Ժողովը իր աշխատանքներուն աւարտին ընտրեց 2025-2027 տարեշրջանի Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան նոր կազմը՝ բաղկացած հետեւեալներէն.- եղբայրներ Զարեհ Մովսէսեան, Ռաֆֆի Վարժապետեան, Վիգէն Տաքէսեան, Հրաչ Գալուստեան, Ռազմիկ Լիպարեան, Յարութ Մոմճեան, Արամ Թովմաս, Նովա Բուչերեան, քոյրեր Ալիս Միմոնեան, Սալբի Փօլատեան եւ Շարլին Կէօզալեան:



**Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ**

Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 48-րդ մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը ստանձնեցին տէր եւ տիկին Ճան եւ Սինթիա Անտոնեանները, իսկ «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ա-



կան»ի տիտղոսին արժանացաւ եղբւրջս Վազգէն Գալաճեան:

Նաւասարդեան 48-րդ մարզախաղերը սկսան 10 Մայիս 2025-ին, Birmingham Community Charter High School-ի մարզադաշտին մէջ եւ մրցումները շարունակուեցան ամէն շաբաթավերջ՝ շրջանի զանազան մարզադաշտերուն վրայ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ 48-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԵՒ ՓԱՌԱՏՕՆԸ ՊՍԱԿՈՒԵՑԱՆ ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

Աւանդական փառատօնը կազմակերպւրեցաւ 3-6 Յուլիսին, նոյն վարժարանի շրջափակին մէջ, մասնակցութեամբ շրջանի հայ արուեստագէտներուն եւ մասնաճիւղերու ճաշի կրպակներուն: Առեւտրական կրպակները եւս զարդարեցին ու ճոխացուցին փառատօնը:

5 Յուլիսին տեղի ունեցաւ Նաւասարդեան յաղթանակի տողանցքը՝ բազմաճազար Հ.Մ.Ը.Մ.ականներու, ծնողներու, համակիրներու եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ: Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու խմբապետներու առաջնորդութեամբ, մարզադաշտ ներկայացան եւ պատուոյ հարթակին վրայ իրենց տեղերը գրաւեցին Հիւսիսային Ամերիկայի Արեւ-

մրտեան Թեմի Առաջնորդի ներկայացուցիչ՝ Ռազմիկ Աւագ Քհնյ. Խաչատուրեան, Նաւասարդեան 48-րդ մարզախաղերու պատուոյ նախագահներ տէր եւ տիկին Ճան եւ Սինթիա Անտոնեաններ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Վազգէն Գալաճեան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան:

Տողանցքը առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբը, ապա մուտք գործեցին «Հրաշք» բաժանմունքը, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի «Լոուր» միաւորէն մինչեւ շրջանի հիմնադիր Լոս Անձելլոս մասնաճիւղի սկաւոտական եւ մարզական խումբերը, յանձնախումբերն ու անդամները, իրենց վարչութիւններու գլխաւորութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական բաժանմունքը:



Նաւասարդեան 48-րդ մարզախաղերուն, առաջին անգամ ըլլալով, կազմակերպուեցաւ Navasartian Talent Show, ուր բեմ բարձրացան շրջանին տաղանդաւոր փոքրերն ու մեծերը: Մասնակիցները արժանացան դատական կազմի գնահատանքին, իսկ առաջինէն երրորդ դիրքերը գրաւողները ստացան իրենց մրցանակներն ու պարգևները՝ յատուկ գնահատագիրներով: Այս նախաձեռնութիւնը նոր շունչ եւ ոգեւորութիւն տրւաւ Նաւասարդեանին:

Շրջանային Վարչութիւնը, առ ի գնահատանք այս մեծ ձեռնարկին յաջողութեան, կազմակերպեց երախտագրտական երեկոյ մը, 20 Սեպտեմբեր 2025-ին, Carousel ճաշարանին մէջ: Երեկոյին հրաւիրուեցան մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային Խորհուրդները եւ Նաւասարդեան մարզախաղերու յանձնախումբերը:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ «ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ»Ը ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ, ՅԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅ

Թղթակից  
ԼՈՍ ԱՆՃԵԼՏՍ

**Հ**ՄԸՄԻ Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած Նաւասարդեան 48-րդ մարզախաղերու «Յաղթանակի պարահանդէս»ը, իր «Միասնութեան, յաղթանակի եւ տօնակատարութիւն» նշանաբանով՝ յիշատակե-

լի ձեռնարկ մը հանդիսացաւ գաղութին պատմութեան մէջ: Պարահանդէսը տեղի ունեցաւ 28 Յունիս 2025-ի երեկոյեան, ի մի բերելով ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքը եւ համակիրները, որոնք ամբողջութեամբ լեցուցած էին «Fairmont Century Plaza» պանդոկին շքեղ սրահը:

ՀՄԸՄ-ի սկաուտներուն եւ նուազախումբին կողմէ կատարուած դրօշա-

կի արարողութենէն եւ քայլերգներու կատարումէն ետք, Ռազմիկ Ա. Քհնյ. Նաչատուրեան օրհնեց ներկաները, իսկ ձեռնարկին կազմակերպիչ յանձնախումբի համատեանապես քոյր Սիւզի Շերունեան արտասանեց բարի գալուստի խօսքը:

Այնուհետեւ, ՀՄԸՄ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան ողջունեց ներկաները՝ պաշտօնապէս բացուած նկատելով յայտագիրը եւ դրուատեց Նաւասարդեան 48-րդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ եղբ. Վահագն Թովմասեանի նուիրումը եւ ղեկավարութիւնը:

Պարահանդէսին ընթացքին մեծարեցաւ Նաւասարդեան 48-րդ մարզախաղերու «Տիպար ՀՄԸՄ-ական»՝ Ինընտ Էմփայլրի «Արագ» մասնաճիւղէն եղբ. Վազգէն Գալայճեան: Ան շնորհակալութիւն յայտնեց այս մեծարումին համար, ՀՄԸՄ-ի «Բարձրացի՛ր՝ բարձրացուր» նշանաբանով ծառայելը իրեն համար մեծ պատիւ նկատելով եւ վստահութիւն յայտնելով, որ ՀՄԸՄ-ի





Չահը աւելի թէժ կերպով պիտի շարունակէ լուսաւորել ապագայ սերունդներուն շնորհիւ:

Ապա տեղի ունեցաւ Նաւասարդեան խաղերու նախագահի ժապաւէնին փոխանցումը՝ տէր եւ տիրին Մայք եւ Եւելինա Սարեաններէն տէր եւ տիրին Ճան Եւ Սինթիա Անտոնեաններուն: Այս առիթով Մայք Սարեան յայտնեց, թէ Անտոնեանները «նուիրումի եւ տեսլականի մարմնացում» կը հանդիսանան՝ դրուատելով Հ.Մ.Ը.Մ-ի նկատմամբ անոնց քաջալերող եւ խկական սէրը:

Ճան Անտոնեան հպարտութեամբ եւ համեստութեամբ յայտնեց, թէ ինք եւ Սինթիան մեծ պատիւ կը նկատեն իրենց այս դերը՝ դրուատելով անմնացորդ նուիրումը կամաւորներուն, որոնք կենսական ուժը կը հանդիսանան Նաւասարդեան մարզախաղերուն:

Տօնակատարութեան ընթացքին տեղի ունեցաւ դրամահաւաքի նպատակով



խանդավառ աճուրդ մը, որմէ ետք ներկաները խճողեցին պարասրահը՝ Allen G-ի նուազախումբին երաժշտութեամբ խանդավառուած:

«Ձեռնարկը առիթ մը հանդիսացաւ

տօնելու մեր առաքելութիւնը՝ պահպանել մեր հայկական գեղեցիկ ժառանգութիւնը», ձեռնարկին աւարտին յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Փիէր Մանուկեան:





ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՕՐ ՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ՝

## «Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՁ

Թղթակից  
ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

Ուրբաթ, 24 Հոկտեմբեր 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջաշնային Վարչութիւնը կազմակերպեց «Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան 10-րդ տարեկան տօնակատարութիւնը, որ տեղի ունեցաւ Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ:

Տօնակատարութեան ներկայ էին 550-է աւելի Հ.Մ.Ը.Մ.ականներ, քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, պատուոյ նախագահներ, հովանաւորներ բարեկամներ եւ տպաւորիչ ու կարգապահ շարքերով 150 սկաուտներ՝ միասնաբար դիմաւորելու Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը եւ իրեն ընկերացող շքախումբը:


Վեհափառ Հայրապետին օրհնաբեր ներկայութիւնը յատուկ փայլք մը տուաւ տօնակատարութեան եւ զայն վերածեց պատմական ու անմոռանալի էջի մը՝ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի պատմութեան մէջ:

Տօնակատարութեան ընթացքին, միութենական իրենց երկարամեայ նուիրումին եւ բեղուն վաստակին համար Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշա-



նով պարգեւատրուեցան հետեւեալ քոյրերն ու եղբայրները.- քոյր Վերջին Անսուրեան (Լոս Անճելըսի մասնաճիւղ), քոյր Թամար Քիլիճեան (Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ), եղբ. Կարպիս Գաթարոյեան (Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ), եղբ. Մուրատ Մինասեան (Մոնթեպելլոյի մասնաճիւղ), եղբ. Գէորգ Մանուկեան (Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ), եղբ. Սիւսանթի Աւագեան (Կիւնտէյլի «Արարատ» մասնաճիւղ), եղբ. Արա էքմէքճեան (Օրէնճ

Քաունթի «Սարգարապատ» մասնաճիւղ), եղբ. Ռաֆֆի Սարգիսեան (Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ), եղբ. Ժանօ-Օհաննէս Մազմանեան (Ինլընտ Իմփայրի «Արագ» մասնաճիւղ), եղբ. Վահէ Պարոնեան (Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ), քոյր Թամար Գրոմանուկեան (Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ), եղբ. Հրայր Գրիգորեան (Պրոպէնքի «Սիփան» մասնաճիւղ) եւ քոյր Անի էքմէքճեան (Ուոլնաթ Քրիքի «Կարս» մասնաճիւղ):



Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ-ի «Արտակարգ» պատանշանով պարգեւատրեց Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեանը՝ առ ի գնահատանք իր երկարամեայ նեցուկին եւ նուիրեալ ծառայութեան (Կենսագրական գիծերը տեսնել էջ 98):

Աջակցութեան յուշանուէր ստացաւ քոյր Սիրուն Տէրտէրեանը՝ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան իր ցուցաբերած անսասան նուիրումին եւ շարունակական օժանդակութեան համար:

Այնուհետեւ, Վեհափառ Հայրապետի ձեռամբ տեղի ունեցաւ «Դէպի անկախութիւն» Ազգային Բ. շքանշանի տուչութիւնը՝ ծրագիրը յաջողութեամբ աւարտած 22 սկսողներուն:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենա-



պետ եղբ. Փիէր Մանուկեան: Ան յատկապէս ըսաւ. «Կը տօնենք մեր կազմակերպութեան 107-րդ տարեդարձը, ուր նաեւ կը վայելենք եւ կը պատուըուինք Նորին Սրբութեան ներկայութեամբ:



Վեհափառ Տէր, Ձեր օրհնաբեր ներկայութիւնը մեզի համար մխիթարութիւն ու ներշնչում է: Ձեր վաստակը մեր բոլորին ներշնչանքն է, յատկապէս մեր երիտասարդներուն, որոնք Ձեզմէ կը սորվին ապագային նայիլ հաւատքով եւ ծառայել առանց վարանելու: Աղօթք կ'ուղղենք առ Աստուած, որ Ձեզի շնորհէ երկար, առողջ եւ խաղաղ տարիներ, որպէսզի շարունակէք առաջնորդել մեր ազգն ու եկեղեցին: Կեցցէ՛ Նորին Սրբութիւնը. կեցցէ՛ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Սուրբ Աթոռը. կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ-ի ոգին՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարիք մեր ժողովուրդին»:

Նոյն առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Մհեր Դաւիթեան, որ իր խօսքին մէջ փոխանցեց Կեդրոնական Վարչութեան խրախուսանքը Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերուն եւ բոլոր անդամներուն՝ յառաջ մղելու Հ.Մ.Ը.Մ-ի





առաքելութիւնը միասնաբար, հայրենասիրական ոգիով եւ նոր թափով: Ան ընդգծեց կազմակերպութեան դերը հայ երիտասարդութեան դաստիարակութեան, ազգային ինքնութեան պահպան-

ման եւ համաշխարհային ցանցի ուժեղացման մէջ: Արամ Ա. Վեհափառ իր օրհնութեամբ եւ խրախուսական պատգամով դիմեց ներկաներուն ըսելով:-

### «ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ ՎԱԶԳԷՆ Ա. ՔՀՆՅ. ԱԹՄԱՃԵԱՆ



Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեան ծնած է Պէյրութ, Լիբանան, 1965-ին: Եղած է Սեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի սան: Փոքր տարիքէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին եւ հինգ տարեկանէն սկսեալ յաճախած է ծննդավայրի Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցին, ուր ծառայած է իբրեւ դպիր:

Լիբանանեան բանակի ծառայութեան աւարտին, 1984-ին, ընտանիքով կը փոխադրուի Մ. Նահանգներ եւ կայք կը հաստատէ Կլենտլի մէջ: Կը

յաճախէ Կլենտլի Community College-ը եւ կը հետեւի Ազգային Առաջնորդարանի քահանայական դասընթացներուն:

Այդ շրջանին ան գործօն կերպով կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին: Եղած է Փաստաւիճակի «Ազատամարտ» մասնաճիւղի վարչական անդամ, Նաւասարդեան մարզախաղերու յանձնախումբի անդամ: Մասնակցած է Շրջանային Ներկայացուցչական ժողովներու:

Քահանայ ձեռնադրուած է Հոլիվուտի մէջ: 1993-էն մինչեւ 2000 քահանայագործած է Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ: Այնուհետեւ, մինչեւ հանգստեան կոչուիլը, իբրեւ Աւագ Քահանայ, հովուական իր ծառայութիւնը շարունակած է Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Այս ժամանակամիջոցին վարած է նաեւ ուսուցչական պաշտօն՝ «Ռոզ եւ Ալեքս Փիլիպոս» եւ «Վահան եւ Անուշ Շամլեան» ազգային վարժարաններուն մէջ, դասաւանդելով կրօնի դասեր:

Այդ տարիներուն Վազգէն Ա. Քհնյ. հանդիսացած է Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ազգային Առաջնորդարանի կրօնական կապը: Անոր հոգեւոր ծառայութիւնները ընդգրկած են նաեւ Dignity Health Memorial հիւանդանոցը, ուր նշանակուած է հոգաբարձու, Adventist Health Glendale հիւանդանոցը, ուր գործած է իբրեւ խորհրդատուական կազմի անդամ եւ Կլենտլի քաղաքի ոստիկանատունը, ուր վարած է հոգեւոր խորհրդատուի պաշտօն՝ մխիթարանք եւ աջակցութիւն տրամադրելով կարիքաւորներուն:

Վազգէն Ա. Քհնյ. Աթմաճեան սերտ աջակցութիւն ունեցած է Կլենտլի մէջ գործող հայ թէ օտար կազմակերպութիւններու, միութիւններու եւ հաստատութիւններու հետ եւ իր վարչական ու հոգեւոր լուծման ներդրած է շրջանի ընկերային եւ հոգեւոր կեանքի բարելաման գործին: Անոր համար մեծ ու պզտիկ գործեր չկային, այլ կար միայն ծառայութիւն: Այս գիտակցութեամբ է, որ ան գործած է Կլենտլի շրջանին մէջ եւ իրեն բոլոր դիմողները փորձած է բաւարարել առաւելագոյն չափով:

Վազգէն Ա. Քհնյ. 1988-ին կը պսակուի Անահիտ ճապուրեանի հետ եւ կը բախտաւորուի երկու զաւակով՝ Թամար եւ Շահան, որոնք իրենց հօրը օրինակին հետեւելով մինչեւ այսօր կը ծառայեն Հ.Մ.Ը.Մ.ին:



«Հ.Մ.Ը.Մ.ը էական դպրոց է եւ ո՛չ թէ սոսկ մարմնակրթական միութիւն: Զիշդ է իր արտաքինով ու մեթոտներով մարմնակրթական միութիւն է ան, սակայն իր էութեամբ ու առաքելութեամբ դպրոց է: Հ.Մ.Ը.Մ.ը դպրոց է, որովհետեւ ան յատուկ կարեւորութիւն կուտայ կրօնական ու հայեցի դաստիարակութեան՝ մեր պատանիները թրծելով հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով:

Սփիւռքի մեր կեանքին մէջ, ուր պայմաններու բերումով հայ դպրոց չկար, Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ հայ դպրոց: Նոյնը կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ը այսօր եւս: Իմ հայրապետական թելադրութիւնս է, որ մարզական աշխատանքներէ անդին, Հ.Մ.Ը.Մ.ը յատուկ կարեւորութիւն ընծայէ հայեցի դաստիարակութեան՝ հայուն մէջ հայը կրթելով եւ հայուն ինքնութիւնը բերեղացնելով»:

Արամ Վեհափառ դնահատեց Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերու ղեկավարներուն, սկառուտ պատասխանատուներուն, մարզիչներուն եւ կամաւորներուն նուիրեալ աշխատանքը՝ ընդգծելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը սոսկ կազմակերպութիւն մը չէ, այլ՝ ոգի ներշնչող, դաստիարակող եւ առաջնորդող է:

Երեկոն եզրափակուեցաւ «Կիլիկիա» օրհներգով, որուն հնչիւններուն ներքեւ սրահը լեցուեցաւ հպարտութեամբ եւ միասնութեան ոգիով՝ արտացոլելով այն արժէքները, որոնք կը բնորոշեն Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը եւ ինքնութիւնը:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 33-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՑԱՆ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

### Թղթակից ՇԻՔԱԿՕ

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Նաւասարդեան 33-րդ մարզախաղերը տեղի ունեցան 3-5 Յուլիս 2025-ին, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան եւ հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Շիքակոյի մասնաճիւղին:

Մարզիկները գիշերեցին «Westin Chicago Northwest» պանդոկը, ուր Շիքակո մասնաճիւղի կազմակերպիչ յանձնախումբը ճիշդ չէր խնայած մարզական եւ ընկերային լաւագոյն մթնոլորտը ստեղծելու:

### ՄԱՍՆԱԾԻԴԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Այս մարզախաղերուն կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի 10 մասնաճիւղերէն աւելի քան 250 մարզիկ-մարզուհիներ, որոնք կու գային Ալպընիէն, Պոսթընէն, Շիքակոյէն, Տիքսոնիէն, Ֆլորիտայէն, Մէրի-

մաք Հովիտէն, Նիւ Ճըրզիէն, Նիւ Եորքէն, Փրովիտընսէն եւ Ուաշինկթընէն:

### ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

Մարզախաղերը տեղի ունեցան երկու մարզադաշտի վրայ: Գլխաւոր վայրն էր «Canlan Sports» մարզահամալիրը Barrington, IL-ի մէջ, ուր շրջանի հայրութիւնը մեծ հետաքրքրութեամբ եւ խանդավառ մթնոլորտի մէջ, երեք օր շարունակ հետեւեցաւ Ֆուլթայլի 8, վոլիպոլի 9 եւ պասքեթպոլի 23 խաղերուն, ինչպէս նա-

եւ ճատրակի անհատական 13 խաղերուն եւ 31 մարզիկներու վազքի մրցումներուն: Յիշեալ մարզախաղերը կազմակերպուած էին հետեւեալ դասակարգերով.- ծիլ (9 տարեկան եւ վար), փոքր (10-12 տարեկան), պատանի (13-15), կրտսեր (16-18), երէց (19 եւ վեր) եւ վեթերան (35 եւ վեր) մարզիկ-մարզուհիներու մասնակցութեամբ:

Խաղերը շարունակուեցան ծնողներու եւ բարեկամներու ոգեւորիչ խանդավառութեամբ: Անոնք կը շրջէին դաշտէ





դաշտ, քաջալերելով իրենց մարզիկները, որպէսզի նորանոր յաղթանակներ արձանագրեն իրենց մասնաճիւղերուն համար, առանց անդրադառնալու որ Հ.Մ.Ը.Մ.ի իրենց անդամակցութիւնը ինքնին ամենամեծ յաղթանակն է հայեցի դիմադրիժի պահպանման մեր ճիգերուն մէջ:

**ԽՐԱԽՃԱՆՔ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԻՄՆԵՐ**

Երեկոները կազմակերպիչ յանձնախումբը նախաձեռնեց խրախճանք-պարահանդէսներու, ուր մարզիկները եւ ներկայ հայութիւնը համախմբուեցան եւ եռանդով երգեցին ու պարեցին: Խրախճանքները տեղի ունեցան «Westin Chicago Northwest» պանդոկի սրահներուն մէջ:

Հինգշաբթի, 3 Յուլիսի երեկոյեան, տեղի ունեցաւ խրախճանքի բացման պարահանդէսը, ընկերակցութեամբ DJ Ari-ին, որուն միացաւ երգիչ Թոնի Մարինօ: Անոնք երիտասարդութիւնը խանդավառեցին մինչեւ ուշ երեկոյ:

Ուրբաթ, 4 Յուլիսի երեկոյեան, տեղի ունեցաւ պարահանդէս, մասնակցութեամբ երգչուհի Անուշ Պետրոսեանի եւ Շիքակօյի գաղութէն երգիչ Վալէ Զաքարեանի: Երկու երգիչները իրենց երգերով խանդավառեցին ներկաները:

Շաբաթ, 5 Յուլիսի երեկոյեան, տեղի ունեցաւ յաղթանակի պարահանդէս, մասնակցութեամբ հռչակաւոր երգիչ Յարութ Փամպուլեքեանի եւ իր նուագախումբին, որուն հայրենասէր երգերով ու պարերով, ներկաները խանդա-

վառ պահեր ապրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր, մանաւանդ երբ յեղափոխական երգերը թնդացուցին սրահը: 500-է աւելի ներկաներ մասնակցեցան պարահանդէսին:

Նոյն երեկոյեան տեղի ունեցաւ բաժակներու բաշխում: Ընդհանուր բարձրագոյն կէտեր ապահովող «Ախոյեանի բաժակ»ը ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շիքակօյի մասնաճիւղը, «Լաւագոյն մարզական ոգիի բաժակ»ը ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Եորքի մասնաճիւղը, իսկ «Ամէնէն աւելի բարեբաւուած մասնաճիւղի բաժակ»ը ստացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ուաշինկթընի մասնաճիւղը:

Մարզախաղերու արդիւնքներու լոյսին տակ, մասնաճիւղերու դասակարգման ընդհանուր կէտերու պատկերը պարզեց հետեւեալը:-

1. Շիքակօ 54 կէտ
2. Ֆլորիտա 47 կէտ
3. Ուաշինկթըն 31 կէտ
4. Մերիմաք Հոլիտ 14 կէտ
5. Պոսթըն 12 կէտ
6. Նիւ Եորք 10 կէտ
7. Տիլթոյթ 8 կէտ

**ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ**

Շաբաթ, 5 Յուլիս առաւօտեան ժամը 11-ին, Ֆուլթոնի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Նաւասարդեան 33-րդ մարզախաղերու փակման շքեղ հանդիսութիւնը:

Իսկական վայելք մըն էր ականատես ըլլալ սկաուտներու (երէց, պարմանուհի, արի, արենոյշ, գայլիկ, արծուիկ եւ մոկլիներու) տողանցքին, առաջնորդութեամբ՝ դրօշակակիր սկաուտներու, Շիքակօ մասնաճիւղի չեփորախումբի եւ Շրջանային խմբապետական կազմի: Սկաուտներուն հետեւեցան Շրջանային մարզական յանձնախումբի անդամները եւ յաջորդաբար 10 մասնաճիւղերու մարզիկները, իւրաքանչիւրը պաստառի վրայ ներկայացնելով իր մասնաճիւղը: Այս տպաւորիչ տողանցքին մասնակցեցան 250-է աւելի սկաուտներ եւ մարզիկներ: Օրուան հանդիսավար եղբ. Խաթակ Առաքելեան տեղեկութիւններ տուաւ շրջանի սկաուտական կազմին եւ իւրաքանչիւր մասնաճիւղին մասին: Ան հաշտուեց խօսքերով ներկայացուց հպարտ ու բարձրաճակատ կերպով տողանցող ապագայ սերունդը: Սկաուտական շարքերը եւ մասնաճիւղի մարզիկները



հպարտօրէն տողանցեցին պատուոյ հարթակին առջեւէն, ներկաներուն ջերմ ծափահարութեամբ:

Սկաուտներու եւ մարզիկներու դաշտ մուտքէն ետք, քոյր Արէնի Թոք-մաքճեան մենեդճեց Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները:

Բացման խօսքէն ետք, հանդիսավարը ներկայացուց օրուան պատուոյ հիւրերը՝ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Անուշաւան Արք. Դանիէլեանի ներկայացուցիչ եւ Շիքակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սամուէլ Քհնյ. Աճէմեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի կապ եղբ. Վահէ Թանաշեան, Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Ծովինար Համագործեան, ՀՕՄ-ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սիլվա Փանոսեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան մնացեալ անդամներ, ինչպէս նաեւ մարզական յանձնախումբի եւ Սկաուտական Խորհուրդի անդամներ:

Հանդիսավարը հերթով հրաւիրեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեանը, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Ծովինար Համագործեանը, Կեդրոնական Վարչութեան անդամ Վահէ Թանաշեանը եւ Սրբազան Հօր ներկայացուցիչ Շիքակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ հո-



գեւոր հովիւ Սամուէլ Քհնյ. Աճէմեանը, որպէսզի փոխանցեն իրենց պատգամները:

Խօսք առաւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան եւ բարի գալուստի խօսքէն ետք շնորհաւորեց Շիքակոյի գաղութը, որ համախմբուած ուժերով հաւաքաբար արժանի է յատուկ գնահատանքի: Ան շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ դերը երիտասարդներու հայակերտման մէջ, բարձր պահելով միութենական արժէքները՝ ըլլալ պարտականութեան գիտակից, ազգասէր, հայրենասէր եւ տիպար քաղաքացիներ: Ան նշեց, որ մեր գործը երբեք չի դադարիր: «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանը մեզմէ կը պահանջէ անընդհատ նուիրում, որպէսզի ներկայ հարիւրաւոր մարզիկներն ու սկաուտ-

ները դառնան ապագայի մեր առաջնորդները, միշտ պատրաստ՝ օգտակար դառնալու իրենց ազգին ու հայրենիքին: Եղբայր մեծ շնորհակալութիւն յայտնեց Շրջանային մարզական յանձնախումբին, որուն անդամները անխոնջ կերպով կ'աշխատին բոլոր մասնաճիւղերու հետ, որպէսզի պատրաստեն Նաւասարդեան խաղերուն մարզական բաժինը: Եղբայր շնորհակալութիւն յայտնեց նաեւ բոլոր մասնաճիւղերու վարչութիւններուն եւ յանձնախումբի անդամներուն, որոնց աշխատանքը հիմն է շրջանին բոլոր յաղթանակներուն: Վերջապէս, ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր մարզիկներուն եւ իրենց ընտանիքներուն, որոնց մասնակցութեամբ կարելի է յաջող նկատել այս գեղեցիկ ձեռնարկը: Ան յիշեցուց, որ բոլորը անհամբեր կը սպասեն տեսնելու յառաջիկայ տարուան Նաւասարդեան խաղերը Նիւ Եորքի մէջ:

Ծովինար Համագործեան Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին կողմէ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը եւ հիւրընկալ Շիքակոյի մասնաճիւղը: Ան նշեց, որ այս շաբաթ Հ.Մ.Ը.Մ-ը մեզի ընծայեց յուսալի եւ խանդավառ տեսլական մը, հայապահպանման եւ հայեցի դաստիարակութեան վսեմ առաքելութիւնը: Ապա իր խօսքը շարունակեց յայտնելով, որ մեր երիտասարդներու մէջ հայկականութեան կայծը միշտ վառ պահելով եւ հետեւողական կերպով գործը շարունակելով, այդ կայծը Հ.Մ.Ը.Մ-ը





վերածած է փարոսի, որուն լոյսով մեր երիտասարդները կ'առաջնորդուին դէպի նորանոր բարձունքներ: Եզրափակելով իր պատգամը, Համագործեան ըսաւ. «Մենք կ'ուզենք վստահեցնել մեր ազգին, մեր ժողովուրդին եւ մեր հայրենիքին, որ մենք պիտի պայքարինք մեր գոյատեւման, մեր ազգային արժէքներու պահպանման եւ ապագայ սերունդներու հայեցի դաստիարակութեան համար»: Ան իր խօսքը աւարտեց յաջողութիւն մաղթելով բոլոր ներկաներուն:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան 110 եւ աւելի մասնաճիւղերու եւ 25 հազարէ աւելի անդամներու անունով գոհունակութեամբ ողջունեց Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանի 33-րդ Նաւասարդեան մարզախաղերը: Եղբ. Թանաշեան նշեց, որ դաշտին վրայ կան երեք սերունդներ. -

● Երէջ քոյրեր եւ եղբայրներ՝ այսօրուան մեծ մայրեր եւ մեծ հայրեր, որոնք տարիներով ծառայած են պատրաստելու համար այսպիսի գեղեցիկ ձեռնարկներ:

● Միջին տարիքի անդամներ, այսօր այս խաղերը կազմակերպող վարչականներ, յանձնախումբերու եւ խորհուրդներու անդամներ, ինչպէս նաեւ մարզիչներ, որոնք նախորդ սերունդէն իրենց սորվածները կը ջանան փոխանցել յաջորդ սերունդին:

● Երիտասարդ սերունդը, այսօրուան մարզիկներն ու սկաուտները, որոնց համար կ'աշխատին նախորդ սերունդ-

ները, որպէսզի սորվին Հ.Մ.Ը.Մ-ի արժէքները եւ շարունակեն Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը շալկել դէպի ապագայ:

Այս երեք սերունդերը միացնողը եւ անոնց ուժ տուողը Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարախօսութիւնն է. -

● Ազգային գաղափարախօսութիւն- Հ.Մ.Ը.Մ-ը հայ կը պատրաստէ: Մեր մարզիկները Հայաստան կը դրկենք ո՛չ թէ բաժակներ շահելու, այլ Հ.Մ.Ը.Մ-ի մէջ դաստիարակուելու եւ օրինակելի հայեր դառնալու համար:

● Ընտանեկան միջնորդութիւն- Իրարու քոյր-եղբայր կ'ըսենք, 5 տարեկանէն մինչեւ 95 տարեկան միասին կ'աշխատինք, իրարու կը սիրենք եւ իրարու կը յարգենք:

Եւ վերջապէս,

● Կարգապահութիւն- մեր մարզիկները եւ սկաուտները պէ՛տք է հետեւին միութեան կարգ ու կանոնին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը շարունակէ իր ընթացքը: Առանց կարգապահութեան անկարելի է յառաջդիմել:

Այս է Հ.Մ.Ը.Մ-ի ուժը եւ մեր արժէքները: Հ.Մ.Ը.Մ-ի 107 տարուան պատմութիւնը պիտի երկարի մինչեւ 200 տարիներ եւ անդին:

Վերջին խօսքը արտասանեց Սրբազան Հօր ներկայացուցիչ եւ Շիքակոյի Ամենայն Սրբոց Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սամուէլ քհնյ. Աճէմեանը, որ փոխանցեց Սրբազան Հօր Հայրական բարեմաղթութիւնները եւ շնորհաւորութիւնները Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան, Շիքակոյի մասնաճիւղին, ինչպէս

նաեւ մարզիկներուն եւ սկաուտական շարքերուն: Ան նկատեց, որ այս խաղերուն յիշեց իր մանկութեան խանդավառ միջնորդը եւ շնորհակալութիւն յայտնեց: Քահանայ հայրը նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը պարզ կազմակերպութիւն մը չէ, այլ՝ հայեցի դաստիարակութեան կեդրոն է: Յիշելով միութեան «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը, մարզիկներուն եւ սկաուտներուն շեշտեց, որ իրենք պէ՛տք է իրարու բարձրացնեն, որպէսզի յաջողութիւններ արձանագրեն, այլապէս ուրիշներ մեզի պիտի չբարձրացնեն: Միայն այսպիսով է որ պիտի ունենանք հզօր ազգ: Հայ ժողովուրդը երիտասարդ սերունդին նայելով իր յոյսը կը վերանորոգէ: Իր խօսքին աւարտին, Քահանայ հայրը կատարեց փակման աղօթքը:

**ՀԱՄԱ- Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ**

Այս առիթով յայտարարուեցաւ նաեւ, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ մարզախաղերուն, Հայաստան, շրջանը կը մասնակցի պառքեթպոլի երեք խումբով, վոլիպոլի մէկ խումբով եւ Ֆուլթպոլի մէկ խումբով, բաղկացած՝ 61 մարզիկներէ, 6 մարզիչներէ եւ վարչական երեք ներկայացուցիչներէ, որոնք կ'առաջնորդեն խումբերը: Շրջանի պատուիրակութիւնը կը միանայ աշխարհի չորս ծագերէն ժամանած 700-է աւելի Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկներու:

**ԵԶՐԱՓՈՒՄ**

Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Նաւասարդեան 33-րդ մարզախաղերու աւարտին, յատուկ գնահատանքի արժանի են հիւրընկալ Շիքակոյի մասնաճիւղը եւ Շրջանային մարզական յանձնախումբը, մասնակցող մասնաճիւղերու մարզիկները, սկաուտներն ու համակիրները, որոնք բաժնուեցան վերանորոգուած՝ Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով, մաղթելով որ յառաջիկայ տարի մեծ շուքով եւ նոյն աշխուժութեամբ կը մասնակցին Նաւասարդեան 34-րդ մարզախաղերուն Նիւ Եորքի մէջ, շարունակելով իրենց վսեմ առաքելութիւնը եւ նուաճելով նորանոր յաջողութիւններ՝ ի նպաստ հայ ազգի յաւերժացման:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ 35-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից  
ՄԵՍԵՉՈՒՄԵՑ

**Ա**մէն տարի Հ.Մ.Ը.Մ.Ի Մ. Նահանգներու Արեւելեան շրջանի սկաուտները կը հաւաքուին Շրջանային բանակումին: Այս տարուան բանակումը իւրայատուկ էր, որովհետեւ մէկ շաբթուան ընթացքին մօտ 120 սկաուտներ եղբայրական միջնորդութի մէջ մրցեցան՝ գիտնալու համար, թէ ո՞ր մասնաճիւղը պիտի յաղթէ այս ուղի բանակումը:

Բանակումը տեղի ունեցաւ 11-18 Օգոստոս 2025-ին, New England Base Camp, Milton, Մենսեռուսեց, հիւրընկալութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Պոսթընի մասնաճիւղին: Բանակումին ներկայ էին Պոսթընի, Շիքակոյի, Տիթթոյի, Նիւ ձըրզիի, Փրովիտընսի եւ Ուաշինկթընի մասնաճիւղերը:

Կիրակի երեկոյեան, բոլոր արիներն ու արենոյճները հասած էին բանակավայր, պատրաստ՝ իրենց վրանները լարելու եւ սկսելու բանակումը: Իւրաքանչիւր մասնաճիւղի տրամադրութեամբ էր յատուկ բաժին մը յարդարելու իրենց բանակավայրները, մասնաճիւղին վրանները լարելու եւ շաբթուան իրենց բնակարանը պատրաստելու համար: Բանակումը պաշտօնապէս սկսաւ Երկուշաբթի առաւօտեան ժամը 7-ին: Իւրաքանչիւր սկաուտ պատասխանատու էր ժամը 8-ին պատրաստ ըլլալու վրանի քննութեան համար: Այդ ժամուն այլ մասնաճիւղի խմբապետ մը կու գար իրենց բանակավայրը եւ վրանը կը ստուգէր: Իւրաքանչիւր վրան պէտք էր պատրաստ կանչ մը ունենար, երբ քոյրը կամ եղբայրը իրենց վրանը կը ստու-

գէր, ինչպէս նաեւ անոնք պէտք էր պատասխանէին Հ.Մ.Ը.Մ.Ի խմբապետին մասին երկու հարցումին: Այս հանգրուանը ուղի բանակումին կարճ, բայց կարեւոր բաժինն էր: Որքան բարձր նիշ ստանար վրանը քննութեան ժամանակ, այնքան շատ կէտ կը հաւաքէր իր մասնաճիւղը:

Վրանի ստուգումէն ետք, բոլորը կը հաւաքուէին դաշտ՝ բացման արարողութիւնը կատարելու: Այս ժամանակ է որ բոլորը կը զգային միասնական, հակառակ այն մտքին, որ բոլոր մասնաճիւղերը պէտք էր մրցէին իրարու դէմ: Հիւրընկալ մասնաճիւղին կողմէ պատրաստուած համեղ նախաճաշէն ետք սկաուտները պատրաստ էին սկսելու իրենց օրը:

Առաջին օրը, սկաուտները մեծամասնութեամբ կեդրոնացած էին իրենց բանակավայրին աշտարակը կազմելու, ձեռային աշխատանքի եւ խարուկահանդէսի պատրաստութեան վրայ: Պոսթընի եւ Շիքակոյի մասնաճիւղերը կարողացան նաեւ այս օրը օգտագործել «BB» հրացան եւ աղեղնաձգութիւն: Օրուան ընթացքին Շրջանային Խմբապետուհի քոյր Թինա Պարսումեանը եւ Շրջանային Խմբապետ եղբ. Կարէն Կարապետեանը կը հարցնէին ուղիի յանպատրաստից հարցումներ (Rally Pop Quiz): Իւրաքանչիւր մասնաճիւղ կ'ուղարկէր ներկայացուցիչ մը՝ հարցումներուն պատասխանելու կամ աշխատանք մը կատարելու համար: Երեկոյեան, բոլորը հաւաքուեցան խարոյկին շուրջ, երգելու, հին ընկերներու հետ տեսնուելու եւ նոր ընկերներու ծանօթանալու համար:

Երեքշաբթի օրը սկսաւ նոյն ձեւով, որովհետեւ բոլորին քով յաղթելու կամքը բարձր էր: Բոլորը սկսան աւելի եռան-



դուն աշխատել իրենց բանակավայրը ամբողջացնելու համար, որովհետեւ Շրջանային Սկաուտական Խորհուրդը շուտով պիտի դար եւ զնահատեր իւրաքանչիւր մասնաճիւղին տարածքը: Փրովիտընսի եւ Տիթրոյթի մասնաճիւղերը կարողացան նաեւ այս օրը օգտագործել «BB» հրացան եւ աղեղնաձգութիւն: Պոսթընի մասնաճիւղէն քոյր Սոնիա Ուրֆալեան «Թիփի բորան» երգը սորվեցուց բոլոր սկաուտներուն: Գիշերուան խարուկահանդէսը պատրաստած էր Ուաշինկթընի մասնաճիւղը: Իւրաքանչիւր մասնաճիւղ ստացաւ ցանկ մը, զոր պէտք էր ամբողջացնել իր խարուկահանդէսին ընթացքին եւ նիշը պիտի աւելնար ընդհանուր ռալիի թիւին վրայ:

Բանակումին առաջին երկու օրը իրենց մասնաճիւղերու բանակավայրերը ամբողջացնելէ ետք, Չորեքշաբթի օրը բոլորին համար ժամանակն էր հաւաքուելու: Սկաուտները բաժնըւեցան խումբերու եւ մասնակցեցան զանազան գործունէութիւններու, ինչպէս՝ պարան պատրաստել, կրակ վառել, ժայռ մագլցել, «BB» հրացան գործածել սորվել եւ աղեղնաձգութիւն ընել: Օրուան ընթացքին Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդէն անդամներ պտտեցան բոլոր բանակավայրերը՝ տեսնելու անոնց շինած աշտարակները, մասնաճիւղերու banner-ըօշներն ու ընդհանուր բանակավայրին տարածքը եւ զնահատականներ տուին իւրաքանչիւր մասնաճիւղին՝ իր աշխատանքը ամբողջացնելէ ետք: Ընթրիքի ժամանակ բանակավայր ժամանեցին գայլիկներն ու արծուիկները: Անոնց ներկայութիւնը ստեղծեց հաճելի մթնոլորտ, որովհետեւ անոնք եւս անհամբեր կը սպասէին սկսելու իրենց շաբթուան գործունէութեան: Բանակումին ամբողջ ընթացքին սկաուտներն ու իրենց առաջնորդները միասին մնացին: Դրօշակի արարողութենէն կարճ ժամանակ ետք բոլորը հաւաքուեցան՝ դիտելու Տիթրոյթի մասնաճիւղին աշխոյժ խարուկահանդէսը:

Հինգշաբթի օրը բոլորը ոգեւորուած եւ պատրաստ էին ցուցադրելու իրենց տեղական նահանգները՝ տեղադրելով տաղաւարի օրուան իրենց սեղանները: Իւրաքանչիւր մասնաճիւղ ցուցադրեց այն իրերը, որոնցմով ծանօթ է իրենց քաղաքը, ինչպէս նաեւ՝ նկարներ, խաղեր եւ մրցանակներ: Նոյն օրը կէսօ-

րէ ետքը անցաւ երաժշտութեամբ եւ զուարճանքով, որովհետեւ բոլոր սկաուտները առիթը ունեցան այցելելու իւրաքանչիւր մասնաճիւղի տաղաւարը եւ տեսնելու, թէ ի՞նչ պիտի հրամայեն: Շատ ընելիքներ կային, ինչպէս Ուաշինկթընի անունով «tattoo» ընել, Փրովիտընսի Ֆուլթոնի կոլ նշանակելու փորձ կատարել, Պոսթընէն «Dunkin» ստանալ, Տիթրոյթէն «pop» համատեսել, կամ Նիւ Ճըրզի «Little Italy» այցելել: Բոլոր մասնաճիւղերը շատ ժամանակ անցուցին իրենց սեղանները պատրաստելու բանակումին առաջ եւ ընթացքին: Ճաշէն ետք, Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդէն անդամներ եկան այցելելու իւրաքանչիւր սեղան, հարցումներ հարցուցին եւ զնահատեցին մասնաճիւղին աշխատանքը:

Երեկոյեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Խաթակ Մկրտիչեան երէց սկաուտներուն ներկայացուց Հայաստանի ներկայ վիճակը եւ զանազան կազմակերպութիւններու, ինչպէս՝ Հ.Յ.Դ.ի, հայ եկեղեցիի եւ Սփիւռքի գործունէութիւնը: Գայլիկներն ու արծուիկները կարողացան հանգստանալ, «Մոկլի» ֆիլմը դիտել եւ խաղերու միջոցով իրարու աւելի մօտէն ծանօթանալ:

Գիշերուան փոթորիկն ու անձրեւը արգելք չեղան սկաուտներուն շարունակելու իրենց ծրագիրը: Հինգշաբթի երեկոյեան, «Վկայեալ» կարգ ստացան հետեւեալ հինգ սկաուտները, որոնք անցեալ տարի յաջողութեամբ ամբողջացուցին կարգին ամբողջական ծրագիրը.՝ քոյրեր Նինա Ոսպիկեան (Պոսթըն), Անի Ուրֆալեան (Պոսթըն), եղբայրներ Նարեկ Պասմաճեան (Տիթրոյթ), Շանթ Միհրանեան (Ուաշինկթըն) եւ Արամիկ Ալահպետեան (Ուաշինկթըն):

Այս կարգը բարձրագոյնն է, զոր սկաուտ մը կրնայ ստանալ շրջանէն եւ երկրորդ ամէնէն բարձր մրցանակն է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական ծրագիրին մէջ:

Արդէն Ուրբաթ էր: Շաբաթը կը վերջանար եւ բոլոր մասնաճիւղերուն համար ժամանակն էր փորձել շատ կէտեր հաւաքել: Անոր համար մասնաճիւղերը իրարու դէմ կը մրցէին զանազան խաղերով, ինչպէս՝ պարանի քաշքշուկ, կացինի եւ սղոցի գործածութիւն, կարգ մը կապեր, եւ այլն: Բոլորը կը խրախուսէին իրենց մասնաճիւղերը, որովհետեւ ժամանակն ու հմտութիւնը կարեւոր գործօններ էին յաղթանակի համար: Գայլիկներն ու արծուիկները կարողացան ստեղծել իրենց սեփական բանակավայրերը եւ վայելել ու զովանալ ջրային սահնակներով: Համազգայինի Շրջանային Վարչութեան անդամ եւ նախկին Շրջանային Խմբապետուհի, բժշկուհի քոյր Ալին Պաղտասարեան կլոր սեղանի շուրջ դասախօսութիւն մը տրուաւ՝ նուիրուած հայ մշակույթի եւ լեզուի պահպանման կարեւորութեան, շեշտելով որ անոնք ի՞նչ դեր կը խաղան մեր ապագային համար: Նախորդ երեկոյեան անձրեւին պատճառով նոյն երեկոյեան խարուկահանդէսը ներկայացուցին Պոսթընի, Շիքակոյի, Փրովիտընսի եւ Նիւ Ճըրզիի մասնաճիւղերը: Ժամանակը թուաւ եւ Շաբաթ օրը հասաւ: Սկաուտները

կեղրոնացած կը պատրաստէին իրենց բանակավայրներն ու երեկոյեան խարուկահանդէսը, ինչպէս նաեւ կը պատրաստուէին փակման արարողութեան: Հ.Մ.Լ.Մ-ի բոլոր անդամները, ծնողները, ընտանիքներն ու բարեկամները հրաւիրուած էին բանակավայր՝ փակման արարողութիւնն ու խարուկահանդէսը դիտելու: Բոլորը առիթը ունեցան բանակավայրը պտըտելու՝ նախքան արարողութիւնը սկսիլը:

Արարողութեան ընթացքին խօսքեր արտասանեցին Շրջանային Խմբապետուհի քոյր Թինա Պարսումեան եւ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիգէն Խաչատուրեան: Մրցանակները տուին Շրջանային Խմբապետ եղբ. Կարէն Կարապետեան եւ Շրջանային Սկառտտական Խորհուրդի անդամ եղբ. Ատամ Աբջեան, իսկ Շրջանային Սկառտտական Խորհուրդի ատենապետուհի քոյր Լոռի Փիլիպոսեան փոխանցեց շնորհաւորական խօսք: Վերջին խօսքը արտասանեց Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահէ Թանաշեան:

Փակման արարողութեանէն ետք հիւրերը հրաւիրուեցան ընթրիքի՝ նախքան խարուկահանդէսի սկսիլը: Խարուկահանդէսին ծրագիրը լեցուն էր նախորդ գիշերներու «skit»ներով ու կանչերով, ինչպէս նաեւ՝ նորերով, որովհետեւ բոլոր մասնաճիւղերը միասին մէկ խումբ էին:

Շնորհակալութիւն բոլոր սկառտտներուն, որոնք անձնաւորեցին Հ.Մ.Լ.Մ-ի «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանը: Շնորհակալութիւն խմբապետական կազմին, յատկապէս Շրջանային Խմբապետներուն՝ քոյր Թինա Պարսումեանին եւ եղբ. Կարէն Կարապետեանին, Շրջանային երէց-պարմանուհի փաղանգապետ եղբ. Շանթ Միհրանեանին եւ գոյքապահ-պահակապետ եղբ. Արթուր Արսլանեանին: Շնորհակալութիւն Շրջանային Սկառտտական Խորհուրդի անդամներուն, որոնք անխոնջ աշխատեցան այս բանակումը կազմակերպելու համար: Շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք ներկայ գտնուեցան Հ.Մ.Լ.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի Շաբաթ երեկոյեան խարուկահանդէսին: Յատուկ շնորհակալութիւն Հ.Մ.Լ.Մ-ի Պոսթընի մասնաճիւղին՝ իրենց մեծ աշխատանքին եւ հիւրընկալութեան համար, պատրաստելով 100-է աւելի սկառտտներու օրական ուտելիքը եւ ապահովելով անոնց այլ լեւայլ պէտքերը: Պոսթընի մասնաճիւղի Սկառտտական Խորհուրդի ատենապետ եղբ. Ժիրօ Իսկէնտէրեանը եւ մասնաճիւղի վարչութեան սկառտտականի կապ եղբ. Շանթ Ոսպիկեանը



Կառավարեցին կամաւորներու խումբն ու ժամանակացոյցը, ըլլան անոնք փոխադրութիւն դէպի բանակավայր, ճաշերու պատրաստութիւն եւ այլ անհրաժեշտ պէտքեր: Բոլորին աշխատանքը արժանի է գնահատանքի:

**ՄՐՅԱՆԱԿԱԿԻՐ ՄԱՄՆԱՃԻՂԵՐ**  
2025-ի ռալի բանակումի յաղթական մասնաճիւղ- Տիթրոյթ Լաւագոյն աշտարակ- Տիթրոյթ Լաւագոյն տաղաւար- Պոսթըն Լաւագոյն խարուկահանդէս- Շիքակօ Սկառտտական ոգի- Ուաշինկթըն Բանակավայրի մաքրութիւն եւ տեսք- Տիթրոյթ Խանդավառ մասնաճիւղ- Նիւ Ճըրզի

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿՆԵՐ**  
Տիպար սկառտտ- քոյր Մէրի Մարգարեան (Ուաշինկթըն) Կամաւոր սկառտտ- եղբ Միւռոն Տօնիկեան (Տիթրոյթ) Խանդավառ սկառտտ- եղբ. Ռաֆֆի Աւագեան (Փրոպիտընս)

## ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇՐՋԱՆԱՅԻՆ 35-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԷՆ

Բանակումին իմ սիրած բաժիններէս մէկը այն էր, որ հակառակ ռալի բանակում ըլլալուն, իւրաքանչիւր մասնաճիւղ կը մրցէր միւս մասնաճիւղերուն դէմ, կը զգայի որ ես իմ տունս եմ: Ամբողջ փորձառութիւնը իւրայատուկ էր, որովհետեւ շրջապատուած էինք հայերով, որոնք կրնային նոյն լեզուով խօսիլ եւ սկառտտական նոյն ոգին ունէին: Ես նաեւ իսկապէս զարմացայ, թէ մեր մասնաճիւղը որքան լաւ համախմբու-

ած էր: Մենք աշխատեցանք իմ ակնկալութենէս շատ աւելի, իրարու աջակցեցանք եւ վերջաւորութեան կարողացանք յաղթել ամբողջ ռալի բանակումը: Հիանալի զգացում էր, որ միաժամանակ կային մրցակցութիւն, միասնութիւն եւ հպարտութիւն՝ Հ.Մ.Լ.Մ-ի ընտանիքին մաս կազմելու:

ԵՂԲ. ԴՐՕ ՀԱՄԱԳՈՐԾԵԱՆ (Տիթրոյթ)



**Այս տարուան բանակումին իմ ամենն սիրած մասս մեր մասնաճիւղի թիւի աճն էր, իբրեւ մէկ ընտանիք, բայց աւելի կարեւորը՝ մեր կապերը, գորս մենք ստեղծեցինք մնացեալ մասնաճիւղերուն եւ սկառուտներուն հետ: Արեւելեան շրջանի զանազան նահանգներէն եկած սկառուտներուն հետ եօթը օր անցընելը ստեղծեց անհաւատալի իւրաքայտուկ կապ մը, որ երբեք չի կտրուիր: Թէեւ դժուար էր տունէն հեռու ըլլալ, սակայն հաճելի էր տեսնել, թէ ի՞նչպէս համայնքները միաւորուելով՝ իրենց սէրը ցոյց կու տային Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ: Թէեւ ռալի բանակում էր, այս փորձառութիւնը օգնեց, որ կատարելագործեմ սկառուտական հմտութիւններս, ինչպէս՝ հանգոյցներ կապել, գործիքներ ճիշդ ձեւով գործածել եւ այլ գիտելիքներ, յուսալով որ կրնամ օգտագործել զանոնք ճամպորի ընթացքին:**

**ՔՈՅՐ ԳԱԹԻԱ ՄԻՐԱՇԵԱՆ**  
(Տիթրոյթ)

**Պոսթընի ռալի բանակումին մասին կարծիքս** աներեւակայելի հաճելի եւ հետաքրքրական էր: Միանալով մնացեալ մասնաճիւղերէն եկած ընկերներուն հետ, շաբաթ եղաւ ձեռնարկներով լեցուն եւ իւրաքայտուկ: Ամէն օր զբաղած էինք տարբեր գործունէութիւններով, ինչպէս՝ աղեղնաձգութիւն, «BB gun» հրացան գործածել սորվելով, աշտարակ շինելով եւ շատ աւելին: Շատ աւելի հաճելի էր, որովհետեւ մասնաճիւղերը կը մըրցէին իրարու դէմ: Լաւագոյն բաժիններէն մէկը գիշերային խարուկահանդէսներն էին, ուր իւրաքանչիւր մասնաճիւղ զաւեշտներ կը ներկայացնէր, սկառուտները իրարու կը խրախուսէին եւ առիթը չէին փախցնել կանչել երգելու, որպէսզի տեսնէին թէ ո՞ր մասնաճիւղը ամէնէն բարձր ձայնովն էր: Շաբթուան վերջը հիանալի է տեսնել բոլոր աշտարակները եւ բանակավայրերը: Ընդհանուր առմամբ, բանակումի շաբաթը լաւագոյն շաբաթն էր:

**ՔՈՅՐ ԹԻՖԱՆԻ ԱՐՈՒԵՍՏԵԱՆ**  
(Պոսթըն)

**Անունս Լիանա Իսկէնտէրեան է եւ ես անդամ եմ Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղին:** Շրջանային բանակումէն տպաւորութիւններս եւ փորձառութիւնս հիանալի են: Մասնակիցներուն մրցակցութիւնը, անոնց տարած ծանր աշխատանքը, եւ իւրաքանչիւր մասնաճիւղի ցուցաբերած հայկական հոգին անդամ մը եւս ինծի յիշեցուցին, թէ ինչքան կարեւոր է մաս կազմել Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին եւ ստեղծել մտերմիկ յարաբերութիւններ: Ինծի համար շատ հաճելի էին այն պահերը, երբ մեր մասնաճիւղին աշտարակը կը շինէինք եւ անհամբեր կը սպասէինք տեսնել մնացեալ մասնաճիւղերուն ստեղծագործութիւնները: Երախտապարտ եմ այս կազմակերպութեան, որովհետեւ իւրաքանչիւր մարզի մէջ մեր բերած մասնակցութիւնը՝ ըլլայ սկառուտական թէ մարզական, մեզի օգնեց, որպէսզի աւելի եւս զարգացնենք եւ զօրացնենք մեր արմատները:

**ՔՈՅՐ ԼԻԱՆԱ ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ**  
(Պոսթըն)

**Պոսթընի շրջանային բանակումը երկարատեւ յիշողութիւններ ստեղծեց ո՛չ միայն ինծի, այլեւ՝ ընկերներու համար:** Միայն փայտերով եւ հանգոյցներով շինուած, 15 ոտնաչափ (foot) բարձրութեամբ պահակադիտանոցի (watch-tower) նման աշտարակ կազմելը, իւրաքայտուկ փորձառութեան ամէնէն սիրած բաժինս էր: Արի-արեւոյ ընկերներուն հետ այս աշտարակը շինելը կ'ապացուցէ Հ.Մ.Ը.Մ.ի նշանախօսքը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը, որովհետեւ առանց մեր գիտելիքներուն եւ օգնութեան չէինք կրնար ամբողջացնել զայն: Ես անհամբեր կը սպասեմ ապագային դարձեալ միասին աշխատելու իմ քոյրերու եւ եղբայրներու հետ:

**ԵՂԲ. ՌՈՊԷՐԹ ՔԱՆԱՊԻ ԶՈՒՆԻԸՐ**  
(Նիւ Ճըրզի)

**Շրջանային բանակումին իմ սիրած մասս** զանազան մասնաճիւղերու իմ քոյրերս եւ եղբայրներս տեսնելն էր: Ես ժամանակ անցուցի այն մարդոց հետ, որոնց յաճախ չեմ տեսներ, ինչ որ այս բանակումը շատ հաճելի դարձուց: Ես սորվեցայ նաեւ նոր գիտելիքներ, օրինակ՝ աշտարակ շինել եւ վստահ ըլլալ, որ ան կանգուն է: Իմ առաջնորդներս լաւ հոգ տարին բոլոր սկառուտներուն եւ ուզեցին որ մենք հիանալի ժամանակ անցընենք: Ես 100%-ով կը վերադառնամ բանակում: Ես արդէն կարօտեցր եմ:

**ՔՈՅՐ ԱՆՆԱ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ**  
(Նիւ Ճըրզի)

**Այս տարուան շրջանային բանակումը ինծի համար** տարբեր փորձառութիւն էր, բայց անկասկած՝ լաւ փորձառութիւն: Մեր մասնաճիւղէն միայն 3 սկառուտ ներկայ էինք ռալի բանակումին, սակայն միանալով այլ մասնաճիւղի՝ մենք մեզի զգացինք մեր երկրորդ տան մէջ: Պոսթընի մասնաճիւղը զբրկաբաց ընդունեց մեզ եւ ես երախտապարտ եմ մնացեալ քոյրերը իմ իրական քոյրերս անուանելու համար: Բացի այդ, ես շատ լաւ ժամանակ անցուցի այլ մասնաճիւղերէն եկած իմ մտերիմ ընկերներս տեսնելով եւ միասին պատրաստուելով յաջորդ տարուան բանակումին:

**ՔՈՅՐ ԱՆԻ ՓԱՓԱՋԵԱՆ**  
(Շիքակօ)

Շրջանային բանակումը իսկապէս յիշարժան փորձառութիւն էր: Ես հնարաւորութիւն ունեցայ մտերմանալու Արեւելեան շրջանի իմ քոյրերու եւ եղբայրներու հետ, միասին ստեղծելով իմաստալից նոր փորձառութիւններ: Ինծի ամէնէն շատ տպաւորեց տաղաւարի օրը, երբ բոլոր մասնաճիւղերը հպարտօրէն ներկայացուցին իրենց քաղաքները: Ես կը կարծեմ, որ այս տարուան ուսուցիչ բանակումին ձեւը շատ լաւ էր՝ բացայայտելով իւրաքանչիւր սկաուտի լաւագոյն կողմերը եւ ընդգծելով անոնց մասնաճիւղերուն ուժեղ կողմերը: Ես անհամբեր կը սպասեմ իմ սկաուտ քոյրերս ու եղբայրներս տեսնել 2026-ի ճամպորտին:



**ԵՂԲ. ԱԼԵՔՍԱՆՏՐ ԽՈՃԱՒՅՆԱԴԵԱՆ**  
(Շիքակօ)

Իմ անունս Արամիկ Ալահվերտեան է: Ես վերջին 15 տարիներուն եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ: Տարիներու ընթացքին ես մասնակցած եմ բազմաթիւ բանակումներու, բայց այս տարուան բանակումը վրաս երկարատեւ եւ դրական տպաւորութիւն ձգեց: Իբրեւ Ուաշինկթընի մասնաճիւղի իմբապետ, Շրջանային այս բանակումին իմ սիրած բաժինս այն էր, որ տեսայ, թէ ինչպէս իւրաքանչիւր մասնաճիւղ կը ձգտի կառուցել լաւագոյն աշտարակը: Բանակումին առաջին երեք օրերը յատկացուած էին իւրաքանչիւր մասնաճիւղի՝ իրենց բանակավայրերը պատրաստելու եւ աշտարակ կառուցելու համար: Առաջին երկու օրերէն ետք՝ կ'երեւէին մասնաճիւղերուն զօրաւոր կողմերը եւ ես կրնայի տեսնել, թէ ինչպէս իւրաքանչիւր մասնաճիւղ պատրաստ էր հիանալի աշտարակ ստեղծելու: Ընդհանուր առմամբ մենք ունէինք վեց մեծ աշտարակ՝ մէկը իւրաքանչիւր մասնաճիւղի համար, իսկ միւս գլխաւոր աշտարակը, որ կառուցուած էր իւրաքանչիւր մասնաճիւղի քանի մը սկաուտներու օգնութեամբ: Սակայն, երբ աշտարակը կառուցելու ժամկէտը եկաւ, անոնք ամբողջովին պատրաստ չէին: Ես այս առիթը օգտագործեցի, որպէսզի Ուաշինկթընի սկաուտները օգնեն Շրջանային իմբապետներուն եւ

մնացեալ պատասխանատու սկաուտներուն: Իմ սկաուտներս պատրաստ էին օգնելու. անոնք պարաններ կապեցին, հանգոյցներ ըրին եւ այլ վերջին մանրամասնութիւնները ամբողջացուցին: Անոնց ջանքերով աշտարակը ժամանակին ամբողջացաւ: Թէեւ այս բանակումը պէտք էր մրցոյթ ըլլար, սակայն բոլոր սկաուտներուն միասին աշտարակ շինելու աշխատանքը ցոյց կու տար, թէ որքան միասնական ենք իբրեւ Արեւելեան շրջան: Ես հպարտ եմ մեր աշխատանքով եւ պիտի շարունակենք զայն յառաջիկայ տարուան ճամպորտին ընթացքին: Վստահօրէն կրնամ ըսել, որ Արեւելեան շրջանը պատրաստ է անգամ մը եւս յաղթական աշտարակ մը կառուցելու, ինչպէս 2023-ի ճամպորտին մեր աշտարակը յաղթեց եւ եղաւ լաւագոյն աշտարակը:

**ԵՂԲ. ԱՐԱՄԻԿ ԱԼԱՀՎԵՐՏԵԱՆ**  
(Ուաշինկթըն)

Այս Օգոստոսին ես մասնակցեցայ Արեւելեան շրջանի 35-րդ Շրջանային բանակումին, որ լեցուն էր անմոռանալի փորձառութիւններով: Թէեւ կային բազմաթիւ կարեւոր իրադարձութիւններ, ինչպէս տաղաւարի օր եւ իւրաքանչիւր մասնաճիւղի իւրաքանչիւր խարուկահանդէսներ, իմ սիրած բաժինս Ուաշինկթընի մասնաճիւղի խարուկահանդէսն էր, որովհետեւ մենք շաբթուան առաջին ներկայացումն էինք, մեր սկաուտները վճռականօրէն տրամադրուած էին բարձր մակարդակի ներկայացում կատարելու: Մենք բոլորս շատ աշխատեցանք եւ նոյնիսկ փորձեցինք ժամանակ մեր սխալները աւելի լաւ գաղափարներ յառաջացուցին եւ վերջնական արդիւնքը աւելի լաւ դարձուցին: Ես յատկապէս հպարտ էի արի-արեւոյշներով, որոնց ստեղծագործական կարողութիւնները բացայայտուեցան նոր կանչերու եւ հետաքրքրական գաւեշտներու միջոցով: Ես ուրախ էի նաեւ, որ կարողացայ օգնել կազմակերպելու սահուն ներկայացում մը: Վերջաւորութեան մեր ներկայացումը ինծի յիշեցուց, որ խարոյկը պարզապէս զուարճալի ներկայացում մը չէ, այլ՝ իմբային աշխատանքի, հպարտութեան եւ իբրեւ մասնաճիւղ միասնաբար աշխատելու արտացոլացումն է:

**ՔՈՅՐ ՄԷՐԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ**  
(Ուաշինկթըն)



Շրջանային բանակումի իմ սիրած մասս տաղաւարն էր: Մենք սիրեցինք տեսնել այն բոլոր եզակի ցուցադրութիւնները, որոնք կը ներկայացուէին իւրաքանչիւր մասնաճիւղի կողմէ: Մենք սիրեցինք նաեւ սորվիլ նոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ իւրաքանչիւր նահանգի մասին: Հիանալի էր այցելել իւրաքանչիւր տաղաւար եւ փորձել նոր ուսուցիչներ, որոնք իւրաքանչիւր նահանգի ամէնէն հանրաժանութիւններն էին: Ընդհանուր առմամբ, տաղաւարը հիանալի նոր միջոց էր իւրաքանչիւր մասնաճիւղի մասին իմանալու: Ան պէտք է ներառուի ապագայի բոլոր բանակումներուն մէջ:

**ՔՈՅՐԵՐ ՆԱՏԻԱ ՔԷՇԻՇԵԱՆ**  
**ԵՒ ՍԱՐԻՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ**  
(Փրովիտենս)



# «ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ԿԱՄՔՈՎ ԴԵՊԻ ԱՆՅԱՂԹ ԱՊԱԳԱՅ» (Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻՆ 35-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ)

## Թղթակից ՎԻԵՆՆԱ

Շաբաթ, 24 Մայիս 2025-ի երեկոյան, Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի շրջանի վարչչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր պարահանդէս, որուն նպատակն էր նշել Մայիս 28-ը՝ Հայաստանի Հանրապետութեան առաջին անկախութեան հռչակման տօնը, ինչպէս նաեւ շրջանի հիմնադրութեան 35-ամեակը: Զեւոնարկը համախմբեց մեծաթիւ համակիրներ եւ հիմնադիր սերունդի ներկայացուցիչներ՝ վերաբեւորելու այս պատմական հանգրուանները:

Բացման արարողութիւնը սկսաւ շեփորախումբի կողմէ Հայաստանի, Ար-

ցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգներուն կատարումով: Օրուան պատգամը փոխանցեց Անդրէաս Քհնյ. Իսախանեան: Խօսքեր արտասանեցին քոյր Սիլվիա Պուրճեան եւ եղբ. Յակոբ Սահակեան: Անոնք ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի Մեկուսի շրջանի հիմնադրութեան աշխատանքները եւ անդրադարձան Հայաստանի Հանրապետութեան առաջին անկախութեան ընթացքին եւ պատմական դերակատարութեան:

Շրջանի առաջին ատենապետ եղբ. Աւօ Գուլյումեան համեստ ու հաճելի կերպով ներկայացուց մասնաճիւղի հիմնադրութեան օրերու յիշատակներ եւ պատմութիւններ:

Գեղարուեստական բաժինը ստեղծեց ջերմ ու գունազեղ մթնոլորտ: Եղբ. Ժորժ Իսկէնտէրեանի «Անուն մը կայ



Մայիս 28» խորագիրով ասմունքը տպաւորեց բոլորը, իսկ «Յրագանք» պարախումբին պարային շարքը արժանացաւ բոլոր ծափահարութիւններու:

Ապա, մշակութային հոսքը շարունակուեցաւ երգիչ Վարդան Ղազարեանի երկրթով, որուն ընկերակցեցաւ Տիգրան Յովհաննէսեան՝ հնչեցնելով հայրենասիրական եւ ժողովրդական երգեր, տօնական մթնոլորտին աւելցնելով զգացական ու ոգեղէն շունչ:

Տօնակատարութեան մասնակիցները իրենց ներկայութեամբ եւ ոգեւորութեամբ վերահաստատեցին մասնաճիւղի 35-ամեայ ուղին եւ յանձնառութիւնը՝ շարունակելու երթը «Հաստատակամ կամքով դէպի անյաղթ ապագայ»:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱԼԱՆՍԻ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՄԿԱՌՏՆԵՐՈՒՆ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

### Թղթակից ՎԱԼԱՆՍ

**5** Ապրիլ 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Վալանսի Մեկուսի շրջանի սկաուտները իրենց խոստման արարողութիւնը կատարեցին միութեան տարեկան խրախճանքին ընթացքին:

Մօտ քառասուն սկաուտներ մասնակցեցան բացման արարողութեան, որ տարուան կարեւոր պահերէն մէկը եղաւ: Մեծ պատիւը ունէինք հիւրընկալելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-

թեան անդամ եղբ. Սեւակ Թորոսեանը, որուն ներկայութիւնը եւ աջակցութիւնը գօտեպնդիչ էր:

Մօտ քսան սկաուտներ ստացան իրենց փողկապները եւ վկայագիրները՝ անցնող տարուան ընթացքին իրենց ցուցաբերած նուիրումին եւ անխոնջ աշխատանքին համար:

Խրախճանքին բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի երկարամեայ նախկին ատենապետ, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Պօղոս Տէրտէրեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ ազգի մը ողնայարը երիտասարդութիւնն է, իսկ հայրութեան պարագային Հ.Մ.Ը.Մ. այդ հաստատումին լաւագոյն օրինակն է: Հ.Մ.Ը.Մ. աւելի քան 110 մասնաճիւղերով եւ 25 հազարէ աւելի անդամներով կը գործէ աշխարհի հինգ ցամաքամա-



սերուն մէջ եւ հակառակ հայ ժողովուրդի դիմագրաւած տեսակաւոր մարտահրաւէրներուն եւ տագնապներուն ան միշտ բարձր կը պահէ իր նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»:

Խօսքին աւարտին, եղբ. Տէրտէրեան վկայակոչեց միութեան Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի խօսքերը, արտասանուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին, Հայաստանի մէջ:

Այս առիթով շնորհակալութիւն բերուր անոնց, որոնք աջակցեցան սկաուտական կազմի պատասխանատուններուն: Յատուկ շնորհակալութիւն ծնողներուն, որոնք հպարտօրէն ներկայ եղան իրենց զաւակներու միութեանական կեանքին այս գեղեցիկ պահուն:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՒՆԻԽԻ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ 10-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

### Մեդրիկ Սարգիսեան ՄԻՒՆԻԽ

**Հ**.Մ.Ը.Մ Միւնիքիի Մեկուսի շրջանին համար 31 Մայիս 2025-ը եղաւ յատկանշական թուական, դարձաւ տօն, որովհետեւ մասնաճիւղը այդ օր նշեց իր հիմնադրութեան 10-ամեակը: Յաղթանակի եւ հպարտութեան օր, որուն իրականացման համար երկար աշխատեցան բոլոր անդամները: Հանդիսութեան ներկայ գտնուեցան շրջանի հոգեւոր հովիւ Այգիկ Քհնյ-Յովհաննիսեան, Հ.Յ.Դ. «Վարանդեան» Ա. շրջանի ներկայացուցիչ Խաչիկ Միրոյեան, քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ միութեանականներ:

Հանդիսութիւնը սկսաւ սկառուտներու տողանցքով: Անոնց ոտնաձայները թնդացուցին հանդիսութեան սրահը:

Յաջորդաբար երգուեցան Գերմանիոյ, Հայաստանի, բռնադրաւեալ Արցախի եւ «Ով հայ արի» սկառուտական քայլերգները:

Օրուան հանդիսավարուհի քոյր Մեդրիկ Սարգիսեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալու բարեմասնութեան եւ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ական ըլլալը ամբողջութեամբ ապրելակերպ է, ուր Հ.Մ.Ը.Մ-ականը իր սորված իւրաքանչիւր

յատկութիւնը կը գործադրէ իր առօրեայ կեանքին մէջ: Այնուհետեւ քոյրը հրաւիրեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ռուբէն Նալպանտեանը:

Ատենապետ եղբ. Նալպանտեան անցնող 10 տարիներու գործունէութիւնը եւ յաղթահարուած մարտահրաւէրները բնորոշեց երկու բառով. հպարտութիւն եւ շնորհակալութիւն: Ան նշեց. «Շնորհակալութիւն իւրաքանչիւրիդ, որ եղաք այս միութեան մէկ մասը, որ հաւատացիք Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութեան, ձեր ժամանակը տրամադրեցիք, նիւթական օժանդակութիւն կատարեցիք եւ կամա-

ւոր աշխատանքով օգտակար դարձաք»: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը շէնք չէ, անուն չէ, Հ.Մ.Ը.Մ-ը դո՛ւք էք:

Դիւրին չէ նոր երկրի մը մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ հիմնել: Բայց դուք՝ հիմնադիր անդամներ, ունեցաք այդ քաջութիւնը: Դուք այդ քայլին դիմեցիք ձեր գաւակներուն համար:

Ապա տեսերիդով ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեանի շնորհաւորական խօսքը: Եղբ. Ֆէտին շնորհաւորեց մասնաճիւղը եւ իր հիացումը յայտնեց մասնաճիւղին աշխոյժ գործունէութեան հա-





մար: Այս առիթով ան յայտարարեց Միւնիխի շրջանէն քոյր Շաղիկ Սիսակեանի «Վկայեալ» կարգի, եղբ. Սիմոն Սիմոնեանի՝ «Արարատեան» կարգի մասնակցութեան, իսկ քոյր Մենար Պոյաճեանի Եւրոպայի մասնաճիւղերու վերաորակաւորման յանձնախումբի անդամակցութեան մասին, ինչպէս նաեւ՝ եղբ. Ռուբէն Նալպանտեանի նշանակումը համա-Հ.Մ.Ը.Մ.ական 13-րդ ընդհանուր բանակումի խմբապետ:

Տեսերիզներով իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի այլ անդամներ: Անդրադառնալով մասնաճիւղին կատարած հսկայական եւ ազգանուէր գործունէութեան, անոնք մասնաճիւղին մաղթեցին նորանոր տասնամեակներ:

Շնորհաւորական խօսքերու աւարտին ներկայացուեցան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներու եւ զանազան շրջաններու ատենապետներու պատգամները, տասը տարիներու ընթացքին հաւաքուած



պատմութիւններն ու նկարները ամփոփող տեսերիզ մը:

Ապա հանդիսավարուհին բեմ հրաւիրեց «Վարանդեան» Ա. շրջանի ներկայացուցիչ Խաչիկ Միրոյեանը՝ փոխանցելու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղւոյն մարմինի խօսքը:

Հայապահպանումն ու հայեցի դաստիարակութիւնը գերագոյն նպատակ

ունենալով մասնաճիւղին սկաուտական կազմը պատրաստած էր հայ մշակոյթի բոլոր ճիւղերն ու երանգները ապրեցնող գեղարուեստական յայտագիր մը: Անոնք իրենց ազգային երգերով եւ միասնութեան խորհրդանշական պարով հաստատեցին Սարոյեանի վկայութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի յարկին տակ միանալով հիմնեցին նոր Հայաստան մը օտար ափերու վրայ:

Գեղարուեստական յայտագիրի աւարտին սկաուտները արտասանեցին սկաուտական նշանախօսքեր եւ մեծ ու փոքր իրարու փոխանցեցին ջահ մը, որ կը խորհրդանշէ Հ.Մ.Ը.Մ.ականներու անքակտելի կապը, ուր մեծերը սիրով կը փոխանցեն իրենց գիտելիքներն ու փորձառութիւնները, իսկ փոքրերը հնազանդ կը հետեւին մեծերու քայլերուն:

Հանդիսութեան աւարտին բեմ բարձրացաւ շրջանի հոգեւոր հովիւ Այգիկ Քհնյ. Յովհաննիսեանը եւ նկատի առնելով օտար երկրի մէջ հայկական միութիւն հիմնելու մարտահրաւէրները, ան զուգահեռներ գծեց 1918 թուականի տիրող մթնոլորտին, պայմաններուն եւ անկախութիւն կերտողներուն միջեւ: Քահանայ հայրը Հ.Մ.Ը.Մ.ի Միւնիխի մասնաճիւղին հիմնադիրները նմանցուց 1918-ի քաջերուն եւ շնորհաւորեց գիրենք՝ իրենց յանդուգն քայլին համար: Ան յարատեւ յաջողութիւն մաղթեց միութեան ազգանուէր առաքելութեան:

Հանդիսութիւնը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Յառաջ նահատակ» քայլերգով:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՄԱՍՆԱԳԻՒԻՆ 37-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՆԱԿՈՒՄԸ

### Թղթակից ԼՈՆՏՈՆ

23

27 Յուլիս 2025-ին տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ. Լոնտոնի մասնաճիւղին 37-րդ ընդհանուր բանակումը, նպատակ ունենալով ամրապնդել շրջանի սկաուտական ուժը միջև կապերը եւ սկաուտական հիմքերով գործի դնել «Բարձրացի՛ր՝ բարձրացու՛ր» նշանաբանը:

Սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին բազմաթիւ խմբային խաղերու եւ մրցումներու՝ զարգացնելու համար իրենց համագործակցութեան ոգին եւ սկաուտական գիտելիքները: Բանակումին ընթացքին անոնք սորվեցան կրակ վառել, կացին գործածել, հանգոյցներ կապել, ապաստարան շինել եւ նախնա-

կան օգնութիւն ցուցաբերել: Նաեւ կատարեցին ձեռարկին աշխատանքներ, ինչպէս՝ ծաղկամաններ զարդարել եւ սերմեր ցանել:

Երեկոյեան, բոլոր սկաուտները հաւաքուեցան խորոյկին շուրջ՝ երգելու, պարելու եւ միասին ուրախանալու: Օրուան ընթացքին ունեցան ուստիոժամ, ուր սկաուտները զանազան խաղերու եւ մրցումներու մասնակցեցան եւ հայերէն երգեր լսեցին:



Բանակումին չորրորդ օրը սկաուտներու ծնողները եւ ընտանիքները այցելեցին բանակավայր՝ տեսնելու իրենց զաւակներուն իրականացուցած ծրագիրները եւ մասնակցելու կարգ մը խաղերու: Վերջին օրը կազմակերպուեցաւ ուլի, ուր սկաուտները գործադրեցին բանակումին ընթացքին իրենց սորված հմտութիւնները:

Հ.Մ.Ը.Մ.ի Լոնտոնի սկաուտ պատասխանատուները ամիսներ շարունակ ծրագրեցին եւ պատրաստեցին այս բանակումին յայտագիրները: Երջանը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ անոնց նուիրումին եւ թափած ջանքերուն. անոնց շնորհիւ 37-րդ բանակումը պսակուեցաւ յաջողութեամբ:





## Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ՆՈՒԱԾԵՑ «ՔԷՅՆ»Ի ԲԱԺԱԿԸ

### Թղթակից ԼՈՆՏՈՆ

**Հ**ՄԸՄԻ Լոնտոնի ֆուտպոլի խումբը նուաճեց իր առաջին մրցակցային բաժակը՝ տրամաթիկ 11 մեթրանոց փենալթիներէ ետք:

Սա խմբի երկրորդ հասնիլն էր «Քէյն»ի բաժակի աւարտական: Անցեալ տարի խումբը պարտուեց փենալթիներով, հակառակ գնդակի տիրապետութեան գերիշխանութիւն ունենալուն: Եւ թուում էր, թէ նրանք գնում են եւս մէկ պարտութեան, քանի որ մինչեւ խաղի աւարտից 3 վայրկեան առաջ նրանք գիշում էին 2-1 հաշուով:

Սակայն խաղի հիանալի վերջին վայրկեանները եւ Տէյվիտ Ալեքսանեանի խելացի վազքը նրանց արժանիօրէն հաւասարեցրին հաշիւը՝ խաղի աւարտից ընդամէնը մի քանի վայրկեան առաջ:

Եւ նրանք ամրապնդեցին յաղթանակը 11 մեթրանոց փենալթիներով՝ իրանց նպատակին հասցնելով բոլոր հարւածները՝ ճիշդ հոն, ուր անոնք պարտուած էին ուղիղ մի տարի առաջ:

Տարուան ամենատաք խաղը սկսուեց վատ անակնկալով՝ մրրցակիցը մէկ կրով յառաջ անցաւ առաջին վայրկեանին:

Ջղային մեկնարկէն ցնցուած՝ մեր տղաները արագօրէն իրենք գիւրենք վերագտան եւ 10 վայրկեան անց սկսեցին գերիշխել գնդակին եւ հնարաւորութիւններ ստեղծել:

25-րդ վայրկեանին մենք հակահարուած տրւեցինք՝ հաշիւը դարձնելով 1-1՝ շնորհիւ մեր ամենաերիտասարդ խաղացողներից մէկի՝ Տարէն Մինասեանի հիանալի հմտութեան:

Չնայած շատ աւելի լաւ խումբ լինելուն, մենք չկարողացանք աւարտել խաղը, եւ հաշիւը մնաց 1-1 մինչեւ 80-րդ վայրկեան, երբ մրցակիցը սկսեց ճնշում



գործադրել մեր դարպասի վրայ:

Նրանց յառաջխաղացումը տեղի ունեցաւ 82-րդ վայրկեանին եւ մեր տղաներին դրեց բաժակի եզրափակչում երկրորդ անընդմէջ պարտութեան եզրին:

Սակայն խումբը ուժեղ արձագանգեց եւ յաջորդ 10 վայրկեանների

ընթացքում սկսեց անդադար վտանգել մրցակցի պաշտպանողականը:

Այնուհետեւ Տէյվիտ Ալեքսանեանը տուգանային հարուած ստացաւ՝ խաղի աւարտից ընդամէնը մի քանի վայրկեան առաջ եւ հաւասարեցրեց արդիւնքը:

Նրան յաջորդեցին մեր տղաների եւս չորս անվրէպ փենալթիները, որոնք պահպանեցին իրենց հանգստութիւնը՝ չնայած մօտ 300 հոգուց բաղկացած մեծ եւ աղմկոտ ամբոխին:

Նրանք վերջապէս բարձրացրին բաժակը՝ մասնաճիւղի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով:

Եւ տօնելուց առաջ նրանք բոլորը համաձայնութեան եկան մէկ քանի շուրջ՝ իրենց առաքելութիւնն է դա կրկնել յաջորդ տարի:





# ՄԿԱՌՏՆԵՐ, ԾՈՎԱՀԷՆՆԵՐ ԵՒ ԾՈՎԱՅԻՆ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԱՌՆԱՅԻ ՄԷՁ



## Թղթակից ՎԱՌՆԱ

Հ.Մ.Ը.Մ-ի Փլովտիվի, Ռուսչի եւ Վառնայի սկաուտներուն համար Պուլկարիոյ ծովային մայրաքաղաքը՝ Վառնան երեք օրուան համար դարձաւ ծովային խաղերու եւ արկածախնդրութիւններու բեմ:

Հ.Մ.Ը.Մ-ի Վառնայի մասնաճիւղին հրաւէրով, 19-21 Յուլիս 2025-ին, երեք մասնաճիւղերու սկաուտները ապրեցան անմոռանալի փորձառութեան մը, որ սկիզբ առաւ Վառնայի Ս. Սարգիս հայկական եկեղեցւոյ բակին մէջ՝ Վառնայի խմբապետ եղբ. Մարտիկ Պէյլէրեանի կարճ խօսքով: Տէր Սարգիս եկեղեցւոյ մէջ դիմաւորեց սկաուտները եւ մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշներուն ներքեւ անոնք հաւատարիմ մնան հայկական ասանդութիւններուն:

Օրը պէտք է տաք ըլլար, բայց սկաուտներուն կրքոտ ոգեւորութիւնը աւելին էր, քան արեւուն ջերմութիւնը: Բակ վերադարձած սկաուտները բաժնուեցան չորս խումբի՝ իրենց խմբապետներուն առաջնորդութեամբ մասնակցելով պատմինթընի, վոլիպոլի, արագ առագաստի եւ **թափօրէնի** («Նարդընք լոփտա») մրցումներուն: Խաղերու արդիւնքէն կախում պիտի ունենար, թէ յաջորդ օրը ո՞ր խումբը որքա՞ն ուտելիք պիտի ստանար՝ ամալի ծովափին գոյատեւելու համար: Բացի մկաններ, ճարպիկութիւն եւ տոկունութիւն ցուցաբերելէ,





սկառուները պէտք է ստեղծագործէին եւ ներկայացնէին Արա գեղեցիկի եւ Արշակ արքայի աւանդութիւնները:

Երեկոն աւարտեցաւ երաժշտութեամբ, հայկական պարերով եւ անշուշտ... խորովածով:

Առաւօտեան սկսաւ ծովային մեծ արկածախնդրութիւնը: Վառնայի նաւահանգիստին մէջ մեզի կը սպասէր ծովահէն նաւ մը՝ տանելու համար ամայի ծովափ: Խարխախին մօտ սկառուները փոխադրուեցան փոքր նաւակներ եւ ապահով կերպով հասան ափ: Եւ ահա առաջին անակնկալը. ափին պէտք է ստանային մորսի գաղտնագիր հաղորդագրութիւն մը՝ ուղարկուած ծովուն մէջ գտնուող խմբապետներէն:

Սորս, թաղուած նամակներ, փոսերու մէջ նշումներ փնտռել, պատասպարան պատրաստելու նիւթեր գտնել եւ վերջաւորութեան պատասպարաններ կառուցել. այս բոլորը մաս կը կազմէին «գոյատե-



ւում» խաղին, զոր Վառնայի դեկավարները սրտանց ու երեւակայութեամբ պատրաստած էին իրենց հիւրերուն համար: Խումբերը ստացան իրենց կերակուրը, մարզական խաղերու իրենց արդիւնքներու հիման վրայ, եւ կրնային զայն փոխանակել կամ պահել յաջորդ օրուան համար:

Թէեւ գիշերային հսկողութիւն կար, բայց յաջորդ օր սկառուները առաւօտեան արթուն եւ զուարթ տեսք ունէին, երբ սկսան իրենց արշաւը անտառին մէջ, ապա նաւակներով վերադարձան Վառնայի նաւահանգիստի ապահով ջուրերը:

Չենք գիտեր Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ եղա՞ծ է նման արկածախնդրութիւն: Անտառային արշաւներ եւ լեռնեւորու ճամբարներ շատ տեսած ենք, բայց ամայի ծովափի վրայ գիշերել, ծովահէն նաւով ճամբայ ելլել եւ գոյատեւման խաղ խաղալ՝ չենք լսած որեւէ տեղ աշխարհի մէջ...

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԵՍԹԵՐՈՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ 6-ՐԴ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

### Թղթակից ՎԵՍԹԵՐՈՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Վեսթերոսի Մեկուսի շրջանի անդամական վեցերորդ Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 18 Հոկտեմբեր 2025-ին, քաղաքի «Հ.Մ.Ը.Մ.» սկումբին մէջ:

Ընթացաւարտ վարչութիւնը ժողովին ներկայացուց իր գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, որուն շուրջ տեղի ունեցան լուսաբանական հարցումներ եւ ըստ էութեան քննարկումներ: Ժողովը իր գնահատականը տուաւ ընթացաւարտ վարչութեան գործունէութեան մասին, որդեգրեց բանաձեւեր եւ առաջարկներ ներկայացուց յառաջիկայ տարեշրջանին համար: Ապա, յառաջիկայ մէկ տարուան համար

ընտրեց հինգ անդամէ բաղկացած վարչութիւն մը՝ հետեւեալ կազմով.-

- Եղբ. Տիգրան Կէօվչէնեան
- Եղբ. Վազգէն Մարգարեան
- Եղբ. Գաբօ Պաթթուք

- Քոյր Վալա Մելքոնեան
- Քոյր Սեւան Քէօզկերեան

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒՐՈՊԱՅԻ ԱՍՏԻՃԱՆԱԴՈՐՆԵՐՈՒ «ՎԿԱՅԵԱԼ» ԿԱՐԳԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ողթակից ԱՐԹԵՔ

**11** -16 Օգոստոս 2025-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանը հիւրընկալեց 6 երկիրներից եւ 9 Մեկուսի շրջաններից ժամանած 40 սկաուտ աստիճանաւորներ, որոնք մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի աստիճանաւորներու «Վկայեալ» կարգի գործնական հանգրուանին, որ սկիզբ առաւ Երկուշաբթի, 11 Օգոստոսի կէսօրէ ետք, ծանօթացման հանդիպումով, յունական սկաուտական կազմակերպութեան բանակավայրին մէջ, շրջելով եւ բանակումին ու բանակավայրին օրէնքները փոխանցելով:

### ԲԱՑՈՒՄԸ

Երեքշաբթի, 12 Օգոստոսին կատարուեցաւ պաշտօնական բացում, ներկայութեամբ Յունաստանի Հայոց Թեմի

Առաջնորդ Սահակ Եպս. Եմիչեանի, Աւետարանական եկեղեցւոյ Վերապատուելի Վիգէն Զորաքեանի, Գոթինիոյ հոգեւոր հովիւ Պարէտ Գհնյ. Խաչերեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի-Խաթակ Գազանճեանի, Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հռիփսիմէ Յարութիւնեանի, Հ.Յ.Դ. Հայ Դատի յանձնախումբի ատենապետ Յարութ Սպարթալեանի, «Ազատ Օր» օրաթերթի ներկայացուցիչին, Յունաստանի սկաուտական կազմակերպութեան Սթաւրոս Տիմիթրոփուլոսի, Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդի, շրջանի միութեանականներու, բարեկամներու եւ ծնողներու:

Եղբ. Վիգէն Մինասեան աստիճանաւորները հաւաքին հրաւիրելէ ետք, ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային խմբապետուհին՝ քոյր Սիլ-



վա Եգեկիէլեանը, որպէսզի արտասանէ բանակումին բացման խօսքը: Քոյրը բարի գալուստ մաղթեց աստիճանաւորներուն եւ յայտարարեց «Վկայեալ» կարգի գործնական հանգրուանին մեկնարկը:

Հնչեցին չորս քայլերգներ՝ Յունաստանի, Հայաստանի, Արցախի եւ Հ.Մ.Ը.Մ.ի: Կատարուեցաւ դրօշներու բարձրացում:

Եղբ. Մինասեան հրաւիրեց Վերապատուելի Վիգէն Զորաքեանը փոխանցելու իր սրտի խօսքը: Վերապատուելին շեշտեց





ՆԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄ 2025 - ՅՈՒՆԱՍՏԱՆ

միասնաբար կեղրոնանալու գաղափարը, սատարելու համար հայրենիքին եւ հաւաքական ծառայութեան խոչալին:

Խօսք առաւ Հ.Յ.Դ. Յունաստանի կեղրոնական կոմիտէի ներկայացուցիչը, որ ըսաւ, թէ «Վկայեալ» կարգի գործնական հանգրուանը, բացի իր դաստիարակչական բնոյթէն, խթան կը հանդիսանայ, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ի աստիճանաւորները ամրապնդեն իրենց գիտակցութիւնը, մասնակցելով կամաւոր բանակի ծառայութեան գործին, ի խըն-





դիր Հայաստանի, Արցախի եւ բովանդակ հայտնություն: Ան նաեւ մատնանշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը այն կազմակերպությունն է, որ հայրենասիրություն եւ կարգապահություն կը ջամբէ, կազմաւորելով հայ երիտասարդին գիտակցական աշխարհը:

Հրաւիրուեցաւ Սթաւրոս Տիմիթրոփովսը, որ իր խօսքին մէջ անդրադարձաւ Յունաստանի սկստական կազմակերպութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի միջեւ գոյություն ունեցող սերտ յարաբերություններուն, մանաւանդ Շրջանային խումբապետներու հետ:

Քոյր Սոֆիա Միքայէլեան արտասանեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան խօսքը, նշելով, որ այս հաւաքը ո՛չ միայն «Վկայեալ» կարգի առիթն է, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի շրջանի 100-ամեակն է: Ան ըսաւ, որ աստիճանաւորական այս համախմբումը յաւելեալ պարտաւորություն տակ կը դնէ երիտասարդ սերունդը, պահպանելու հայ լեզուն եւ մշակոյթը, լուսաւորելով հայ պատանիներու վեհանձնութեան ճամբան եւ զարգացումը:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի-Պատակ Գազանճեան շնորհաւորեց շրջանին 100-ամեակը եւ մատնանշեց տարիներու ընթացքին շրջանին հիւրընկալած համա-Հ.Մ.Ը.Մ-ական զանազան ծրագրերը: Իսկ թեկնածուներուն ուղղելով խօսքը, եղբայրը շեշտեց, որ յաջող դաստիարակներ ըլլալու համար միայն ստացած գիտելիքներով պէտք չէ բաւարարուիլ. պատասխանատու

ըլլալը կը պահանջէ առօրեայ աշխատանք եւ հետապնդում, ինչ որ կ'առաջնորդէ փորձառութեան:

Փակման խօսքը արտասանեց Առաջնորդ Սահակ Եպս. Եմիչեան: Ան անդրադարձաւ միութեան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, նշելով թէ Հ.Մ.Ը.Մ-ը եղած է ոգի ջամբող կազմակերպություն, որովհետեւ աւելի քան 100-ամեայ իր պատմութեան ընթացքին ան կարողացած է կարգապահութեան ոգին վերածել ազգային ինքնութեան մարտահրաւրի: Առաջնորդը նաեւ շեշտեց գիտելիքներու կողքին պատասխանատուութեան գիտակցութեան զարգացումը նորահաս սերունդներու դաստիարակութեան մէջ, ի

խնդիր ազգային ինքնութեան եւ դիմագիծի կերտման:

Պաշտօնական արարողութենէն ետք, տեղի ունեցաւ հիւրասիրություն եւ մտերմիկ զրոյց:

**ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ**

«Վկայեալ» կարգի գործնական հանգրուանին յայտագիրը իր հարուստ





բովանդակութեամբ ընդգրկեց դաստիարակչական բաժիններ, որոնց ընթացքին ի գործ դրուեցան առցանց ծրագիրին գիտելիքները, ամբողջացած՝ զանազան դասախօսութիւններով եւ նիւթերով: Սկսուողական ծրագրի կողքին, հաւաքներու օրակարգերը եւ աշխատանոցները շօշափեցին ազգային եւ ընկերային հարցեր, որոնց ընդմէջէն մասնակցող սկսուող աստիճանաւորները ներկայացուցին իրենց գիտելիքները:

Կ'արժէ նշել, որ ընկերային կեանքի գիշերները, խարոյկով եւ երգերով, ճոխացուցին առօրեան մասնակիցներու, որոնք առիթը ունեցան նաեւ միօրեայ նաւապտոյտի եւ հայկական միջնորդութիւն վայելումին: Սկսուող աստիճանաւորները այցելեցին հայկական եկեղեցիներ եւ ակումբներ, մօտէն ճանչնալու համար գաղութային կեանքի կեդրոնները: Անմոռանալի եղաւ այցելութիւնը Աբրովոյի եւ յարակից թանգարանը, ուր բացի համաշխարհային մշակութային կոթողի ծանօթացումէն, անոր ստուերին տակ սկսուող աստիճանաւորները ստացան իրենց «Վկայեալ» կարգի վկայագիրները:

**ՓԱԿՈՒՄԸ**

«Վկայեալ» կարգի գործնական հանգրուանին փակման օրը բանակավայրին մէջ տեղի ունեցաւ խորհրդանշական ծառատնկում, ապա մասնակցող պաշտօնական հիւրերու ներկայութեամբ եւ խօսքերով, ինչպէս նաեւ զանազան պատուոյ գիրերու տուելութեամբ հնգօրեայ ծրագիրը հասաւ իր լրումին:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԻ 75-ՐԳ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

**Շ**աբաթ, 29 եւ կիրակի, 30 Նոյեմբեր 2025-ին, Գոքինիոյ «Զաւարեան» կեդրոնի «Զաքարեան-Սարաճեան» սրահներուն մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի շրջանի 75-րդ Ներկայացուցչական Շրջանային Ժողովը: Ժողովականները եղբայրական ոգիով, հայրենասիրական զգացումներով եւ միութենական պատասխանատուութեամբ քննարկեցին միութեան գործունէութեան եւ ապագայ ծրագիրներուն առնչուող շարք մը հարցեր:

Ժողովին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի-Խաժակ Գազանճեան, ինչպէս նաեւ Աթէնքի, Գոքինիոյ, Սեւանիկի մասնաճիւղերու եւ Գարէայի շրջանի ներկայացուցիչները, սկսուողական Շրջանային Խմբագետը, Սկսուողական Խորհուրդի եւ յանձնախումբերու ներկայացուցիչներ:

Ժողովը ողջունեց Հ.Յ.Դ. Յունաստանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Յարութիւն Սպարթալեան, որ իր բարեմաղթական խօսքով մասնակիցներուն ուղղեց յանձնառութեան եւ եղբայրական բարեոք գործունէութեան ուղերձ մը:

Ժողովականները դիտարկելով ու գնահատելով նախորդ երկամեակի աշխատանքները, ներկայացուցին առաջարկներ եւ նոր ուղղութիւններ յաջորդ նստաշրջանին համար: Ապա կատարուեցաւ Շրջանային Վարչութեան ընտրութիւն եւ ընտրուեցաւ եօթնանդամ կազմ մը՝ բաղկացած հետեւեալ քոյրերէն եւ եղբայրներէն.- Սամուէլեան Արշարոյս, Պարագեան Լոուի, Սայէն Պարտիս, Սելիմեան Ճորձ, Զանիկեան Գրիգոր, Չաղանեան Յակոբ եւ Շահպագեան Եղիշ:

Նորընտիր վարչութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց ժողովականներուն՝ վստահութեան եւ շարունակական աջակցութեան համար, ու վերահաստատեց իր պատրաստակամութիւնը աշխատելու Հ.Մ.Ը.Մ.Ի խտէպներու, դաստիարակչական ծրագիրներու եւ համայնքային ծառայութեան արդիւնաւորման համար:

Աւարտին, ժողովականներուն իր բարեմաղթութիւնները փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ֆէտի-Խաժակ Գազանճեան, որ շնորհաւորեց նորընտիր վարչութիւնը եւ յաջողութիւն մաղթեց անոր աշխատանքներուն, բեղուն գործունէութիւն եւ արդիւնաւէտ երկամեակ մը ունենալու ակնկալութեամբ:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՇՐՋԱՆԻ 27-ՐԴ ՄԱՐՉԱՀԱՆԴԵՍԸ

### Թղթակից ԱԼՄԵԼՈ

**Հ**ՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հովանաւորութեամբ եւ ՀՄԸՄ-ի Արմելոյի Մեկուսի շրջանի կազմակերպութեամբ, 15 Նոյեմբեր 2025-ին տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի Արմելոյի տարեկան մարզահանդէսը՝ ներկայութեամբ Արմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեանի, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի,

Արմելոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վարչութեան, Ամսթերտամի Սուրբ Հոգի եկեղեցւոյ, ՀՕՄ-ի «Շուշի» մասնաճիւղի, Հ.Յ.Դ. «Գարեգին Նժդեհ» Երիտասարդական Միութեան, Հ.Բ.ԸՄ-ի Նետրոյնտներու «Երեւան» միութեան ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ՝ ՀՄԸՄ-ի Ալքմարի, Առնհեմի եւ Արմելոյի Մեկուսի շրջաններու մարզիկներու, սկաուտներու եւ անդամներու:

Այս տարուան մարզահանդէսին նշանաբանն էր «Դէպի 30-ամեակ՝ միշտ ծառայող մնալու խոստումով»:

### ԲԱՅՈՒՄԸ

Մարզահանդէսը ընթացք առաւ մէկ վայրկեան ըուտեամբ՝ յարգանքի տուրք մատուցանելով բոլոր նահատակներուն:

Սկաուտական տողանցքէն ետք տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Նետրոյնտներու, Հայաստանի, Արցախի եւ ՀՄԸՄ-ի քայլերգներով բարձրացան չորս դրօշներ: Ապա, հրաւիրուեցաւ Արմելոյի եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ. Պաղտասարեանը, որ «Տէրունական» աղօթքէն ետք փոխանցեց օրհնութեան իր խօսքը:





**ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԽՕՍԿԸ**

Այնուհետև հրաւիրուեցաւ Մեկուսի շրջանի ատենապետ եղբ. Մասիս Վահանեանը փոխանցելու Հ.Մ.Ը.Մ-ի Աւմերլոյի վարչութեան խօսքը: Ներկաները ողջունելէ ետք, եղբ. Վահանեան ըսաւ. «Անգամ մը եւս ներկայ ենք նշելու Հ.Մ.Ը.Մ-ի Աւմերլոյի տարեկան մարզահանդէսը: 29 տարիներ առաջ, խումբ մը նուիրեալ հայորդիներու կողմէ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հիմնուեցաւ Աւմերլոյի մէջ»:

Ապա, եղբայրը խօսքը ներկայ սկսուածներուն եւ մարզիկներուն ուղղելով յայտնեց. «Դուք հայրենիքին դեսպաններն էք: Ձեր երթը, ձեր վագըրը, ձեր ցատկը եւ ձեր կարգապահութիւնը վկայութիւններն են այն անխոնջ հաւատքին, որով մեր ժողովուրդը կ'անցնի դժուար ճամբաներէ, բայց կը մնայ անսասան: Մարզահանդէսները միայն մրցում եւ ախոյեանութիւն չեն, ո՛չ ալ բաժակ ու



մետալ են: Մարզահանդէսները շատ յաճախ ամէն գնով կանգուն մնալու կամք են՝ մարմնով, մտքով եւ հոգիով չտկարանալու վճռականութիւն են: Այս հաստատ համոզումով ալ կ'ողջունենք այս տողանցքը՝ խոստանալով միշտ բարձր պահել այն դրօշը, զոր աւանդ ձգուեցաւ

մեզի: Կը խոստանանք նաեւ, որ մեր ժողովուրդի ծոցէն ծնած այս միութիւնը պիտի շարունակէ տալ ախոյեաններ, դեկավարներ, կամաւոր բանակ եւ մանաւանդ՝ երբ հնչէ զանգը, ահագանգը, առաջինը ըլլալու պատնէշին վրայ»:

Շարունակելով, եղբ. Վահանեան





նչեց, որ Հ.Մ.Ը.Մ. Ալմերոն այսօր ունի աւելի քան 120 սկաուտներ եւ 90 մարզիկներ: Ան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները կը վստահին Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարին եւ ուղիին: Ան հրաւիրեց բոլոր այն ծնողները եւ իրենց զաւակները, որոնք տակաւին չեն միացած, միանալու այս մեծ ընտանիքին»:

Աւարտին, եղբ. Վահանեան իր խօսքը եզրափակեց ըսելով. «Յառա՛ջ, հաստատ քայլերով եւ խիտ շարքերով դէպի նորանոր բարձունքներ եւ նուաճումներ: «Յառա՛ջ, դէպի նորանոր յաղթանակներ եւ մրցանիշներ: Յառա՛ջ, դէպի 30-ամեակ՝ միշտ ծառայող մնալու խոստումով»:

**ՏՈՂԱՆՅՔԸ**

Ատենապետին խօսքէն ետք, տպաւորիչ տողանցքով մարզադաշտ մուտք գործեցին մարզահանդէսին մասնակից սկաուտները, Ալմերոյի եւ Առնհեմի տարազաւորները, ինչպէս նաեւ մարզախաղերու մասնակից մարզական խումբերը:

Խումբերը մարզադաշտին մէջ իրենց տեղերը գրաւելէ ետք տեղի ունեցաւ Նորագիր մոկլիկներու փողկապի տուչութիւն:

Տողանցքի աւարտին սկսաւ մարզական բաժինը: Կատարուեցան երիտասարդներու եւ պատանիներու Ֆուլթսալի եւ վոլիպոլի մրցաշարքները, իսկ փինկ-փոնկի մրցաշարքը տեղի ունեցաւ մարզահանդէսին նախօրեակին:

**ՖՈՒԹՍԱԼԻ, ՎՈԼԻՊՈԼԻ ԵՒ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ՄՐՅԱՇԱՐՔՆԵՐԸ**

Ֆուլթսալի մրցաշարքին մասնակցեցան «Երեւան», «Վարդանանց» եւ «Արարատ» խումբերը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Առնհեմի, Ալքմարի եւ Ալմերոյի





առաջին եւ երկրորդ խումբերը: Բոլոր մրցումները տեղի ունեցան բարձր մակարդակով եւ մրցաշարքի աւարտական մրցումը իրարու դէմ հանեց Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի առաջին եւ երկրորդ խումբերը: Ախոյեան դարձաւ Հ.Մ.Ը.Մ. Ալմելոն:

Ֆուլթայի մրցաշարքի կողքին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի պատանիներու Ֆուլթայի ընկերային մրցումը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Ալմելոյի վոլիպոլի մրցաշարքը:

Մարզահանդէսին նախօրեակին կատարուեցաւ փինկ-փոնկի մրցաշարք, որուն մասնակցեցան վեց մարզիկներ: Մրցաշարքի աւարտական հանդիպումը տեղի ունեցաւ եղբայրներ Արա Արիտակէսեանի եւ Արարատ Օհանէսեանի միջեւ: Ախոյեան դարձաւ եղբ. Արա Արիտակէսեան:

Մետալներու եւ բաժակներու բաշխումը տեղի ունեցաւ Ալմելոյի «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ: Պարգեւատրուեցան մարզահանդէսին մաս-



նակցած բոլոր մարզիկները, իսկ յուշանուէրներ յանձնուեցան մասնակցող միութիւններու ներկայացուցիչներուն:

Մարզահանդէսը աւարտեցաւ խրախուսական երգերով, ուր հնչեցին ազգային-հայրենասիրական երգեր՝ Բաբգէն Գէորգեանի մեկնաբանութեամբ:

Անհրաժեշտ է յիշել միութեան տիկնանց, ընկերային, մարզական, սկստական եւ օժանդակ յանձնախումբերուն կատարած զնահատելի աշխատանքը՝ մարզահանդէսին յաջող կազմակերպման համար:




### ՃՇՊՈՒՄ

Գրաշարական վրէպով մը, անցեալ թիւի էջ 68-ի եւ 79-ի ենթավերնագիրներուն մէջ, համա-Յ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու օրինակելի մարզիկ Զուլալ Պէզճեանի մակնունը նշուած էր Գազանճեան:

Վրէպին համար կ'ապաւինիք մեր ընթերողներու ներողամտութեան:

«ՄԱՐԶԻԿ»

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԴԷՄՔԵՐԷՆ ԵՂԲ. ԱՐԹՈՒՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԸ



Թղթակից  
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

**20** Յունիս 2025-ին, 83 տարեկան հասակին, Արժան-  
թիխի մէջ իր մահկանացուն կնքեց Հ.Մ.Ը.Մ.Ի  
Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ.  
Արթուրո Յովհաննէսեանը:

Եղբ. Արթուրո Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի շրջանի  
հիմնադիր սերունդին յաջորդած վաստակաշատ դէմքերէն էր,  
ծանօթ՝ շէնշող իր նկարագիրով եւ անադմուկ գործերու յատ-  
կութեամբ:

Ան ծնած է Աթէնք, Յունաստան, 16 Յունիս 1942-ին, գա-  
ղափարական ընտանիքի մը յարկին տակ: Եօթը տարեկանին  
փոխադրուած է Պուէնոս Այրէս, Արժանթին, ուր փոքր տա-  
րիքին մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւ-  
ղին:

1957-ին, երբ մասնաճիւղին «Արարատ» սկաուտական  
խումբը կը կազմուի, եղբ. Արթուրո կ'ըլլայ անոր առաջին ան-  
դամներէն:

1967-1973 եղբ. Արթուրո կը վարէ մասնաճիւղի խմբապետի  
պաշտօնը. «Wood-badge»-ի կարգը կը ստանայ Արժանթինի  
սկաուտական միութեանէն, որուն հետ կ'ունենայ սերտ կա-  
պեր:

1967-ին եւ 1971-ին եղբ. Արթուրո կը մասնակցի Իտալոյի  
(Մ. Նահանգներ) եւ Ասակիրի Հայցի (Ճափոն) սկաուտական  
համաշխարհային 12-րդ եւ 13-րդ ճամպորիններուն, ներկայացը-  
նելով Արժանթինի սկաուտութիւնը:

Սկաուտական աշխատանքներու առընթեր, եղբ. Արթուրո  
կ'ունենայ վարչական բեղուն կեանք: 1965-1988 զանազան  
պաշտօններով ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի  
վարչութեան, 1984-1988 վարելով մասնաճիւղին ատենապե-  
տութիւնը:

1987-ին, 1991-ին եւ 1995-ին ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.Ի Դ.,  
Ե. եւ Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն եւ  
Աթէնքի Ե. Ընդհանուր Ժողովին (1991) կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.Ի  
Կեդրոնական Վարչութեան անդամ:

Իր խանդավառ բնաւորութեամբ եղբ. Արթուրո կը գոր-  
ծակցի յաջորդական սերունդներու հետ՝ բոլորին փոխանցե-  
լով իր եռանդն ու լաւատեսութիւնը: Ան տեւաբար կը  
բարձրանայ՝ իր հետ բարձրացնելով նաեւ շուրջիները: Կը  
մնայ համեստ ու խոնարհ, առանց խորութիւն դնելու մեծ ու  
փոքր գործերու միջեւ: Արդարեւ, քառամեակ մը Հ.Մ.Ը.Մ.Ի

Կեդրոնական Վարչութեան անդամ ըլլալէ ետք, ան չորս շըր-  
ջան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջա-  
նային Վարչութեան, 1995-1997 եւ 2011-2013 ատենապետի  
պաշտօնով, իսկ 1997-1999 եւ 1999-2001 իբրեւ պարզ անդամ:

Գիրն ու գրականութիւնը գնահատող եղբ. Արթուրո, 1990-  
ին, գաղափարակից այլ եղբոր մը՝ Յարութիւն Մառուկեանի  
հետ կը ստանան միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբ-  
բազրականներու Ա. հատորի հրատարակութեան մեկենասու-  
թիւնը:

Իր երկարամեայ վաստակին համար, եղբ. Արթուրո 2007-  
ին կ'արժանանայ «Մառայութեան», իսկ 16 Դեկտեմբեր 2022-  
ին միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին:

Եղբ. Արթուրո կ'ըլլայ հաւատաւոր Դաշնակցական եւ եր-  
կար տարիներ պատասխանատու պաշտօններ կը վարէ կու-  
սակցութեան Հարաւային Ամերիկայի կառույցին մէջ:

## ԵՂԲ. ԱՐԹՈՒՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԸ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԷՋ

Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, միութեան  
«Արժանեաց» շքանշանակիր եղբ. Արթուրո Յովհաննէսեանի  
վերջին հրաժեշտը տեղի ունեցաւ Կիրակի, 22 Յունիս 2025-ին,  
Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի մէջ: Եղբայրը  
մահկանացուն կնքած էր Ուրբաթ, 20 Յունիսին, 83 տարեկան  
հասակին, ազգային-միութենական վաստակաշատ կեանքէ մը  
ետք:



Եղբոր յիշատակին դամբանական խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Սեսիլիա Տաղլեան: Ան ըսաւ, որ եղբ. Արթուրը բոլորին կեանքին մէջ մեծ ներդրում ունեցաւ իբրեւ դաստիարակ եւ օրինակելի ղեկավար, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ական սկզբունքներու եւ հայկական արժէքներու յանձնառու եղբայր:

«Իր խանդավառ բնավորութեամբ եղբ. Արթուրը գործակցեցաւ բազմաթիւ սերունդներու հետ՝ բոլորին փոխանցելով իր եռանդն ու լաւատեսութիւնը: Սիրելի՛ եղբայր, կրնանք հաստատ ըսել՝ «Վարձքդ կատար»: Օրինակդ եւ յիշատակդ վառ պիտի մնան մեր մէջ: Դուն բարձրացար եւ մեզի ալ հետդ բարձրացուցիր», ըսաւ քոյր Տաղլեան դամբանական խօսքին մէջ:

Յայտնենք, որ հրաժեշտի վերջին յարգանքէն ետք, եղբ. Արթուրը թաղուեցաւ Պուէնոս Այրէսի անգլիական գերեզմանա-



տան մէջ, ուր ընտանիքին յանձնուեցաւ դազալը պատած Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:



## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՇՐՋԱՆԻՆ ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏԸ՝ ՔՈՅՐ ՏԻՐՈՒՀԻ ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

**9** Հոկտեմբեր 2025-ին, անողորհիւ Կեդրոնական Վարչութեան ղեմ երկար պայքարէ ետք, Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ իր մահկանացուն կնքեց վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, միութեան «Արտակարգ» շքանշանակիր՝ քոյր Տիրուհի Պարտիզպանեան-Գրիգորեան:

Քոյր Տիրուհի ծնած է 23 Օգոստոս 1944-ին: Ան դուստրն է Պուլկարիոյ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Տիգրան Պարտիզպանեանին, որ համայնավար իշխանութեան օրերուն, իր եւ իր ընտանիքին ապահովութիւնը վտանգելով՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ դրօշակը, արխիւները եւ գոյքերը պահած է տունը՝ մինչեւ այն օրը, երբ ստիպուած է զանոնք այրել, համայնավար իշխանութեան չյանձնելու համար:

Քոյր Տիրուհի Գրիգորեան Հ.Մ.Ը.Մ.ին կ'անդամակցի 1992 թուականին՝ համայնավար իշխանութեան դադրեցումէն ետք, թէեւ իր իսկ վկայութեամբ, ան մանուկ տարիքէն ինքզինք նկատած է Հ.Մ.Ը.Մ.ական: Քոյր Գրիգորեան միութեանական դաստիարակութիւնը կը ստանայ Պուլկարիոյ երկու վաստակաշատ եղբայրներէն՝ Տիգրան Պարտիզպանեանէն եւ Խորէն Քիրազեանէն, որոնք երկար տարիներ, մինչեւ իրենց մահը եղած են գործօն միութեանականներ:

Քոյր Գրիգորեան 2006 թուականէն ի վեր Պուլկարիոյ կապն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ: Ան նաեւ Պուլկարիոյ ատենապետներու խորհուրդին ատենապետն էր նոյն թուականէն ի վեր: Քոյրը 1992 թուականէն ի վեր վարչական պաշտօններ վարած է Սոֆիայի Մեկուսի շրջանէն ներս: 2006 թուականէն ի վեր, իբրեւ ատենապետներու խորհուրդի ատենապետ, ինքն էր Պուլկարիոյ միութեանական աշխատանքները վարողն ու համադրողը: Իր ջանքերուն շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ շրջանը տարեկան դրութեամբ կը կազմա-

կերպէր ընդհանուր բանակումներ որոնց Կեդրոնական Վարչութիւնը խմբապետ-խմբապետուհիներ կը գործուղէր 2007 թուականէն սկսեալ, օժանդակելու աշխատանքներուն եւ խմբապետական վերաորակաւորման ծրագիրներուն:

Քոյր Տիրուհի Պարտիզպանեան-Գրիգորեան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Թ. եւ Ժ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովներուն, միջ-դիւանական Է. եւ Ը. ժողովներուն: Ան գլխավորած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական Է. եւ Թ. մարզախաղերուն մասնակից Պուլկարիոյ պատուիրակութիւնները:

Քոյր Տիրուհի Պարտիզպանեան-Գրիգորեան Հ.Մ.Ը.Մ.ի Փլովտիվի մասնաճիւղի 100-ամեակին առիթով եւ առ ի գնահատանք իր երկարամեայ վաստակին, 25 Յունիս 2022-ին արժանացած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Արտակարգ» շքանշանին:

Սերունդները երախտապարտութեամբ պիտի յիշեն քոյր Տիրուհին եւ անոր անմնացորդ նուիրումը Հ.Մ.Ը.Մ.ին եւ հայրութեան:

Յիշատակը անմոռաց:

**ԳՈՅԺ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումբ միութեան «Արտակարգ» շքանշանակիր, Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ ատենապետներու խորհուրդի ատենապետուհի, Հ.Մ.Ը.Մ.ի Սոֆիայի Մեկուսի վարչութեան ատենապետուհի, վաստակաշատ միութեանական՝

**ՔՈՅՐ ՏԻՐՈՒՀԻ ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 9 Հոկտեմբեր 2025-ին, Սոֆիա, Պուլկարիա:

# ՀԱՒԱՏՔԻ ՄԱՐԴԸ

(ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՉԷՔԻՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

## Վ. Աւագեան ՊՈՒՐԳ ՀԱՍՈՒՏ

**Հ**աւատաւոր մըն ալ կորսնցողցինք: «Ողն ու ծուծ»ով Հ.Մ.Ը.Մ.ական մը: Հ.Մ.Ը.Մ.ի եւ անոր ազգային-գաղափարական արժէքներուն բուռն պաշտպան մը, որուն միութեանական գործունէութիւնը երկարեցաւ 67 տարիներու վրայ:

Յարույթ Չէքիճեան հաւատաւորը, վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականը, միութեան Կեդրոնական Վարչութեան նախկին անդամը եւ «Արժանեաց» շքանշանակիրը ամբողջ կեանք մը ապրեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ եւ Հ.Մ.Ը.Մ.ը ապրեցուց բոլորին մէջ: Խօսեցաւ, գրեց եւ միշտ երախտապարտ մնաց այն միութեան, որ մեծ դեր ու տեղ ունեցաւ իր կազմաւորման եւ ինքնութեան կերտումին մէջ:

Երկար տարիներու սկառտը, սկառտական եւ վարչական բոլոր պատասխանատուութիւնները աստիճան առ աստիճան բարձրացած միութեանականը, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի վարչութեան անդամակցութենէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնն ու ապա՝ Կեդրոնական Վարչութիւնն եղաւ ու մնաց լուռ եւ խոնարհ աշխատանքի մարդ:

Յարույթ Չէքիճեան ո՛ր որ գտնուեցաւ գործեց իրեն յատուկ ոճով, չափազանց սկզբունքային եւ խստապահանջ մօտեցումով: Թերութիւններ չհանդուրժեց բնաւ: Անկատար լուծումներ չընդունեց երբեք: Եղաւ յամառ ու բծախնդիր աշխատանքի մարդ: Հեռու մնաց բեմերէ եւ լուսարձակներէ: Մերժեց հաճոյակատարութիւնը: Ատեց ցուցամոլութիւնը եւ համեստութիւնն ու աշխատասիրութիւնը դարձուց կեանքի նշանաբան:

Վերջին քառորդ դարուն չըջաղարձ մը արձանագրուեցաւ եղբ. Յարույթ Չէքիճեանի կեանքին մէջ, երբ ան վարպետ արհեստաւորի գործիքները փոխարինեց բեղուն հրապարակագիր



րի գրիչով ու համակարգիչով: Սկսաւ գրել: Գրեց առատօրէն: Գրեց համոզումով եւ հաւատքով: Գրեց Հ.Մ.Ը.Մ.ը, հայրենիքն ու հայութիւնը յուզող նիւթերու մասին: Պեղեց պատմութեան էջերը: Ուսումնասիրեց անծանօթ էջեր եւ ընթերցողին հրամցուց դաստիարակչական երկար յօդուածաշարքներ:

Արդարեւ, Հայկազեան Համալսարանի ուսանողական տարիներու գրական սկզբնական փորձերէն ետք, ան իր առաջին գրութիւնները լոյս ընծայեց Հ.Մ.Ը.Մ.ի «Մարզիկ» պաշտօնաթերթին մէջ. «Անվեհերները» (2000), «Ամրապնդենք բարոյական արժէքները» (2000-2001) եւ այլն:

Հետագային, ուսումնասիրական-փաստագրական արժէքաւոր յօդուածաշարքներով եւ հրապարակագրական ակնարկներով ան հանդէս եկաւ Պէյրութի «Ազդակ» օրաթերթին մէջ: 2024-ին, ազգային-քաղաքական իր յօդուածներէն մաս մը հաւաքուեցաւ եւ «Ազդակ»ի մատենաշարով լոյս տեսաւ «Հայաստանի Հանրապետութեան կազմաւորումը եւ Սեւրի դաշնագիրը» խորագրեալ հատորով: Ան մէկտեղեց եւ ցանցային տարբերակով հրատարակութեան պատրաստեց նաեւ այլ աշխատասիրութիւն մը. «Հայկական Սփիւռքը»՝ նուիրուած Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին կողմէ Սփիւռքի տարուան հռչակման:

Վերջին տարիներուն եղբ. Յարույթ ստեղծեց իրեն յատուկ ցանցային հարթակը՝ haroutchekijian.wordpress.com-ը, ուր մէկտեղեց գրութիւններուն մեծ մասը: Պատկառելի ժառանգ մը գրասէրներուն համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի վարչութիւնը Կեդրոնական Վարչութեան առաջին ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի հետ: Յարույթ, ոտքի, ձայնէն առաջինը:

**ԳՈՅԺ**

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուծէ միութեան «Արժանեաց» շքանշանակիր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եւ վաստակաշատ միութեանական՝

**ԵՂԲ. ՅԱՐՈՒԹ ՉԷՔԻՃԵԱՆԻ**

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 22 Օգոստոս 2025-ին, Պէյրութ, Լիբանան





Զախին՝ 2001. եղբ. Յարութ Չէքիճեան (ճերմակ շապիկով) օրուան Կեդրոնական Վարչութեան իր եղբայրներուն հետ, Յայաստան: Աջին՝ 2002. համա-Յ.Մ.Ը.Մ.ական 7-րդ ընդհանուր բանակումին, եղբ. Յարութ (ծախէն առաջինը) Յամաշխարհային Սկաուտական Շարժումի ընդհանուր քարտուղար Ժագ Սորեոնը ընդունած պահուն:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին, իբրեւ զեկուցաբեր, եղբ. Յարութ Չէքիճեան Երեւանի մէջ հանդէս եկաւ միութեան պատմութեան նուիրուած գիտաժողովին եւ ներկայացուց «Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ. 1918-1927» նիւթը: Հետագային ան վերամշակեց նիւթը եւ իբրեւ յօդուածաշարք լոյս ընծայեց «Մարգիկ»ի մէջ (2021-2022): Ծրագրուած էր յօդուածաշարքը առանձին հատորի մը վերածել, երբ վրայ հասաւ անակնկալ մահ: Յօդուածաշարքը թարգմանուեցաւ նաեւ սպաներէնի եւ իր կարգին պատրաստ է հրատարակութեան:

Միութենական իր գործունէութեան առընթեր, եղբ. Յարութ Չէքիճեան 1992-1998 մաս կազմեց Լիբանանի Թեմի Ուսումնական Խորհուրդին, 1996-1998 վարելով Խորհուրդին ատենապետութիւնը:

Իսկ ո՞վ էր հաւատաւոր այս միութենականը:

Եղբ. Յարութ Չէքիճեան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1958-ին, իբրեւ Պէյրութի մասնաճիւղի սկաուտ եւ շարունակած է սկաուտական շարքերու մէջ գործել մինչեւ 1971: Եղած է Աքելլա, ապա՝ Խմբապետ: 1964-ին, ան մասնակցած է արաբական Երգ ճէմպորիին, Ապուքիր, Եգիպտոս, հանդիսանալով Լիբանանի պատուիրակութեան լաւագոյն սկաուտը:

Հ.Մ.Ը.Մ.ի մէջ եղբ. Յարութ Չէքիճեան երկար տարիներ ստանձնած է վարչական պատասխանատուութիւններ: 1973-1977, Յորդանան կեցութեան շրջանին, ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղի վարչութեան անդամ եւ երիտասարդականի պատասխանատու: 1982-1984, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան, իբրեւ ատենադպիր եւ սկաուտականի ներկայացուցիչ: 1988-1993, երկու շրջան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենապետ:

1985-1988 եւ 1993-1995, երեք անգամ ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, իբրեւ ատենադպիր եւ սկաուտականի ներկայացուցիչ:

1999-ին, Հ.Մ.Ը.Մ.ի եթններորդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին (Ատմա, Լիբանան), ան ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, վարելով ատենադպրութեան եւ սկաուտական ներկայացուցչութեան պատասխանատուութիւնները:

Միութենականութիւնները: Միտամանակ, ան մաս կազմած է Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէին մօտ Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ պատուիրակութեան՝ իր մեծ ներդրումը բերելով խաղերու կանոնագրութեան մշակման եւ այդ առիթով Հ.Մ.Ը.Մ.ի տեսակէտներու ներկայացման եւ որդեգրման մէջ:

Երկարամեայ իր ծառայութեան առ ի գնահատանք, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին, եղբ. Յարութ Չէքիճեան 10 Մարտ 2019-ին պարգևատրուած է միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:


Հ.Մ.Ը.Մ.ական եւ հրապարակագրական մեծ վաստակով բեռնաւորուած՝ եղբ. Յարութ Չէքիճեան իր հարազատներէն եւ սիրելի միութենէն անդարձ մեկնեցաւ 22 Օգոստոս 2025-ին, անբասիր միութենականի օրինակը ձգած իր ետին:

Յարգա՛նք յիշատակին, խոնարհո՛ւմ վաստակին:



**«ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

**Ի յիշատակ Մարտի Մերոնեանի.-**  
**- Տէր եւ տիկ. Արա եւ Հայկուհի Մերոնեան**  
**(Արեւելեան Մ. Ն.)** **1000 \$**



## ՄԿԱՌՏԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ...

(Շարունակում է 17-էն)

- Ծանօթանալ միջազգային սկաուտտութեան կանոնադրու-  
թեան եւ կառուցին, աշխատելաձեւին եւ սկաուտտութիւն կիր-  
արկելու միջոցներուն (վարող՝ Սառա Ռիթա-Սամահ):
  - Հ.Մ.Ը.Մ.ի կանոնադիրը, ժողովները, ժողովական եւ  
վարչական կանոնները (վարող՝ եղբ. Աւետիս Տէրվիչեան):
  - Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը, նպատակը, կառուցը (խմբա-  
յին աշխատանք) եւ Հ.Մ.Ը.Մ. Արցախը (վարող՝ քոյր Սանտրա  
Վարդանեան):
  - Արդի աշխարհաքաղաքականութիւն եւ մարդկային իրա-  
ւունքներ (վարող՝ եղբ. Սեւակ Թորոսեան):
  - Հայաստանի արտաքին քաղաքականութիւն (վարող՝  
Եղիկ Թաշճեան):
  - Ինքնութիւն եւ ազգային նկարագիր (վարող՝ Շադիկ Խիւ-  
տավերտեան):
  - Ընկերային Հարցեր եւ Cybersecurity (վարողներ՝ Նորա  
Շիթիլեան եւ Ժիրայր Պէօճէքեան):
  - Ճգնաժամային գործընթաց եւ ղեկավարի հմտութիւններ  
(վարողներ՝ եղբայրներ Շահան Աթամճեան եւ Անտրէ Տատայ-  
եան):
- Տեսական բաժինը աւարտեցաւ 73 խմբապետներով, որոնք  
վեց ամսուան ժամանակաշրջանի մը մէջ պիտի մշակեն եւ կիր-

արկեն գործնական ծրագիրներ:  
2023-2027 քառամեակի «Արարատեան» կարգը իր աւարտին  
կը հասնի Յուլիս 2026-ին, եւ որեայ հանդիպումով մը՝ Հայաս-  
տանի մէջ, ուր խմբապետները իրարու հետ կը բաժնեկցին  
գործնական հանգրուանին իրականացուցած իրենց ծրագիր-  
ները: Կարգին տուչութիւնը տեղի կ'ունենայ համա-Հ.Մ.-  
Ը.Մ.ական 13-րդ բանակումի բացման հանդիսութեան՝ 24  
Յուլիս 2026-ին, Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» սկաու-  
տական բանակավայրին մէջ:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄԵՐԻԿԱՆԵՐՈՒ...

(Շարունակում է 18-էն)

Հանդիպումին մասնակցեցան Ամերիկաներու եւ Աւստրալ-  
իոյ շրջաններու ատենապետները եւ մարզական պատասխա-  
նատուները: Ներկայ գտնուեցան նաեւ Կեդրոնական Վար-  
չութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան, անդամներ քոյ-  
րեր Լիոնի Սարմազեան եւ Սիսիլիա Տաղլեան, եղբայրներ  
Մհեր Գալիթեան, Վիգէն Աբէլեան, Վահէ Թանաչեան եւ Տի-  
րան Վահրատեան:

Հանդիպումին արծարծուեցան Ամերիկաներու եւ Աւստ-  
րալիոյ ցամաքամասային Ա. մարզախաղերու թուականի եւ  
վայրի կարելիութիւնները: Յառաջացաւ ենթայանձնախումբ  
մը, որ պիտի վերջնականացնէ ծրագիրը եւ ներկայացնէ նըշ-  
ւած շրջաններուն, առ ի պատրաստութիւն 2027-ին կայանա-  
լիք ցամաքամասային Ա. մարզախաղերուն:

### «ՄԱՐՁԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Բաֆֆի Խիւտավերտեան (Լիբանան) 100 \$

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ԵՒ ՄԵԿՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ . . .

(Շարունակուած էջ 19-էն)

Հանդիպումին խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան IT-ի պատասխանատու եղբ. Շանթ Տէմիրճեան, որուն գլխաւորութեամբ յառաջ կը տարուին նաեւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ մարզախաղերու քարոզչութեան ընկերային ցանցերու բաժինի աշխատանքները: Ան մանրամասնօրէն ներկայացուց ծրագրուած եւ գործադրութեան դրուած նախաձեռնութիւնները՝ նշելով այն բոլոր աշխատանքները, որոնք շրջաններէն կ'ակնկալուին մարզախաղերէն առաջ, ընթացքին եւ ետք: Եղբ. Տէմիրճեան շեշտեց ընդհանուր գործակցութեան, արագ արձագանգի եւ որակաւոր բովանդակութեան ներկայացման անհրաժեշտութիւնը, Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին ճշդած ընդհանուր արժեքափերուն եւ ուղղութիւններուն համաձայն:

Առցանց հանդիպումին առիթ տրուեցաւ մասնակիցներուն, որպէսզի գեկուցեն անցնող ութ ամիսներուն իրենց շրջաններուն կատարած քարոզչական գլխաւոր աշխատանքներուն մասին:

Աւարտին, խօսք առաւ եւ ներկաները ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Խաչերեան: Եղբայր միութեան քարոզչական մեծագոյն իրադարձութիւններէն մէկուն՝ մարզախաղերուն մասին արտայայտուելով ըսաւ, որ մարզախաղերը մեզի համար նպատակ չեն, միջոց են: «Մենք կը հաւատանք,- եւ ատկա իրականութիւն է,- որ Հ.Մ.Ը.Մ.ը ամէնէն բազմանդամ երիտասարդական միութիւնն է հայ իրականութեան մէջ: Այդ միութիւնը ներկայացնող անդամներն են, որոնք Յուլիանի պիտի հաւաքուին հայրենիքի մէջ: Հետեւաբար, մենք

պիտի չցուցադրենք մեր թեքնիք կարողութիւնները, այլ քարոզչական համապատասխան միջոցներով եւ յատկապէս ընկերային ցանցերով աշխարհին պիտի ներկայացնենք մեր միութեան ուժը եւ իսկական դիմագիծը»:

Եղբ. Խաչերեան այս առիթով յիշեցուց, որ մարզախաղերու մասնակիցներու տարագններուն վրայ պիտի ըլլայ Արցախի դրօշը: Ան ըսաւ, որ շատ յատկանշական է այս մէկը: «Մեր այս հաւաքին նպատակը նաեւ քով-քովի գալ է, հայրենիք վերադառնալ է, ըսել է որ՝ մենք ետ տուն կու գանք, երբ առիթը ըլլայ: Այդ տուն եկողները ազգային արժէքներ ներկայացնող երիտասարդներ են, որոնք միայն մրցում խաղալու չեն երթար հայրենիք: Անոնք կ'երթան տողանցելու եւ այցելելու այն վայրերը, որոնք ուղղակի կ'առնչուին ազգի գոյութեան հետ: Այս ամէնէն մեծ պատգամն է, գոր մենք պիտի տանք, մանաւանդ ա՛յս օրերուն: Առաքելութիւն է մեր ըրածը եւ այդ առաքելութեան տէրը ըլլանք», շեշտեց եղբ. Խաչերեան:

Ապա, եղբայրը հաստատեց, որ այս բոլորը գիտնալով մենք ներքին մրցակցութիւն պէտք չէ ունենանք, որովհետեւ մեր նպատակը մարզախաղեր կազմակերպելէ շատ անդին է: «Մեր նպատակը ո՞վ ի՞նչը յաղթեցը չէ: Բոլորիս յաղթանակն է, բոլորիս կողմէ ցոյց տալ է բոլորին, ներսիններուն եւ դուրսիններուն, որ այս միութիւնը արմատ ունեցող միութիւն է, իր Հայաստանի թեւով, իր Արցախի միաւորով եւ Սփիւռքի բոլոր միաւորներով», եզրակացուց եղբ. Խաչերեան եւ յաջողութիւն մաղթեց մասնակիցներուն:

Եղբ. ատենապետին խօսքով առցանց հանդիպումը վերջ գտաւ երեկոյեան ժամը 11.30-ին:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ . . .

(Շարունակուած էջ 74-էն)

Ժողովը անհրաժեշտ գտաւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի կառոյցը իր ներդրումը ունենայ Միջին Արեւելքի տնտեսական ծանր պայմաններ ապրող շրջաններուն, ինչպէս նաեւ արցախցի գաղթական Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Աւարտին, արտի խօսքերով եւ յաջողութեան մաղթանքներով հանդէս եկան ընթացաւարտ Շրջանային Վարչութեան անդամներ, Շրջանային խմբապետներ, դիւանի անդամներ, ժողովականներ եւ հիւրեր: Կեդրոնական Վարչութեան անդամ քոյր Լիոնի Սարմազեան շնորհաւորեց դիւանին աշխատանքը, ողջունեց ներկաները եւ բարձր գնահատեց ներկայութիւնը ժողովականներուն, որոնք ի գին ամէն բանի, միշտ առաջնահերթ կը նկատեն Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքները: Քոյր Սարմազեան գնահատեց մասնաճիւղերու աշխատանքները եւ նշեց, որ անոնք ծառայութեան ոգիով կը գործեն Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանին ներքեւ: Քոյրը երախտագիտութեամբ գնահատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան աշխատանքները եւ շեշտեց, որ կազմը միասնակամ եւ համերաշխ աշխատանքով ամբողջացուց իրեն վստահուած գործը: Քոյր Սարմազեան իր խօսքը աւարտեց ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.ի ժողովրդականութեան, նուիրումի եւ ծառայութեան արժէքները, ու թելադրեց նորանոր խանդավառութեամբ եւ միասնական ճիգերով յառաջ տանիլ միութեան աշխատանքները:

Հուսկ, տեղի ունեցաւ 2025-2027 երկամեակի Շրջանային Վարչութեան անդամներու ընտրութիւն՝ հետեւեալ պատկերով:- Եղբայրներ Մանուէլ Քէօսէեան, Ասատուր Երեմեան, Վահէ Թաշճեան, Յարութ Պետրոսեան, Սամսոն Քահճէճեան, Լեւոն Իսկէնտէրեան եւ Տաթև Պէպէճեան:

Չուսկ, տեղի ունեցաւ 2025-2027 երկամեակի Շրջանային Վարչութեան անդամներու ընտրութիւն՝ հետեւեալ պատկերով:- Եղբայրներ Մանուէլ Քէօսէեան, Ասատուր Երեմեան, Վահէ Թաշճեան, Յարութ Պետրոսեան, Սամսոն Քահճէճեան, Լեւոն Իսկէնտէրեան եւ Տաթև Պէպէճեան:

Ժողովը վերջ գտաւ Կիրակի, 26 Հոկտեմբերի յետմիջօրէի ժամը 3-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:

JOIN HOMENETMEN ON ITS FIRST EVER RIVER CRUISE



# HOMENETMEN RIVER CRUISE 2026

On-board  
entertainment



Comedian | Pianist  
KEV ORKIAN



Famous Singer  
HAGOP MGRDICHIAN



DJ RAMS

## Հ.Մ.Ը.Մ.Ի Ա. ՆԱԻԱՊՏՈՅՑ 7 գիշերներ

Մեկնարկ՝ Վիշոֆեն, Գերմանիա 13 Յուլիս, 2026  
Ավարտ՝ Պուտափեշտ, Հունգարիա 20 Յուլիս, 2026

Ճամբորդության ընթացքին պիտի այցելենք եօթը քաղաքներ՝ չորս եւրոպական երկիրներու մէջ, աշխարհահռչակ AmaBella նաւով, որ կը գործէ մրցանակակիր գետային զբօսանաւային ընկերութիւն AmaWaterways-ի կողմէ:

- Օրական շրջապտոյտներ
- Հայկական տեսարժան վայրեր
- Համեղ ճաշեր
- Խանդավառ գիշերային ժամեր եւ շատ անւիլն:

Վայելեցէք եւրոպան՝ հայկական յատուկ մթնոլորտով



Book your All-Inclusive room today  
by scanning the QR Code  
or by visiting [cruise.homenetmen.org](http://cruise.homenetmen.org)



AmaWaterways